7079

3Кп2
Z-22

1928

13 SEP 2013

ՀԿՊՀ
Հ-22

20 JAN 2006

14 NOV 2009

Т3084

ՀԱՄ. Կ. Կ.-Ի XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ ՑԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հանրային գրադարան
Ա. Ս. Պուշկինի անվան
Պետական Գրադարան

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1928

Գրառեալվար 551 բ. հ. 683 Տիրաժ 3000
Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—141

ԲԱՆԱՁԵՎ

ՀԱՄԿԿԿ-Ի ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված է միաձայն)

Համամիութենական Կոմունիստական Կուսակցության (բոլշևիկների) XV համագումարն ամբողջովին հավանություն է տալիս ԿԿՆարոնական Կոմիտեի քաղաքական և կազմակերպչական գծին։

Համագումարը հավատում է, որ ԿԿ-ի ճիշտ քաղաքականությունը հաշվետու շրջանի դժվարագույն պայմաններում ապահովել է ԽՍՀՄ-ի միջազգային զորության ամրապնդումը, մեր յերկրի դերի բարձրացումը՝ որպես միջազգային խաղաղության մի գործոնի, ԽՍՀՄ-ի հեղինակության աճումը՝ որպես համաշխարհային հեղափոխական շարժման մի ոջախի։

Շնորհիվ ԿԿ-ի քաղաքականության յերկրի ներսում ձեռք են բերվել լուրջ հաջողություններ՝ սոցիալիստական շինարարության ասպարիզում, անշեղ կերպով բարձրացել են արտադրողական ուժերը քաղաքում և գյուղում՝ ամբողջ եկոնոմիկայի մեջ սոցիալիստական ելեմենտների աճող գերակշռության զուգընթաց, բարձրացել է բանվորական և գյուղացիական մասսաների նյութական և կուլտուրական մակարդակը, ամրացել և Խորհրդային հանրապետու-

թյունների դաշինքը՝ լենինյան ազգային քաղաքականության ճիշտ կիրառման հիմքի վրա, ամրացել և բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, աճել է պրոլետարիատը և նրա կուսակցության ղեկավարող ազդեցությունը, և ընդհանուր առմամբ սիստեմատիկորեն ամրացել են պրոլետարական դիկտատուրայի դիրքերը։

Ներկայումս պրոլետարական պետությունը, բանվոր դասակարգը և կուսակցությունն իրենց աշխատանքն սկսում են շատ բանով փոխված ահագին միջազգային և ներքին պայմաններում։

Միջազգային ընդգծվում հաշվեառու շրջանը հայտնաբերել է մի շարք նոր մոմենտներ և ընդհանրացնող գծեր, որոնք նշվել են ինչպես իմպերիալիզմի լագերում, նույնպես և կապիտալիստական յերկիրների ու Խորհրդային Միության փոխհարաբերությունների ասպարիզում։ Դեռ ևս XIV համագումարի կողմից նշված կապիտալիզմի մասնակի կայունացումը ներկայումս բավականաչափ վորոշակի դրսևորել և իր եյությունը և ծավալել է իր մեջ թաղնված հակասությունները։ Չնայած կապիտալիստական պետությունների վորոշ չափով առաջ ընթանալուն, չնայած համաշխարհային արտադրության նախապատերազմյան սահմանից անցնելուն, չնայած համաշխարհային ապրանքաշրջանառության վերականգնման և դրամական վալյուտաների ամրապնդման, չնայած միջազգային հարաբերությունների վորոշ չափի «նորմալացման», — չնայած տեխնիկայի մասնակի առաջադիմության և կապիտալիստական ռացիոնալացման, — չնայած այս բոլորին և վորոշ չափով սրա հիման վրա, հա-

մաշխարհային կապիտալիստական սիստեմի անհաշտելի հակասությունները **սրվել են։** Սրվել է կապիտալիստական յերկիրների զարգացման անհամաչափությունը և սրա հիման վրա՝ պայքարը՝ տնտեսական քաղաքական ազդեցության շրջանների համար և աշխարհը վերաբաժանելու համար։ Սրվել է միջազգային **պայքարը** սպառման և հում նյութերի **շուկաների համար,** կապիտալի դործադրության շրջանների համար այն պատճառով, վոր իմպերիալիստական տընտեսության արտադրական հնարավորությունները չեն համապատասխանում կապիտալիզմի թշվառացրած ազգաբնակության մասսաների վճարունակ պահանջին, վոր կապիտալիստական տնտեսության արտադրական ապարատը խրոնիկական թերաբեռնվածության մեջ է, վոր կապիտալիստական տնտեսության համաշխարհային սիստեմից դուրս է ընկել այնպիսի մի հսկայական շուկա, վորպիսին ԽՍՀՄ-ն է։

Սրվել են հակասությունները՝ մի կողմից յեվրոպական-ամերիկական յերկիրների—մետրոպոլիտների և մյուս կողմից՝ կախումն ունեցող յերկիրների և դաղութների միջև, ընդ վորում կախումն ունեցող յերկիրների պայքարը իմպերիալիստական ճնշման դեմ սկսել է զինված ապստամբությունների, ազգային պատերազմների, դաղութային հեղափոխությունների ձև ընդունել (Չինաստան, Ինդոնեզիա)։

Սրվել է դասակարգերի պայքարը իմպերիալիստական յերկիրներում, վորտեղ ի պատասխան այն արշավանքի, վոր գործում է կապիտալը բանվոր դասակարգի և նրա կենցաղային մակարդակի վրա, ի պատասխան ուժեղացյա բանվորական որվա վերաց-

ման և շահագործիչ ռացիոնալացման, ի պատասխան բուրժուական ղեկավարող խմբակցությունների ռեակցիոն-միլիտարիստական քաղաքականության,—բանվոր դասակարգը սկսում է անցնել հակահարձակման։

Սրվել են հակասությունները բուրժուական ուղղման յերկիրների և ԽՍՀՄ-ի միջև, վորը իր հաղթական զարգացմամբ պայթեցնում է համաշխարհային կապիտալիստական տիրապետության հիմքերը։ Այս սրվածության ամենագլխավոր ֆակտորներն են հանդիսանում—սոցիալիստական տարրերի աճումը ԽՍՀՄ-ում, պրոլետարական դիկտատուրայի վերասերման վրա դրած բուրժուազիայի հույսերի կործանումը՝ ԽՍՀՄ-ի միջազգային-հեղափոխական աղդեցության ուժեղացման զուգընթաց։

Այսպիսով կապիտալիստական զարգացումն ընդհանուր առմամբ ձգտումն է հայտնաբերել կրճատելու խաղաղության «հանգստության» պատմական ժամկետները, մոտեցնելու մեծ իմպերիալիստական պատերազմների նոր շրջանը և արագացնելու համաշխարհային կոնֆլիկտների հեղափոխական լուծումը։ ԽՍՀՄ-ի համար սա նշանակում է, ամենից առաջ, հարաբերությունների հետզհետե աճող լարվածություն բուրժուական պետությունների հետ, վորոնց քաղաքականությունը,— չնայելով պետությունների և բուրժուազիայի առանձին խմբակների միջև յեղող մի շարք ներքին հակասություններին, վորպիսիներն առաջի դժվարացնում են կապիտալիստական միասնական ճակատ ստեղծելու գործը,— հետզհետե ավելի և ավելի թշնամական է դառնում ԽՍՀՄ-ի վերաբերմամբ և իմպերիալիստական արտաքին հարձակման անմիջական վտանգ է ստեղծում։

Միջազգային կյանքի զարգացման անցյալ յերկու տարվա շրջանը մի ավելորդ անգամ պարզ կերպով ցույց տվեց, թե ինչպես ապարդյուն յեղան պետություններին կապիտալիստական հողի վրա «միացնելու» և «հաշտեցնելու» այն ջանքերը, վոր թափում ելին բուրժուական և պացիֆիստական քաղաքագետները։ Ազգերի Լիգայի անվերջ միավորման կոնֆերենցիաներն ու հանձնաժողովները, այսպես կոչված «Բանկիրների մանիֆեստը» (հայտարարություն ընդդեմ հետվերջալյան մաքսային վակխանալիայի), միջազգային տնտեսական կոնֆերենցիան, «Պան-Եվրոպայի» պացիֆիստական ծրագիրը, ժնևի «զինաթափության» յեռյակ պետությունների կոնֆերենցիան,— մերկացրին իրենց վորպես բանվոր դասակարգին խաբելու նոր միջոցներ։ «Միավորման» փորձերը լոկ քողարկում ելին կուլիսների յետևում թաղնված իմպերիալիստների կատաղի մրցությունը, գաղութային ավարը բաժանելու պայքարը, սպառազինման անընդհատ արշավը, գաղտնի և բացահայտ ռազմական բլոկների կնքումը, վորոնք անմիջականորեն նախապատրաստում ելին նոր իմպերիալիստական պատերազմներ։ Իսկ իրականում աճում ելին ֆաշիստական, շովինիստական, միլիտարիստական տենդենցները։ Լոնդոնյան կոնսերվատիվ կաբինետի ղեկավարությամբ միջազգային բուրժուազիայի ռեակցիոն տարրերը սկսեցին ԽՍՀՄ-ի վրա զինված հարձակում գործելու հող պատրաստել, փաթաթելով ԽՍՀՄ-ին պրովոկացիաների մի ամբողջ կծիկով (հարձակումներ ԽՍՀՄ-ի

արտաքսմանական ներկայացուցչությունների վրա, Խորհրդային դիպլոմատիական աշխատավորների ընպանություն)։

Համկկ (բ)-ի XV համագումարը հավաստում է, որ կապիտալիստական պետությունների քաղաքականության մեջ ֆաշիստական և ագրեսիվ-միլիտարիստական տենդենցների այդ աճման և սրման հետ միաժամանակ ստեղծվում են ժամանակակից միջազգային և ներքին հակասությունները հեղափոխականորեն լուծելու նախադրյալներ։ Անգլիական ընդհանուր և ածխային գործադուլները 1926 թ., Ինդոնեզիայի ապստամբությունը, մեծ չինական հեղափոխությունը, բանվորների հեղափոխական յուլիսը «կայունացած» Ավստրիայում (հուլիս, 1927 թ.), ԽՍՀՄ-ում պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման հետ զուգընթաց, — ցայտուն կերպով մերկացնում են համաշխարհային կապիտալիստական ռեժիմի հակասությունն ու փթածությունը։ Ներկա վայրկյանիս Եվրոպայում հեղափոխական ալիքի կարճատև տեղատվությանը (1923 թ. գերմանական հեղափոխության պարտությունից հետո) նորից հաջորդում է նրա մակընթացությունը, պրոլետարիատի մարտական ակտիվության բարձրացմամբ, բանվորական շարժման շերտավորմամբ և ձախացմամբ, կոմինտերնի և նրա սեկցիաների շարքերի խտացմամբ, մասսայական հեղափոխական շարժման աճմամբ (Սակկոյի և Վանցետտիի սպանության հետ կապված ցույցերը, մի շարք կոմկուսակցությունների ընտրական հաջողությունները, ոտարերկրյա բանվորների հոկտեմբերյան պատգամավորությունները ԽՍՀՄ-ում և այլն)։

Ուշադրության առնելով ժամակակից միջազգային իրադրությունը բնորոշող վերոհիշյալ հանգամանքները, XV համագումարը հանձնարարում է ԿԿ-ին հետագա աշխատանքը տանել.—

ա) Հիմք ընդունելով խաղաղության անշեղ քաղաքականության հետագա կիրառումը,—մի քաղաքականություն, որը ոչ այլ ինչ է, բայց եթե իմպերիալիստական պատերազմների վտանգի դեմ պայքարելու քաղաքականություն և որը, միևնույն ժամանակ, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հետագա աճման հիմնական պայմանն է.

բ) Հիմք ընդունելով ԽՍՀՄ-ի բանվորների յեղբայրական կապերի ամրապնդումը արևմտյան Եվրոպական պետությունների բանվորների և ճնշված յերկիրների աշխատավոր մասսաների հետ.

գ) Հիմք ընդունելով տնտեսական կապերի ապագա սիստեմատիկ զարգացումը կապիտալիստական յերկիրների հետ, ապահովելով Խորհրդային Միության տնտեսական ինքնուրույնության աճումը.

դ) Հիմք ընդունելով յերկրի պաշտպանունակության, բանվորա-գյուղացիական կարմիր բանակի և ողային ու ծովային նավատորմիղների ուժի և ռազմունակության անընդհատ ամրացումը.

ե) Հիմք ընդունելով անհրաժեշտ տնտեսական ռեզերվների կուտակումը (հացամթերքների, ապրանքի, վալյուտայի, պաշտպանության հատուկ ռեզերվների).

XV Համագումարը կատարելապես նաև ճիշտ և հավանում կենտրոնական Կոմիտեյի գիծը և աշխատանքը ներքին քաղաքականության յեվ տնտեսական շինարարության բնագավառում։

ԿԿ-ի Լենինյան քաղաքականության հիման վրա ապահովված և յեղել պետական արդյունաբերության ծավալումը և զերազանցումը մինչպատերազմյան մակարդակին, ընդ վորում աճել է զբաղված բանվորների թիվը, աշխատանքի արտադրողականությունը և աշխատավարձը։ Պետական խոշոր արդյունաբերության ծավալմանը զուգընթաց անընդհատ աճել է արտադրության միջոցների արտադրությունը։ Արդյունաբերությամբ մինչպատերազմյան չափերին զերազանցելը, սոցիալիստական ինդուստրիայի հիմնական կապիտալի վերանորոգումը, տեխնիկական-արտադրական արմատական վերանորոգությունների սկզբնավորությունը, էլեկտրիֆիկացիայի նշանակալից հաջողությունները, արդյունաբերական արտադրության ամբողջ նոր ճյուղերի ստեղծումը և զարգացումը (մեքենաշինարարություն, դաղդյահադործություն, ավտոշինություն, տուրբինաշինություն, ավիոարդյունաբերություն, քիմիական ինդուստրիա), նոր գործարանների, խոշոր կառուցվածքների և սարքավորումների կառուցումը և հին գործարանների հիմովին վերասարքավորումը,— սրանք են կուսակցության և բանվոր դասակարգի եյական նվաճումները, վորոնք կատարվել են մեր յերկրի ինդուստրացման ճանապարհին և վորոնք ազդարարված են յեղել Կուսակցական 14-րդ համագումարի կողմից։

Պետական սոցիալիստական արդյունաբերության հետ միաժամանակ աճել է նաև պրոլետարական պետության տնտեսական հրամայող բարձունքների մյուս ամբողջ սիստեմի նշանակությունը, այն է՝ տրանսպորտի, պետական բյուջեյի, բանկա-վարկային ցանցի

և առևտրական ապպարատի նշանակությունը։ Պետական-կոոպերատիվ հատվածը վճռողական դիրքեր է գրավել շուկայում, սիստեմատիկաբար զուրս քշելով մասնավոր առևտրական կապիտալը։ Զնայելով կապիտալիստական ողակման կիսաբոյկոտային մանյովրներին, մեր արտաքին առևտրական կապերը նույնպես ընդարձակվեցին՝ արտաքին առևտրի մոնոպոլիայի հիման վրա, ընդ վորում առևտրական հաշվեկշռում մեզ հաջողվեց ակտիվ մնացորդ ստանալ։ Հիմնվելով սոցիալիստական քաղաքի առաջնորդող դերի ամրապնդման վրա, կուսակցության վերջին շրջանի տնտեսական քաղաքականությունը նպաստել է գյուղատնտեսության հետագա զարգացմանը, ցանքսի տարածության մեծացմանը, ապրանքայնության աճմանը, ավելի բարձր տեխնիկայի և ագրիկուլտուրայի տարրերի արմատացմանը, այն է՝ բազմացանքության, տեխնիքական մշակույթների, գյուղատնտեսական արտադրության մեքենացման արմատացմանը։ Նշանակալից չափով ամրապնդվել է տնտեսական կապը քաղաքի և գյուղի միջև։ Գյուղատնտեսության աճման հետ միասին ավելացավ գյուղին քաղաքի արդյունաբերական ապրանքներ մատակարարելը, ավելացավ գյուղատնտեսական կոոպերացիայի նշանակությունը։

Սակայն Համկկ-ի 15-րդ համագումարն անհրաժեշտ է համարում նշել, վոր վերոհիշյալ նվաճումները բավական չեն, և վոր գյուղատնտեսության մակարդակը դեռ ևս մնում է ծայր աստիճան ցածր։ Սրա հետևանքով համագումարը Կենտրոնական Կոմիտեին հանձնարարում է գյուղատնտեսության վերելքն ուժե-

ղացնելու համար ձեռք առնել գործնական միջոցներ, ըստ վորում համագումարը հիմնական միջոցներից մեկն է համարում հողաշինարարական աշխատանքների շուտափույթ կիրառումը։ Անհրաժեշտ է դնել վորպես առաջնակարգ խնդիր, վոր գյուղացիությանն էլ ավելի կոպերացման յենթարկելով, գյուղացիության բաժան-բաժան տնտեսությունները հետզհետե անցնեն խոշոր արտադրության ռելսների վրա (հողի կոլեկտիվ մշակում՝ հողագործության ինտենսիֆիկացիայի և մեքենացման հիմունքով), ամեն կերպ ուժանդակելով և խրախուսելով հանրայնացված գյուղատնտեսական աշխատանքի ծիլերը։ Գյուղատնտեսության վերելքի այդպիսի ուժեղացումն անհրաժեշտ է և՛ գյուղացիության հիմնական մասսայի բարեկեցությունը բարձրացնելու շահի տեսակետից, և խոշոր արդյունաբերության համար շուկան (սպառման և՛ հում նյութերի) մեծացնելու շահի տեսակետից, և՛ դյուղը տեխնիքական վերակառուցման ու սոցիալիստական կոոպերացման յենթարկելու շահի տեսակետից, հենց դրանով հաղթահարելով գյուղի կապիտալիստական տարրերին։

Տնտեսական զարգացման անցյալ շրջանը, անտարակույս մի քայլ է դեպի սոցիալիզմ։ Սակայն այս ընդհանուր հաջողությունը չի նշանակում, թե վերացված են այն դժվարությունները, վտանգներն ու հակասությունները, վորոնք կապված են մեր աճման առանձնահատկությունների, յերկրի տեխնիքական-տնտեսական հետամնացության և պրոլետարիատին թշնամի սոցիալ-դասակարգային ուժերի կողմից կատարվող ճնշման հետ, վորոնց բոլորի դեմ սիստեմատիկ պայքար մղելով միայն կարելի է հասնել այդ

դժվարությունների հաղթահարմանը և հետագա առաջընթացմանը դեպի սոցիալիզմ։ Կարևորագույն դժվարությունների թվին անհրաժեշտ է դասել հետևյալները,—ներմուծման և արտածման պրոբլեմը, վորը ծայր աստիճան բարդացել է շնորհիվ միջազգային դրության սրման, հիմնական կապիտալների պրոբլեմը, արդյունաբերական գների ինքնարժեքի և իջեցման պրոբլեմը, զործադրության և ապրանքային գերարտադրության պրոբլեմը, մի կողմից ապրանքային սովի և մյուս կողմից քաղաքների գյուղատնտեսական արտադրանքների հայթայթման բարելավման պրոբլեմը, վերջապես ռեզերվների (ապրանքային և վալյուտային) կուտակման պրոբլեմը։ Համագումարն ամբողջ կուսակցության ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր այս պրոբլեմների հաջող լուծման համար պահանջվում է՝ կուսակցության բովանդակ ուժերի հատուկ լարվածություն, նրա կամքի միասնություն և կուսակցական դերեկտիվների կատարման համերաշխություն։

15-րդ համագումարը համարում է, վոր իրենց բացարձակ մասսայով ամված (թեև շատ ավելի փոքր չափով, քան տնտեսության սոցիալիստական հատվածը)—մասնավոր կապիտալիստական տնտեսության տարրերի վերաբերմամբ պետք է և կարելի չէ կիրառել տնտեսական ել ավելի վճռական դիրքահանման քաղաքականություն։ Կապիտալիստական տարրերի վրա արվելիք հետագա տնտեսական հարձակման համար անհրաժեշտ նախադրյալները ստեղծված են տնտեսական զարգացման նախընթաց հաջողությունների միջոցով՝ ընդարձակված ապրանքաշրջանառությամբ և ռազմա-կոմունիստական միացորդների լուծարքով

(14-րդ կուսակցությունի վորոշումը), վորը կենտրոնացրել է պրոլետարական պետության ձեռքին համապատասխան նյութական-տնտեսական միջոցներ, վորպիսիներն անհրաժեշտ են՝ թե հաջողությամբ հաղթահարելու գյուղի կապիտալիստական տարրերին (միջակի հետ միասին արշավանք կուլակի դեմ, ել ավելի մեծ ոգնություն չքավորներին, չքավորների և միջակների կոոպերացիայի ամրացում, արտադրական կոոպերացում) և թե հետագայում ևս դիրքահանելու քաղաքի մասնավոր կապիտալին։

XV համագումարը հանձնարարում է կենտրոնական կոմիտեին առանց տեմպը թուլացնելու շարունակել սոցիալիստական **ինդուստրացման** քաղաքականությունը, վորն արդեն ավել է իր առաջին դրական արդյունքները։ Բոլոր միջոցներով ամրապնդելով ԽՍՀՄ-ի ինդուստրիալ ուժը, կուսակցությունը պետք է շարունակի՝ ոգտագործելով առկա ֆինանսա-տնտեսական միջոցները, ծավալել արտադրական միջոցների արտադրությունը, մասնավորապես մետաղագործությունը և մեքենաշինարարությունը, յերկրի ներսում զարգացնել արդյունաբերական հում նյութերի արտադրությունը (բամբակ, բուրդ, կաշի և այլն), շարունակել ինքնարժեքի իջեցման քաղաքականությունը և անշեղ կերպով անց կացնել արդյունաբերական բանվածքների գների իջեցման քաղաքականությունը։

Մեր յերկրի ինդուստրացման գլխավոր խրաղրումը պետք է ուղեկցվի դեպի արտադրության և կառավարման **ռացիոնալացումը** բռնած վճռական կուրսով։ Արդյունաբերության ռացիոնալացումը պե-

տական և կոոպերատիվ ապպարատի բարելավման ու պարզեցման հետ միասին առաջիկա շրջանի համար հանգուցյավոր խնդիր է հանդիսանում։ Պրոլետարիատի կյանքի նյութական-կուլտուրական մակարդակը բարձրացնելու շահի տեսակետից, նույնպես և արտադրական պրոցեսի ռացիոնալացման տեսակետից կուսակցությունն աղդարարեց բանվոր դասակարգի կենսական մակարդակի հետագա բարձրացման հետ միասին, դեպի յոթժամյա բանվորական որի աստիճանական անցումը, վորով և ռացիոնալացման մեր մեթոդները սկզբունքորեն տարբերվում են կապիտալիզմի մեթոդներից, վորտեղ ռացիոնալացումը, ընդհակառակը, ուղեկցվում է մասսաների կենսական մակարդակի իջեցմամբ և բանվորական որվա յերկարացմամբ։ Կոչ անելով բոլոր կուսակցական, տնտեսական, արհեստակցական և խորհրդային կազմակերպություններին ամբողջ յեռանդով ձեռնարկել սոցիալիստական ռացիոնալացման այս կարևորագույն խնդրի լուծմանը, ՀԿԿ (բ)-ի XV համագումարը համարում է, վոր միայն նրա հիման վրա հնարավոր է յերկրի ինդուստրացման իրագործումը (վորը ներփակում է իր մեջ նաև գյուղատնտեսության ինդուստրացումը), գործազրկության և պրոլետարական պետության բյուրոկրատիկ խեղաթյուրումների վերացումը, բանվորա-գյուղացիական մասսաների կարիքների ավելի մեծ բավարարումը, այդ մասսաների հետագա կուլտուրական աճումը, սոցիալիստական շինարարության գլխավոր դժվարությունների հաղթահարումը։

Չնայած սոցիալիստական տնտեսական կորիզի առաջնորդող և հետզհետե աճող դերին, ԽՍՀՄ-ի եկո-

նոմիկայի արտադրողական ուժերի վերելքն անխուսափելիորեն ուղեկցվում է դասակարգային հակասությունների մասնակի աճումով։ Քաղաքի և գյուղի մասնավոր կապիտալիստական խավերը, որոնք կապվում են խորհրդային և տնտեսական ապպարատի մի քանի բյուրոկրատիկ տարրերի հետ, ձգտում են ուժեղացնել իրենց հակազդեցությունը բանվոր դասակարգի առաջխաղացման վրա, փորձում են պրոլետարական դիկտատուրային թշնամական ազդեցություն գործել ծառայողների և ինտելլիգենցիայի որոշ խավերի վրա, տնայնագործների ու արհեստավորների և գյուղացիների ու բանվորների հետամնաց խավերի վրա։ Այս ազդեցությունը յերևան է գալիս նաև կուլտուրական-քաղաքական և իդեոլոգիական ընդավառում (սմենովեխովյան քարոզը, կուլակային «գյուղացիական միության» լոզունգը, շովինիզմը, անտիսեմիտիզմը, բուրժուական-դեմոկրատական «ազատությունների» քարոզը և նրա հետ կապված յերկու կուսակցություն ունենալու մանր-բուրժուական ոպպոզիցիոն լոզունգը և այլն)։ Այս թշնամական ազդեցությանը և կապիտալիստական տարրերի աճող ակտիվությանը բանվոր դասակարգը՝ ՀԿԿ (բ)-ի գլխավորությամբ հակադրել է պրոլետարական դիկտատուրայի ռեժիմի ամրացումը, պրոլետարական մասսաների ակտիվության, ինքնագործունեության և կուլտուրականության ել ավելի վերելքը (խորհուրդների աշխուժացումը, պրոֆմիութենական դեմոկրատիայի և կոոպերատիվ հասարակայնության ծավալումը, պրոլետարիատի գաղափարական ազդեցության ուժեղացումը գյուղի վրա, կուլտուր-կրթական աշխատանքը մասսաների մեջ և այլն), նույնպես և պրոլետարիատի գաղափարական ազդեցության ուժեղացումը խորհրդային ինտելլիգենցիայի լայն խավերի վրա։ Նշելով մի շարք անժիտելի հաջողություններ պայքարի այս ճակատի վրա, համագումարն անհրաժեշտ է համարում հետագայում ամեն կերպ մոբիլիզացիայի յենթարկել պրոլետարական մասսաներին և առանձնապես ուժեղացնել պայքարը գաղափարական-կուլտուրական ճակատի վրա։

Հաստատելով, որ XIV համագումարից հետո մեր **կուսակցությունն** աճել է քանակով և որակով, լիովին հավանություն տալով ԿԿ-ի այն քաղաքականությանը, որ նա վարել է կուսակցության սոցիալական կազմը կանոնավորելու խնդրում, և նշելով խորհրդային իշխանության տասնամյակի առթիվ բանվորներին կուսակցության շարքերը հրավիրող «հոկտեմբերյան կոչի» հաջողությունը, Համկկ (բ)-ի XV համագումարը հայտարարում է, որ Համկկ (բ)-ի ուղղությունը ավող դերը, որպես դիկտատուրայի հիմնական լծակի, կարելի կլինի պահպանել, ապահովել և ուժեղացնել միայն կուսակցության շարքերի լենինյան միաձուլվածության և պրոլետարական դիսցիպլինայի հիմքի վրա, համընթաց—կուսակցության անդամների գաղափարական-տեսական և կուլտուրական մակարդակի անընդհատ բարձրացման, ներկուսակցական դեմոկրատիայի հետևողական կիրառման և կուսակցության սոցիալական կազմի սիստեմատիկ բարելավման՝ կուսակցության մեջ շարունակաբար արտադրությունից բանվորներ և գյուղացիներ ներգրավելու միջոցով։

Կուսակցությունն անհրաժեշտ համարում, հատ-

1003
13087

Գրադարան Библиотека

կապես կուսակցության առջև դրված խնդիրների բարդությունը նկատի ունենալով և կուսակցության ամբողջ մասսայի ակտիվությունը բարձրացնելու նպատակով, զարգացնել ներկուսակցական դեմոկրատիան, զարգացնել գործնական քննադատությունը ինչպես խորհրդային ապպարատի մեջ այնպես և ինքնին կուսակցության մեջ, ուժեղացնել պայքարը կարյերիզմի դեմ և այլն, և այլն։ Սրա հետ միաժամանակ համագումարը հրավիրում է կուսակցության ուշադրությունն այն բանի վրա, որ անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքը կոմյերիտմիության մեջ, բանվոր յերիտասարդության շրջանում ընդհանրապես և կանանց շրջանում։

XV համագումարը հավաստում է, որ չնայելով կուսակցության XIII համագումարի նախազգուշացման, որով նշված եր Տրոցկու խմբակի «մանր-բուրժուական թեքումը», և չնայելով, որ Համամիութենական XV կուսկոնֆերենցիան նախազգուշացրել եր Տրոցկու ղեկավարության ներքո միացած ոպպոզիցիայի «սոցիալ-դեմոկրատական թեքման» մասին, այնուամենայնիվ ոպպոզիցիան ամսե-ամիս շարունակում եր խորացնել իր ռեվիզիոնիստական սխալները, պայքար մղել Համկկ (բ)-ի և Լենինի ուսմունքի դեմ՝ կազմելով իր առանձին կուսակցությունը, դուրս հանելով պայքարը Համկկ (բ)-ի շրջանակներից, և կոչ անելով յերկրի վոչ-պրոլետարական տարրերին պրոլետարիատի դիկտատուրայի ռեժիմի դեմ։ Միջազգային կոմունիզմի ռահնեգատների հետ (Մասլով, Սուվարին և ընկ.) բացարձակորեն միացած ոպպոզիցիայի իդեոլոգիան ներկայումս դասավորվել և

ձևավորվել է վորպես մենշեվիզմ իր յուրահատուկ տրոցկիստական ֆորմուլիրովկայով։ Խորհրդային պետական ձեռնարկությունների սոցիալիստական բնույթը ժխտելը, սեր յերկրում սոցիալիստական հաղթելը ժխտելը, գյուղացիության հիմնական մասսաների հետ բանվոր դասակարգի դաշինքի քաղաքականությունը ժխտելը, բոլշևիզմի կազմակերպչական սկզբունքները ժխտելը (Համկկ (բ)-ի և Կոմինտերնի պառակտման քաղաքականությունը), — տրամաբանորեն հասցրին տրոցկիստական-մենշևիկական ոպպոզիցիային մինչև ԽՍՀՄ-ին զրպարտելուն, վորպես վերասերված տերմիդորական պետություն, մինչև պրոլետարական դիկտատուրայի գոյությունը ԽՍՀՄ-ում ժխտելուն և նրա դեմ հակահեղափոխական պայքար մղելուն։ Արդյունքն այն յեղավ, որ ոպպոզիցիան գաղափարականորեն խզեց իր կապերը լենինիզմի հետ, վերասերվեց մենշևիկական խմբակի, միջազգային ու ներքին բուրժուազիայի հանդեպ կապիտուլյացիայի ուղին բռնեց և օբյեկտիվորեն դարձավ յերբորդ ուժի ձեռքին մի զենք՝ ընդդեմ պրոլետարական դիկտատուրայի ռեժիմի։ Հենց այդ պատճառով էլ ոպպոզիցիան այնքան խորտակիչ հակահարված ստացավ ինչպես կուսակցության անդամների վողջ մասսայի կողմից, նույնպես և, ընդհանրապես, բանվոր դասակարգի կողմից։

ԿԿ-ի և ԿՎՀ-ի՝ այն բոլոր վորոշումները, վորոնք ուղղված են տրոցկիստների կազմալուծիչ աշխատանքի դեմ, XV համագումարը հավաստում է բացարձակորեն ճիշտ ու մինիմալ չափով անհրաժեշտ և հանձնարարում է ԿԿ-ին այսուհետև ևս ինչ էլ վոր լինի ա-

պահովել կուսակցության լենինյան միասնությունը։

Նկատի ունենալով, որ կուսակցության և ոպպոզիցիայի միջև տիրող տակտիկական տարաձայնությունները փոխվել են ծրագրային տարաձայնություններին, որ տրոցկիստական ոպպոզիցիան օբյեկտիվորեն դարձել է հակախորհրդային պայքարի մի գործոն, XV համագումարը հայտարարում է, որ տրոցկիստական ոպպոզիցիային պականելը և նրա հայացքների պրոպագանդան անհամատեղելի են բալշևիկական կուսակցության շարքերում մնալու հետ։

Համկկ (բ)-ի անունից, Սովետական Միության բանվոր դասակարգի անունից XV համագումարը պրոլետարական լիակատար համոզմունք ունի մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի մեջ՝ չնայած բոլոր դժվարություններին։ Պրոլետարիատի դիկտատուրայի տասնամյա գոյության համաշխարհային-պատմական փորձը փայլուն կերպով հաստատում է լենինյան ճանապարհի ճշտությունը, որով ընթանում է Համկկ (բ)-ն։ XV համագումարը առաջարկում է ԿԿ-ին անշեղ կերպով առաջ ընթանալ այդ ուղիով, միաձուլել սոցիալիստական շինարարության դրոշի տակ մեր յերկրի աշխատավորության հետզհետե ավելի մեծ մասսաներ, ամրացնել համերաշխության յեղբայրական կապերը բոլոր յերկիրների պրոլետարիատի հետ, դարձնել ԽՍՀՄ-ը տարեց-տարի ավելի ու ավելի հզոր առաջապահ համաշխարհային սոցիալիստական հեղափոխության։

ԲԱՆԱՁԵՎ

ԿՎՀ — ԲԳՏ-Ի ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(Ընդունված է միաձայն)

XV համագումարն ամբողջապես և լիովին հավանություն է տալիս ԿՎՀ-ԲԳՏ-ի աշխատանքին ինչպես կուսակցության միասնականության ու կարգապահության պահպանման ասպարիզում, այնպես էլ պետական ապպարատի բարելավման և նրա բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ մղվող պայքարի ասպարիզում։

Համագումարը գոհունակությամբ նշում է, որ կուսակցության մեջ տրոցկիստական-ժինովիևական ոպպոզիցիայի չլսված պառակտիչ գործունեության ամենադժվարին պայմաններում ԿՎՀ-ն հաջողությամբ կատարել է Իլյիչի ավանդները՝ բալշևիկական կուսակցության միասնականության պահպանման մասին։ Համագումարն ամբողջապես հավանություն է տալիս այն միջոցներին, որ ձեռք է առել կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովը միասնականությունը խախտողների, կուսակցության դեմ ֆրակցիոն պայքար կազմակերպողների և կուսակցության կարգապահությունը խախտողների դեմ։

Համախմբելով կուսակցության շարքերը և ավելացնելով նրա ընդունակությունը սոցիալիստական

շինարարության հիմնական խնդիրների կատարման ասպարիզում, ԿՎՀ-ը հաջողությամբ պայքարել է կուսակցության մեջ գտնված քայքայիչ տարրերի դեմ և պատասխանատու պոստեր գրաված անհատ կոմունիստների կողմից իրենց դիրքն ի չարը գործ դնելու դեմ։

Համագումարն ամբողջապես հավանություն է տալիս ԿՎՀ-ի ներկուսակցական դեմոկրատիայի խախտման և կուսակցության մեջ գոյություն ունեցող բյուրոկրատիզմի տարրերի դեմ մղվող պայքարի ասպարիզում կատարած աշխատանքին և առաջարկում է ԿՎՀ-ին՝ այդ աշխատանքը հետագայում ուժեղացնել։

Համագումարը գոհունակությամբ նշում է, որ ԿՎՀ-ԲԳՏ-ը հաշվետու ժամանակաշրջանում սրել են ամբողջ կուսակցության ուշադրությունը և յուրաքանչյուր պայքար են մղել բյուրոկրատիզմի դեմ, պետապպարատի բարելավման և ուժանացման համար, դեպի այդ գործը գրավելով լայն բանվորական և գյուղացիական մասսաներ։ Սրան համապատասխան ձեռք են բերել առաջին հաջողությունները բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ մղվող պայքարի և պետապպարատի բարելավման ասպարեզներում. ձեռք են բերել հաջողություններ խնայողության ռեժիմի կենսագործման խնդրում՝ ապպարատի վորոշ չափի պարզեցում և կրճատում, հաշվետվության կրճատում, վոչարտադրական ծախքերի կրճատում և այլն։

Համարելով, վոր ձեռք բերված հաջողությունները և ԲԳՏ-ի աշխատանքի փորձն ապացուցում են, վոր կուսակցությունը և պրոլետարիատը մեր ապպարատի

բյուրոկրատիկ խեղաթյուրումների դեմ մղվող պայքարի հետագա ծավալման հսկայական հնարավորություններ ունեն, համագումարն առաջարկում է ԿՎՀ-ԲԳՏ-ին ապպարատի բարելավման հետագա աշխատանքի ընթացքում ղեկավարվել հետևյալ ցուցումներով.—

1. Կառուցելով իր աշխատանքը լայն բանվորական և առհասարակ աշխատավորական մասսաներին խորհրդային ապպարատի բարելավման գործի մեջ ներգրավելու և բյուրոկրատիզմի դեմ պայքարելու հիմքի վրա, Բանգյուղտեսչությունը պետք է դառնա խորհրդային ապպարատի աշխատանքն ստուգող բանվորներին և գյուղացիներին կազմակերպողը։

Աշխատելով բանվորների և գյուղացիների գոյություն ունեցող կազմակերպությունների, այն է՝ արտարհմիութենական կազմակերպությունների, արտադրողական խորհրդակցությունների, ձեռնարկությունների վերահսկիչ հանձնաժողովների, ֆաբկոմների, տեղկոմների, տնտեսական հանձնաժողովների, խորհուրդների սեկցիաների, բանվորուհիների ու գեղջկուհիների պատգամավորական ժողովների և այլ նման կազմակերպությունների միջոցով և նրանց հետ,— Բանգյուղտեսչությունը պետք է ներգրավի բանվորներին իր աշխատանքի բոլոր ստադիաների մեջ, առաջարկելով աշխատանքի արդյունքները գործարանային ընդհանուր ժողովների, բջիջների գռնբաց ժողովների, ակմբային ժողովների և այլոց քննարկմանը։

Կուսակցության և կառավարության դիրեկտիվների կատարման ստուգումը՝ խորհրդային մարմինների կողմից, Բանգյուղտեսչությունը պետք է կատարի գործարանային ժողովներում ընտրված բանվոր-

ների ուժերով, վորոնց Բանգյուղտեսչության աշխատակիցները միայն պետք է գլխավորեն և հրահանգեն։ Ընդ վորում՝ Բանգյուղտեսչությունը յելակետ պետք է ունենա լենինյան ցուցումները —

«Եթե մենք ուզում ենք կռվել բյուրոկրատիզմի դեմ, ապա դեպի այդ գործը պետք է գրավենք ստորին խավերին»... (Լենին, հատոր XVIII, մաս 2, յեր. 189)։

«Ել ուրիշ ինչ կերպ կարելի յե վերջ տալ բյուրոկրատիզմին, յեթե վոչ՝ բանվորներին ու գյուղացիներին ներգրավելով»... (նույն տեղում յեր. 188)։

2. Պետական ապպարատի վերանորոգման ամենագլխավոր մեթոդներից մեկը խորհուրդների աշխուժացումը և ամրապնդումն է։ Այս ասպարիզում ձեռք բերված հաջողությունները նշում են սկզբնավորումը մի ամբողջ պատմական շրջանի, վորի խնդիրն է՝ ստիճանաբար դեպի պետություն կառավարելու աշխատանքը գրավել ամբողջ աշխատավոր բնակչությանը և դրանով իսկ լիովին հաղթահարել բյուրոկրատիզմը։ ԿՎՀ-ԲԳՏ-ի խնդիրն է՝ սիստեմատիկաբար ստուգել խորհուրդների աշխատանքի ընթացքը, վորի նպատակը պետք է լինի հայտաբերել և վերացնել դրա իրականացման արգելքները։

Ուժեղացնել բանվորական, խորհրդային և կուսակցական դեմոկրատիայի իրագործման ստուգման աշխատանքը, անշեղորեն վերացնելով նրա կենսագործման բոլոր արգելքները և այդպիսիները խախտելու համար պատժել հանցավորներին։ Անհրաժեշտ է ստուգել՝ իսկական ընտրականության իրագործումը,

պատգամավորներին յետ կանչելու իրավունքը, բանվորներին և բանվորուհիներին դեպի կառավարման աշխատանք առաջ քաշելը, բանվորների և գյուղացիների ստորին հասարակական կազմակերպությունների կողմից՝ խորհրդային որենքներով իրենց վերապահված իրավունքները և պարտականությունները կենսագործելու աստիճանը և այլն։ Դրա հետ միասին հատուկ ուշադրություն դարձնել բանվորներին և բանվորուհիներին դեպի վարչական, արդյունաբերական, առևտրական և կոոպերատիվ ապպարատն առաջ քաշելու վրա, անշեղորեն հալածելով բյուրոկրատիկ վերաբերմունքը դեպի այդ ներգրավումը և ձեռք բերելով նոր հաջողություններ խորհրդային ապպարատի իսկական բանվորականացման գործում։

3. Անշեղորեն ուսումնասիրել և յերևան հանել պրոլետարիատին թշնամի ուժերի կողմից պետական ապպարատի այս կամ այն ողակի վրա գործ դրած ճնշման հետևանքով առաջացած խեղաթյուրումները, մանավանդ ապպարատի այն մասերում և կառավարման այն ճյուղերում, վորտեղ այդ խեղաթյուրումները կարող են յերևան գալ առանձին ուժով (վարկ, աշխատանքի պաշտպանություն, կոոպերացիա և այլն)։

4. Անշեղորեն շարունակել աշխատել ադմինիստրատիվ, առևտրական, կոոպերատիվ և արդյունաբերական ապպարատի եժանացման ու պարզեցման վրա, խնայողության ռեժիմի համար. մասնավորապես ավարտել կառավարման և տնտեսության առանց բացառության բոլոր ողակներում ադմինիստրատիվ-վարչական ծախսերի կրճատումը 1927-28 թվին վոչ-պա-

կաս 20 տոկոսից, խստիվ ստուգելով այդ բանի փաստական կենսագործումը։

5. Դնել ռացիոնալացման ընթացքի ստուգման աշխատանքը, ինչպես վարչական ապպարատի, այնպես և արդյունաբերական և առևտրական ապպարատի սապարիզում։ Հատուկ ուշադրություն դարձնել արդյունաբերության ասպարիզում կատարվող ռացիոնալացման աշխատանքի ընթացքի ստուգման վրա, արտադրանքի ինքնարժեքն իրապես իջեցնելու, աշխատանքի պայմանները բարելավելու, բանվորների և մասնագետների աշխատանքը ճիշտ ոգտագործելու, յեվրոպական և ամերիկական տեխնիկայի լավագույն որինակները յուրացնելու և արդեն իսկ մեզնում ձեռք բերված նվաճումները և աշխատանքի բարելավված ձևերն ամենուրեք ոգտագործելու տեսակետից։

6. Ստուգել, թե մեզնում գիտական-տեխնիկական ուժերը վորքան ճիշտ են ոգտագործվում, քանի վոր ռացիոնալացման հաջող կիրառումը հնարավոր է միայն՝ ինչպես մեր, նույնպես և ոտարերկրյա գիտական-տեխնիկական ուժերը լայն կերպով գրավելու և ճիշտ ոգտագործելու դեպքում։

7. Հետագայում զարգացնել ու խորացնել հիմնական վերանորոգման և նոր շինարարության ստուգման աշխատանքը, նպատակ դնելով եժանացնել շինարարությունը, անպայման վոչնչացնել ավելորդ վերադիր ծախսերը և յուրացնել կապիտալիստական յերկիրների առաջադեմ տեխնիկայի նվաճումները։

8. Շարունակել հաշվառում ստեղծելու և կարգ, եժան, պարզորոշ և պլանայնացման ու կառավարման խնդիրներին ճշտությամբ համապատասխանող հաշվեվություն մշակելու աշխատանքը։ Մասնավորապես, ընդլայնել գրասենյակային և հաշվային գործի մեքենայացման փորձը։

9. Ել ավելի ուժեղացնել պայքարն ընդդեմ մեր կազմակերպչական պակասությունների, քաշքշուկների, անտնտեսավարության և անփութության, ու ձգտել ավելի ևս ուժեղացնելու կատարողների պատասխանատվությունը, ճիշտ կերպով վորոշելու ֆունկցիաների սահմանները, վերացնելու զուգահեռականությունը։

10. Անշեղորեն, ամեն միջոցով հետևել՝ թեկուզ մինչև դատի յենթարկելը, պետական ապպարատի այն ծառայողներին (ինչպես կոմունիստներին, նույնպես և անկուսակցականներին), վորոնք հանցավոր են այցելուներին արհամարհական, ոդայական, մեծամիտ վերաբերմունք ցույց տալու մեջ։ Վարչական, առևտրական, կոոպերատիվ և արդյունաբերական ապպարատի վորևե ծառայողի կողմից բանվորներին կամ գյուղացուն անուշադիր վերաբերմունք ցույց տալը պետք է համարել վորպես սարոտաժ և հանցագործություն՝ ընդդեմ Խորհրդային իշխանության։

11. Ուժեղացնել՝ համաձայն Լենինի և լենինյան կուսակցության բազմիցս արած ցուցումների՝ խորհրդային որենքների կատարման ստուգումը, բանվորների և գյուղացիների ոգնությամբ ապահովելով կառավարության բոլոր կարևորագույն ձեռնարկումների կենսագործման մասսայական ստուգումը և սահմանելով ամենաիրական պատասխանատվություն այն անհատների ու որգանների համար, վորոնք հանցավոր են կառավարության որենքների կասեցման և չկատարման

մեջ։ Պետական ապպարատի և հասարակական կազմակերպությունների մեջ աշխատող կոմմունիստների միջոցով ուժեղացնել կուսակցության դիրեկտիվների ստուգումը։ Մասնավորապես, կազմակերպել ազգային քաղաքականության պրակտիկայի սիստեմատիկ ստուգումն ազգային հանրապետությունների և շրջանների մեջ։

12. Մշակել և ապահովել ամենախիստ պատիժների միջոցների կենսագործումը՝ պետական ապպարատի ինչպես կուսակցական նույնպես և անկուսակցական այն աշխատավորների նկատմամբ, վորոնք փորձում են կուսակցության կողմից բյուրոկրատական խեղաթյուրումների վերացման համար կատարած աշխատանքին հակադրել իրենց ավանդավորությունը, անշարժությունը, չինովնիկական ինքնաբավականությունը, վորպիսի հանգամանքները հաճախ թագցնում են պրոլետարիատին թշնամի դասակարգերի ճնշումը։ Պետական ապպարատի բարելավման այս պայքարում պետք է ամենաակտիվ մասնակցություն ունենան այն բոլոր կոմմունիստները, վորոնք աշխատում են վարչական, տնտեսական և առևտրական ապպարատում։ Խորհրդային հիմնարկությունների կուսակցական և կոմսերիամիութենական բջիջներն իրենց ամենորյա աշխատանքով պետք է ոգնեն ԿՎՀ-ԲԳՏ-ի որգաններին պետապպարատը վերափոխելու նրանց բարդ ու ծանր աշխատանքի մեջ՝ լայն մասսաների հետ այդ պետապպարատի կապն ամրապնդելու վոգով։

13. Համագումարը հանձնարարում է կուսակցական բոլոր կազմակերպություններին մամուլի աշխատանքը բարելավելու միջոցներ ձեռք առնել, լայն կիրառելով ոգտագործելով բանգյուղթղթակցական շարժումը բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ մղվող պայքարի բնագավառում։ Մամուլի մերկացնող աշխատանքը պետք է տարվի մեր պետապպարատի ցավոտ կողմերը լիովին հրապարակ բերելու և անխնա քննադատության «ուշք չդարձնելով անձնավորություններին» սկզբունքով (Լենին)։

14. Համագումարը հանձնարարում է կուսակցական բոլոր կազմակերպություններին ապահովել դատական որգանների բարելավումը և ընդլայնումը՝ բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի ասպարիզում, անշեղորեն ժողովրդական դատարանի առջև պատասխանատվության կանչելով վարչական և տնտեսական ապպարատի այն աշխատավորներին, վորոնք մեղավոր են հանցավոր անտնտեսավարության, անթույլատրելի և գործին չինովնիկական վերաբերմունք ցույց տալու մեջ, ընդսմին չթույլատրել դատավճիռների վոչ մի թեթևացում կամ դատական քննության կարճում՝ շնորհիվ բանվորա-գյուղացիական ծագման, նախկին արժանիքների, կապակցությունների և այլն։ Պետական ապպարատի աշխատավորների վորևե տեսակի արտոնությունների վերացման նպատակով՝ վերացնել դիսցիպլինար դատարանը, սահմանելով պետական ապպարատի աշխատավորների յենթադատությունն ընդհանուր քաղաքացիական դատարանին։

15. Համարելով արհեստակցական միությունները բյուրոկրատիզմի դեմ մղվող մասսայական պայքարի ամենագլխավոր կազմակերպումներից մեկը, համագումարը ՀԱՄ-ԱՄԿՄ-ի և բոլոր արհեստակցական միությունների ֆրակցիաների ուշադրությունն և

հրավիրում այն բանի վրա, որ անհրաժեշտ է ամեն կերպ ուժեղացնել արհմիությունների մասնակցությունը խորհրդային ապպարատի բյուրոկրատիկ խեղաթյուրումների դեմ մղվող ամբողջ պայքարի գործում։ Արհեստակցական միությունները պետք է կազմակերպեն Բանվորա-գյուղացիական Տեսչությանը մասսայական աջակցություն ցույց տալու գործը այն պայքարի ասպարիզում, որ մղում է Բանգյուղտեսչությունը պետական ապպարատը բարելավելու համար։ Արհեստակցական միությունների այդ աշխատանքը պետք է հիմնվի արհեստակցական կազմակերպությունների ամբողջ սիստեմի ինքնագործունեության և ակտիվության վրա սկսած գործարանային ատելիեներից։ Մասնավորապես արհեստակցական միությունները պետք է իրենց վրա վերցնեն յերևան հանել բյուրոկրատիզմի ամեն մի կոնկրետ դեպք, հալածել բյուրոկրատիզմի յերևան հանված ամեն մի դեպք՝ պրոլետարական պետության որենքներով նախատեսված բոլոր միջոցներով՝ սկսած հասարակական դատապարտությունից մինչև հանցավորին անմիջականորեն կամ ԲԴՏ-ի որգանների միջոցով դատի յենթարկելը։

16. Համագումարը հատուկ ուշադրություն է դարձնում խորհրդային և առևտրական ծառայողների միության աշխատանքի բարելավման անհրաժեշտության վրա, որպիսի միության հիմնական պարտականություններից մեկն է՝ պետական ապպարատի աշխատավորների հասարակական դաստիարակությունը, բյուրոկրատիզմի դեմ պայքարելու վրդով, սոցիալիստական շինարարության գործին նվիրվածության վրդով։

17. Միմիայն եժան և պարզ աշխատող ապպարատ ստեղծելը մեզ բավական չէ։ Կառավարման տեխնիկան պետք է կատուցել այնպես, որպեսզի այդ տեխնիկայի բարելավումը նպաստի սոցիալիստական շինարարության մեր առջև կանգնած հիմնական խնդիրների լուծմանը և պետության լիակատար մահացման պայմանների նախապատրաստմանը։ Կառավարման տեխնիկայի բարելավումը վոչ միայն ապպարատի եժանացման միջոց է, այլ և կառավարման գործը պարզացնելու յեղանակ, որը չի կարող չդյուրացնել յերկրի կառավարման գործի մեջ աշխատավորության միլիոնավոր մասսաների նոր խավեր ներգրավելու խնդիրը։ Կառավարման տեխնիկայի բարելավման խնդրի և պրոլետարական դեմոկրատիայի զարգացման խնդրի միջև յեղած այս կապն ու կախումը համագումարն առանձնապես ընդգծում է, քանի որ կառավարման տեխնիկայի բարելավման պայքարը, մեր ապպարատի կողմից կուլտուրայի նվաճումները յուրացնելու պայքարը վոչ միայն չպետք է տանի այդ ապպարատը դեպի ինքնապարփակում և կտրի նրան մասսաներից, այլ, ընդհակառակը, պետք է ստեղծի այնպիսի պայմաններ, որոնք նպաստեն և դյուրացնեն ներգրավելու ժողովրդական մասսաներին կառավարման գործի մեջ։

18. Ապպոզիցիան բյուրոկրատիզմի հարցում ցած է գլորվում դեպի մեր պետության պրոլետարական բնույթի ժխտումը, դեպի մեր ապպարատի, նրա հիվանդությունների և նրա բուժման միջոցների լենինյան ձևով դրված հարցի ժխտումը։ Ապպոզիցիայի արմատական սխալն այն է, որ նա չի հասկանում, թե մեր պետական ապպարատը, — չնայած նրա բոլոր թերություն-

ներին և բյուրոկրատական խեղաթյուրումներին. չընայած ներկայիս նրա չափազանց թանկությանը,— բուրժուազիական դեմոկրատիայի համեմատությամբ կառավարման բարձրագույն տիպ է, որպես կառավարման ապպարատ նոր տիրապետող դասակարգի — բանվոր դասակարգի, որն իրականացնում է իր իշխանությունը գյուղացիության հետ դաշնակցած։ Այս հարցում՝ ինչպես և ուրիշ հարցերում, ռպպոզիցիան զգաստում և տարբերություն տեսնելուց մեղնում և բուրժուազիայի մոտ լեղած դրության մեջ։ Ռպպոզիցիան չի տեսնում այն բանը, որ բուրժուական հասարակության մեջ բյուրոկրատիզմը, որպես կապիտալիստների դասակարգային գերիշխանության արտահայտություն, կարող է լիկվիդացիայի լենթարկվել միայն բուրժուազիայի պետական ապպարատի վոչնչացման միջոցով, իսկ մեր պետության մեջ բյուրոկրատիզմը,— որը մասնակի կերպով է միայն վերածնվել և գոյություն ունի հակառակ խորհրդային պետության դասակարգային բնույթի՝ որպես տնտեսական և կուլտուրական յետամնացության հետևանք,— կարող է լիկվիդացիայի լենթարկվել մեր պետությունն ամրապնդելու և կուլտուրայի ամենաբարձր աստիճանին հասցնելու միջոցով։

19. Համագումարը համարում է, որ պրոլետարական դեմոկրատիայի զարգացումը, խորհուրդների աշխուժացումը ու ամրապնդումը՝ պետության կառավարման գործի մեջ բանվորների և գյուղացիների նոր հարյուր հազարյակներ ներգրավելը, վերջապես բանվորների և ընդհանրապես աշխատավոր մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացումը բյուրոկրա-

տիզմի դեմ մղվող մեր պայքարի հաջողության և մեր պետական ապպարատի բարելավման հիմնական պայմանն է։ Սրան համապատասխան՝ բյուրոկրատիզմի դեմ կռվելու գլխավոր մեթոդը մեր յերկրում այն միջոցների հետագա կենսագործումն է, որոնք մատնանշված են կուսակցական ծրագրի մեջ.—

«Բյուրոկրատիզմի դեմ ամենավճռական պայքար մղելով՝ այդ չարիքը լիովին հաղթահարելու համար ՌԿԿ-ը պաշտպանում է հետևյալ միջոցները.—

1. Անպայման առաջ քաշել խորհրդի յուրաքանչյուր անդամի պետության կառավարման գործում վորոշ աշխատանք կատարելու համար։

2. Այդ աշխատանքների հաջորդական հերթափոխությունն՝ այն հաշվով, որպեսզի նրանք աստիճանաբար ընդգրկեն կառավարման բոլոր ճյուղերը։

3. Աստիճանաբար ներս քաշել ընդհանրապես ամբողջ աշխատավոր ընակչությունը պետության կառավարման աշխատանքի մեջ։

Այս բոլոր միջոցների լրիվ և բազմակողմանի կիրառումը, հանդիսանալով որպես հետագա քայլն այն ճանապարհի, որի վրա վոտք դրեց Փարիզի Կոմունան, և կառավարման ֆունկցիաների պարզումը՝ աշխատավորների կուլտուրական մակարդակի բարձրացման պայմաններում,— տանում են դեպի պետական իշխանության վոչնչացումը»։

(«ՌԿԿ-ի VIII համագումարը բանաձևերի մեջ», յերես 174—175)։

ԲԱՆԱՁԵՎ

ԳՅՈՒՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ընդունված է միաձայն)

I — ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1. Պրոլետարիատի դիկտատուրան ԽՍՀՄ-ում արմատապես փոխում է գյուղատնտեսության պայմանները, հետևաբար և՝ նրա զարգացման ընթացքը, ստեղծելով սկզբունքորեն հողային հարաբերությունների զարգացման մի այլ տեսակը, դասակարգային վերախմբավորումների մի այլ տիպը գյուղում և մի այլ ուղղությունը տնտեսական ձևերի զարգացման մեջ։ Պրոլետարիատի դիկտատուրան, հողի, խոշոր արդյունաբերության և բանկերի ազգայնացումը վոչ միայն հնարավորություն են տալիս գյուղատնտեսությունն ևս տանելու իրենց յեռևից, այլև բոլորովին այլ փոխհարաբերություններ են ստեղծում բաղաքի յեվ գյուղի միջև, վոչ այնպիսի փոխհարաբերություններ, ինչպիսիները գոյություն ունեն կապիտալիստական հասարակության մեջ։ Կապիտալիստական հասարակության արդյունաբերությունն իր զարգացման մեջ հենվում և ներքին այնպիսի մի շուկայի ստեղծման վրա, վորի համար միջակ գյուղացիության հիմնական մասսան պետք է քայքայվի, ուրիշ խոսքով՝ այդ հիմնական խումբը, պրոլետարիզացիայի յենթարկվելու հետևանքով, պետք է տարանկվի (распад)։ Ընդհակառակը, պրոլետարական դիկտատուրայի պայմաններում ներքին շուկայի կազմավորման պրոցեսն արմատապես տարբերվում է այն դրությունից, վոր մենք տեսնում ենք կապիտալիզմի պայմաններում։ Այստեղ շուկան աճում է վոչ թե շնորհիվ գյուղացիության հիմնական մասսայի աղքատացման և պրոլետարիզացիայի, այլ շնորհիվ միջակ և չքավոր գյուղացիության բարեկեցության բարձրացման։ Դրանով ել արդեն այլ բնույթ է տրվում գյուղացիության ներսում յեղած դասակարգային բեկումներին և վերախմբավորություններին։

2. Բովանդակ ժողովրդատնտեսական զարգացման **ղեկավար սկզբունքներն** են հանդիսանում տնտեսական իշխող բարձունքները, առաջին հերթին—**խոշոր արդյունաբերությունը**։ Սակայն՝ յեթե **կապիտալիստական** հասարակության մեջ այդ իշխող բարձունքների ղեկավար դերը բնորոշվում է նրանց **կապիտալիստական** բովանդակությամբ, ապա պրոլետարական պետության ազգայնացված արդյունաբերությունը, վարկային ինստիտուտները, տրանսպորտը, կոոպերացիան և պետառևտուրը գյուղի **սոցիալիստական** վերակազմության հզորագույն լծակներն են հանդիսանում։ Ընտեսության **պլանային ղեկավարությունը**, վորպիսին հնարավոր է դառնում շնորհիվ արտադրության միջոցների հասարակական կենտրոնացման և շրջանառության պրոցեսին ծառայող ապպարատների, պետական իշխա-

նության ձեռքին անխուսափելիորեն վիթխարի հնարավորություններ և ստեղծում գյուղի եկոնոմիկայի վրա վերակազմող ներգործություն անելու համար։

Մանր արտադրողների **կոոպերացիան**, վոր կապիտալիզմի պայմաններում անխուսափելիորեն իր արմատներն և գցում **կապիտալիստական** տնտեսական մարմինների սիստեմի մեջ,—պրոլետարական դիկտատուրայի պայմաններում փոխանցող մի հսկա մեխանիզմի յե վերածվում, վորն ոժանդակում և **սոցիալիստական** ինդուստրիային՝ իր յետևից տանել գյուղը—պարզ ապրանքաարտադրողներին (Պրոլետարական պետության ամբողջ **բաղաքականությունը**)—ֆինանսական, հարկային, վարկային, տնտեսական քաղաքականությունն ընդհանրապես (նպատակ ունի բոլոր մասնչելի միջոցներով ոժանդակելու գյուղի չքավոր և միջակ խավերին և, նայած պայմաններին, տարբեր ձևերով սահմանափակելու գյուղատնտեսական բուրժուազիայի շահագործական ձգտումները։)

3. Զարգացման այս ընդհանուր նախադրյալները պրոլետարական դիկտատուրայի շրջանում բնավ միևնույն չափով չեն արտահայտվել հեղափոխության տարբեր փուլերում։ **Նոր տնտեսական բաղաքականության անմիջականորեն հաջորդող** շրջանում, վորպիսին խոշոր պետական ինդուստրիայի և գյուղական մանր արտադրողի միջև զուգորդության ուղիղ հիմունքներ ստանձնել,—պրոլետարիատի իշխող բարձունքները ծայր աստիճան թուլացած եյին, մասնավոր կապիտալն իր նախնական կուտակման շրջանն եր ապրում և առաջ եր խաղում, մանր-բուրժուական տարերքը մանր-սեփականատիրական խոշորագույն սպառնալիքն եյին հան-

դիսանում սոցիալիստական շինարարության գործի համար, վորովհետև գյուղացին սոցիալիստական շինարարության հաջողությունների և սոցիալիստական ինդուստրիայի ու գյուղացիական տնտեսության միջև ուղիղ ապրանքափոխանակության կազմակերպման դեռ ևս փորձնական վոչ մի ապացույց չուներ։

Հաջորդ շրջանում, հիմք ունենալով արտադրողական ուժերի զարգացումն ընդհանրապես և սոցիալիստական արդյունաբերության ուժերի զարգացումն առաջին հերթին, տեղի ունեցավ ուժերի և տնտեսական ձևերի վերախմբավորումն՝ սոցիալիստական տարրերի դերն ուժեղացնելու ուղղությամբ։ Իշխող բարձունքների (պետարդյունաբերություն, բանկերը, տրանսպորտը, պետառևտուրը և այլն) դերը թեպետ և բարձրացավ, սակայն՝ վոչ այնքան դեռևս, վոր ի վիճակի լինի կայուն դաշինքի հասնել միջակի հետ և վճռականորեն տանել նրան իր յետևից, անջատելով նրան կուլակից։ 14-րդ կոնգրեսը և 14-րդ կոնֆերանսը մի շարք միջոցների ձեռնարկեցին, վորպեսզի կարողանան կայուն դաշինք ստեղծել միջակի հետ։

4. **Երրորդ** շրջանը բնորոշվում է սոցիալիստական տնտեսական հատվածի հետագա աճմամբ և ուժերի առավել վերախմբավորմամբ՝ սոցիալիստական շինարարության հենարաններին առավել ևս ուժ տալու ուղղությամբ։

Տնտեսության ասպարիզում՝ հետագա տնտեսական վերելքը հիմք ունենալով պետական արդյունաբերությունը վոչ միայն գերազանցում է մինչպատերազմյան մակարդակը, այլ և անցնում է արդեն իր

վերասարքավորման և զարգացման՝ նոր տեխնիկական հիմունքներով։ Շրջանառության ասպարիզում պետական առևտուրը և կոոպերացիան դուրս են գցել մասնավորին մի շարք կարևորագույն ընագավառներից դուրս՝ նվաճելով շուկայի գրեթե մենաշնորհ տերերը։ Դասակարգերի տեսակետից կուսակցությունը կարող է հավասարել պրոլետարիատի աճումը և ամրապնդումը, հիմք ունենալով 14-րդ կուսակոնֆերանսի և 14-րդ կուսահամագումարի վորոշումները, պրոլետարիատի և միջակ գյուղացու դաշինքը և ուժեղացված առաջխաղացումն ընդդեմ մասնավոր կապիտալի։ Այդ պրոցեսը միաժամանակ զուգորդվել է գյուղատնտեսական արտադրանքի բարձրացման, չքավորական խմբակների կազմակերպման, բատրակների կազմակերպվածության բարձրացման, խորհուրդների աշխուժացման և նոր պայմաններում աճող հակագրոհի հետ ընդդեմ կուլակ տարրերի։ Այս նախադրյալները հնարավորություն են ընտեղծում կոոպերացիայի կողմից գյուղի չքավոր և միջակ խավերն առավել ընդարձակ կերպով ընդգրկելու համար, գյուղացիական տնտեսության նկատմամբ պլանային ներգործությունը հետագայում ուժեղացնելու և ավելի վճռականորեն կուլակի դեմ առաջխաղալու համար, հիմք ընդունելով այն նվաճումները, վոր ձեռք են բերված պրոլետարիատի յեվ գյուղի չքավոր տարրերի դաշինքը միջակների հետ ամրացնելու ասպարիզում։

II. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

5. ԽՍՀՄ-ի զարգացման համար դեպի սոցիալիզմ առաջնորդող հիմնական նախադրյալներից մեկն է գյուղի արտադրողական ուժերի բարձրացումը յեվ գյուղացիական յոյց մասսաների բարեկեցության աճումն է։ Սոցիալիստական քաղաքը կարող է միայն այս ճանապարհով իր յուրաքանչյուր գյուղը ընդգրկել ամեն կերպ աջակցելով անհատական-սեփականատիրական տնտեսությունից, վորը դեռևս միաժամանակ բազա կլինի ամբողջ գյուղատնտեսության համար, աստիճանաբար դեպի նրա կոլեկտիվ ձևերն անցնելուն։

Բնելով գյուղատնտեսական արտադրության պրոցեսը, անհրաժեշտ է հանգել հետևյալ հիմնական յեզրակացություններին։ Անհրաժեշտ է, նախ և առաջ, հավասարել գյուղատնտեսության ընդհանուր բարձրացումը նրա բոլոր ճյուղերում՝ և՛ հացահատիկի տնտեսության, և՛ տեխնիկական կուլտուրաների, և՛ անասնաբուծության ասպարեզներում։

Գյուղատնտեսությունն ընդհանուր առմամբ գերազանցել է արդեն ընդհանուր արտադրանքի մինչպատերազմյան մակարդակը, թեպետ և հացահատիկի նկատմամբ դեռևս այդ մակարդակին չի հասել։ Անկասկածելի յե գյուղատնտեսության տեխնիկայի և կուլտուրայի աճումը (մեքենա, տրակտոր, ելեքտրիֆիկացիա, բազմադաշտություն, նրա միացումն անասնաբուծության հետ, լավորակ սերմացուներ, պարարտանյութեր և այլն)։ Սրան զուգընթաց պետք է նշել, վոր բերրիության մակարդակը դեռ շատ ցածր է, մանավանդ՝ Յեվրոպայի ու Ամերիկայի համեմատությամբ, վոր գյուղատնտեսության զարգացման տեմպը դեռ շատ թույլ է, վոր դեռևս շատ զորեղ է նրա կախումը բնական գործոններից (չորություն և նրանից կախված անբերրիություններ և այլն), վոր գյուղատնտեսության

ապրանքայնությունը դեռես շատ նվազ է այն խնդիր-
ների համեմատությամբ, որոնք ներկայում դրված են
գյուղատնտեսության առջև սոցիալիստական ժողովուրդ-
դա-տնտեսական պլանի տեսակետից։ Առանձնապես
սուր կերպով է անդրադառնում այդ հանգամանքը գյու-
ղատնտեսական արտադրման վոչ-բավարարաչափ հնա-
բավորությունների վրա, որպիսին ներմուծման այն
գործառնությունների հիմքն է հանդիսանում, որոնք
անհրաժեշտ են յերկրի արագաթափ ինդուստրացման
և հենց նույն գյուղատնտեսության հետագա բարձրաց-
ման համար։

6. Ներկայիս գյուղի ~~խոշորագույն~~ բացասական
կողմն է հանդիսանում այսպես կոչված «հողային դեր-
բնակչությունը», այսինքն՝ «ավելորդ» բանվորական
ձեռքերի մեծ քանակությունը, որպիսին իր համար
աշխատանքային և վոչ մի գործադրություն չի գտնում
գյուղում և մեծապես ավելացնում է քաղաքի գործա-
զուրկների թիվը։ Այդ բացասական կողմն արտահայ-
տում է գյուղի պատմական անցյալը և մեր յերկրի ընդ-
հանուր յետամնացության մնացորդները։

Գյուղատնտեսության զարգացման թափը զսպող
մեկ ուրիշ բացասական կողմը պետք է համարել հո-
ղային տարածությունների խոշոր մասի անբարեշինու-
թյունը և ինվենտարի պակասությունը գյուղացիության
սակավազոր խավերի մոտ, որի հետևանքով և գյու-
ղացիության այդ խավերը բավականաչափ չեն կարո-
ղանում ոգտագործել գյուղատնտեսական այդ հողային
տարածությունները։ Վերջապես, ներկայիս կացության
բացասական կողմն է քաղաքի և գյուղի փոխհարաբե-
րություններին վերաբերող, այսպես կոչված, «մկրա-

տի» խնդիրը, այսինքն՝ մեկ կողմից՝ արդյունաբերու-
թյան և մյուս կողմից՝ գյուղատնտեսության արդյունք-
ների գների միջև յեղած տարբերությունը։

Այս բացասական կողմերը կարող են վերացվել
միայն մի շարք տնտեսական խոշոր թափ ունեցող մի-
ջոցների կիրառության հետևանքով։ Գյուղի գերբեռ-
նակչությունը պիտի հաղթահարվի, որին զուգ թաց
պետք է զարգանա արդյունաբերությունը, պետք է ա-
ճի գյուղատնտեսության ինտենսիֆիկացիան և զարգա-
նան խոշոր աշխատանք պահանջող կուլտուրաները,
որպիսի հանգամանքն իր հերթին կապված է գյու-
ղատնտեսության ինդուստրացման, գյուղատնտեսա-
կան սկզբնական արդյունքները մշակող նոր գործա-
բանների կառուցման, այլ և տեղական տնայնագործա-
կան արհեստների զարգացման և, ~~վերջապես~~, ուղիղ
գաղթականական քաղաքականություն վարելու հետ։

Հողային տարածությունների անբարեշինությունը
հողաշինարարական աշխատանքների ուժեղացումն է պահանջում, առանց որի արագաթափ վե-
րելքը և գյուղացիական տնտեսության սոցիալիստա-
կան վերաշինությունն անհնարին են և որի սահ-
մաններից դուրս յերկյուղ կա, որ հողագործու-
թյունը կարող է կենտրոնանալ կուլակ տարրերի
ձեռքին։ Ինվենտարի պակասությունը սակավոր գյու-
ղացիների մոտ կարող է հաղթահարվել այդ խավերի
կոոպերացման թափն ուժեղացնելով և նրանց՝ յեր-
կարատև վարկի հիմունքով՝ ինվենտար հատկացնելու
միջոցով։ Վերջապես, «մկրատը» պիտի սիստեմատի-
կորեն հաղթահարվի արդյունաբերական գների իջեց-
ման քաղաքականությամբ, հիմք ընդունելով արդյու-

նաբերական արտադրանքի ռացիոնալացումը և ինքնարժեքի իջեցումը։

7. Սոցիալ դասակարգային տեսակետից քննության առնվող գյուղատնտեսության զարգացման պրոցեսը տվյալ մոմենտին ընորոշվում է կապիտալիստական և սոցիալիստական տենդենցների պայքարով։ Այդ պայքարն իր առանձնահատուկ կնիքն է դնում գյուղի դիֆերենցիացիայի պրոցեսի վրա, վորպիսին մեր պայմաններում խիստ վորոշակի առանձնահատկություններ ունի։ Այդ շերտավորման առանձնահատկությունները բղխում են հասարակական փոփոխված պայմաններից։ Այդ առանձնահատկություններն արտահայտվում են նրանով, վոր հակառակ զարգացման կապիտալիստական տիպին, վորի պայմաններում ծայրահեղ խմբերի՝ չքավոր և կուլակ տարրերի աճման զուգընթաց բուլանում են («լվացվում են») միջակները,— մեզ մոտ ընդհակառակը, ակներև է միջակների խմբերի ուժեղացումը, ընդվորում առայժմ դեռևս կուլակների խումբն ևս աճում է միջակ խավերի ունևոր մասի հաշվին, իսկ չքավորների խումբը նվազում է, վորի մեկ մասը պրոլետարանում է, իսկ մյուսն, ավելի խոշոր մասն ատիճանաբար միջակների խմբին է մոտենում։ Այս առանձնահատկություններն անխուսափելիորեն բղխում են տնտեսական զարգացման հակասություններից պրոլետարիատի դիկտատուրայի այժմյան պայմաններում։ Գյուղատնտեսության ասպարիզում պարզ ապրանք արտադրողը կապիտալիստական հասարակության մեջ կարող է վերածվել կամ մանր կապիտալիստի, կամ պրոլետարի։ Զարգացման մի յերրորդ ճանապարհ նա չու-

նի։ Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում այդ ճանապարհը գոյություն ունի, ինչ չափով վոր մասսայական կոոպերացիայի միջոցով (ինչպես փոխանակության, այնպես ել առավել ևս արտադրության ասպարիզում) մանր ապրանք արտադրողը կարող է սիստեմատիկորեն ներգրավվել սոցիալիստական շինարարության ընդհանուր պրոցեսի մեջ։

Մյուս կողմից, հենց պրոլետարական դիկտատուրայի որով, զարգացման առանձնահատուկ պայմանների շնորհիվ է, վոր չքավոր տարրերը հարաճուն հնարավորություն ունին փոխադրվելու գյուղացիության միջին խմբերը։ Այսպիսով շերտավորման պրոցեսների յուրորինակությունը հիմք է դառնում միջակ խավերի հետագա աճման համար, վորպիսի հանգամանքը մի ավելորդ անգամ ևս հաստատում է ընկ. Լենինի այն հայտնի դրույթը՝ թե միջակը «հողագործության կենտրոնական դեմքն» է։ Ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ի տարբեր ռայոններում տեղի ունեցող շերտավորման պրոցեսի տեմպին, ապա այդպիսին շատ այլազան է և կախված է մի շարք տեղային պայմաններից, վորպիսի հանգամանքը, սակայն, չի փոխում պրոցեսի ընդհանուր բնույթն ու ուղղությունը։

8. Ոպպոզիցիայի կոպտագույն սխալն է, վոր նա գյուղացիական տնտեսության զարգացման որինաչափությունը կապիտալիզմի ժամանակ ամբողջապես և լիովին մեքենայորեն տեղափոխում է պրոլետարիատի դիկտատուրայի դարաշրջանը, այդպիսով, քաշ գալով բուրժուական գաղափարախոսների յետևից։ Ոպպոզիցիան չի տեսնում, վոր գյուղի զարգացման ուղիները վորոշվում են քաղաքի զարգացմամբ և վոր կապիտա-

լիստական տարրերին գյուղում մեր պայմաններում հակադրվում է վոչ միայն բատրակը, չքավորը և միջակը, այլ և պրոլետարիատի դիկտատուրայի ամբողջ սիստեմն իր զորեղ տնտեսական իշխող բարձունքներով (առաջին հերթին սոցիալիստական ինդուստրիայով), կոոպերացիայով և գյուղատնտեսության վրա պլանային ներգործություն ունեցող այլ լծակներով։ Հենց դրանով ոպպոզիցիան վերաքննում է մարքսիզմի և լենինիզմի կարևորագույն տեսական դրույթները քաղաքի և գյուղի խոշոր և մանր արտադրության, ինդուստրիայի և գյուղատնտեսության հարաբերակցության մասին և վերադառնում է պրոլետարական պետության «տերմիդորական» վերասերման բուրժուական ռևիզիոնիստական տեսություններին ու այն կարծիքին, թե մանր կապիտալիստ կուլակն ու մասնավոր կապիտալը հաղթանակելու յեն սոցիալիստական պրոլետարիատի խոշոր և կենտրոնացած, ինչպես վոչ մի այլ տեղ մեքենայական ինդուստրիային, ինդուստրիա, վոր տանում է իր յետևից ամբողջ ժողովրդական տնտեսությունը։

9. Հարկավոր է հավատալ պրոլետարական պետության պլանային-կարգավորիչ գերի խոշոր ուժեղացումը վերջերս գյուղատնտեսության մեջ և սոցիալիստական տարրերի ազդեցության աճումը հենց գյուղում։ Այս ազդակները պայքարի զենք են կուլակի դեմ, վորը մի շարք դիրքեր է գրավել գյուղի եկոնոմիկայի մեջ,— և մասնավոր կապիտալի դեմ, վորը դուրս է քշվում տնտեսական կյանքի կարևորագույն շրջանակներից, սակայն աճում է բացարձակ առումով, արմատ է բռնել գյուղի կյանքում, մանավանդ տնա-

նագործական և արհեստավորական արդյունաբերության միջոցով, և վորը ձգտում է շաղկապ դառնալ քաղաքի և գյուղի միջև։

Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի բնագավառում պետ. մարմինները և կոոպերացիան գրավել են վճռական, իսկ վաճառքի մի շարք կարևորագույն ճյուղերում (հաց, բամբակ, շաքարի ճակնդեղ և այլն) տիրապետող և գրեթե մենաշնորհ դրություն։ Այս դրությունն արտահայտվում է նրանով՝ 1) վոր գյուղատնտեսության արտադրանքների ճնշող քանակությունը պատրաստվում է առանց մասնավոր կապիտալի միջնորդության, վորը դուրս է քշվել իր նախկին դիրքերից. 2) վոր այս արտադրանքն իրացվում է այնպիսի գներով, վոր սահմանում են պետության մարմինները, և վորոշում են ամբողջ ժողովրդական տնտեսության տեսակետից՝ ամբողջովին առած, ըստ վորում վերջին ժամանակներս հաջողվել է հացի գների կայունություն ձեռք բերել՝ գարնանը և աշնանը. 3), վոր գների բացորոշ քաղաքականության շնորհիվ, պետությունը հնարավորություն ունի ազդելու նույն ինքն գյուղատնտեսական արտադրության պայմանների վրա, արտադրական ուժերի առավելագույն նպատակահարմար վերադասավորման ուղղությամբ։ Անհրաժեշտ է ընդսմին նշել, վոր մի քանի ճյուղերում (մսի մթերման, կանեփի և այլն) մասնավոր կապիտալը դեռ բավականաչափ զգալի տեղ է գրավում։

10. Փաստակարարման բնագավառում մենք արդեն մի այնպիսի դրության ենք հասնում, յերբ գյուղի ստանալիք ապրանքների մասսայի ամբողջ կեսից

ավելին ստացվում է անմիջականորեն կոոպերացիայի և պետմարմինների միջոցով, ըստ որում կոոպերացիայի և պետմարմինների ձեռքին է գտնվում ամբողջապես գյուղին մեքենաներ հայթայթելու գործը։ Իսկ մի ամբողջ շարք արդյունաբերական ապրանքների նկատմամբ (մանուֆակտուրա, աղ, նավթ և այլն) մասնավոր կապիտալն աննշան դեր է խաղում։ Պրոլետարական պետության ջանքերն այստեղ, առաջին հերթին, նպատակ ունեն. 1. սիստեմատիկաբար իջեցնելով արդյունաբերական ապրանքների գները, գյուղացիական մասսաներին բավարար քանակությամբ առավել էժան գնով և լավորակ ապրանք տալ. 2. ամրացնել և ընդլայնել զրավված դիրքերը գյուղին անմիջականորեն արդյունաբերական արտադրանքներ մատակարարելու գործում, ավելի ու ավելի կրճատելով մասնավոր կապիտալի միջնորդությունն. 3. մեքենամատակարարումը զենք դարձնել գյուղացիական տնտեսությունների մասսայի վերելքի և նրանց կոոպերացման, մանավանդ, նրանց արտադրողական կոոպերացման համար։

11. Անցյալ տարիների, մանավանդ, վերջին տարիների փորձն ամբողջապես և լիովին հաստատեց Լենինի կոոպերատիվ պլանի ճշտությունը, որի համեմատ հատկապես կոոպերացիայի միջոցով սոցիալիստական ինդուստրիան մանր գյուղացիական տնտեսությանը տանելու չէ դեպի սոցիալիզմ տանող ճանապարհով անհատական և բաժան-բաժան արտադրողական միավորները վերածելով խոշոր, համայնացրած տնտեսության նոր տեխնիկայի (էլեքտրավորում և այլն) հիմունքով,—այդ բանն անելով ինչպես շրջանառության պրոցեսի միջոցով, նույնպես ավելի ևս արտադրության վերակազմության և միավորման միջոցով։

Ներկա ժամանակաշրջանում մանր անհատական գյուղացիական տնտեսությունները խոշոր կոլեկտիվների վերափոխելու և միավորելու խնդիրը պետք է դրվի իբրև կուսակցության հիմնական խնդիր՝ գյուղում։ Կատեգորիկ կերպով մատնանշելով, որ այս փոխանցումը կարող է տեղի ունենալ միմիայն աշխատավոր գյուղացիների համաձայնությունն ունենալու դեպքում, կուսակցությունն անհետաձգելի է համարում լայնորեն պրոպագանդ մղելու այն մասին, թե անհրաժեշտ և ձեռնտու է գյուղացիության համար աստիճանաբար խոշոր հանրային գյուղատնտեսության անցնել, ամեն կերպ խրախուսելով արդեն գործնական կյանքում գոյություն ունեցող և գյուղի խոշոր կոլեկտիվ տնտեսության ակնհայտ աճող տարրերը։

Վերջին տարիներում կոոպերացիան (սպառողական և գյուղատնտեսական) հզոր որդանիզմ է դարձել միավորելով մի քանի միլիոն գյուղացիական տնտեսություններ և պետական առևտրի հետ միասին վճռական դեր խաղալով քաղաքի ու գյուղի միջև գոյություն ունեցող ամբողջ ապրանքաշրջանառության մեջ։ Զգալիորեն ամրապնդվում է վերջին ժամանակներս նաև տնայնագործական արդյունաբերական կոոպերացիան։ Գյուղի կոոպերացիայի կազմը շեշտակիորեն տարբերվում է մինչպատերազմյան շրջանի կոոպերացիայի կազմից։ Վոչ մի տարակույս չկա, որ հիմնականում մեր կոոպերացիան չքավոր միջակների կոոպերացիա է։ Այս կազմի համաձայն փոխվում է նաև այն կոոպերատիվ կազմակերպությունների գործունեության

ուղղությունը, որոնք ներկայումս սպասարկում են գյուղացիության հիմնական մասսաների և ոչ թե նրա կուլակային վերնախավի շահերը։ Վորքան խնդիրը վերաբերում է պետության և կոոպերացիայի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությանը, կոոպերացիան ոգավում է մի շարք արտոնություններով և առավելություններով, որոնք բղխում են պրոլետարական պետության առջև ծագած այն անհրաժեշտությունից, որի համեմատ պետությունը բաղմակողմանիորեն, ի թիվս որոց նաև նյութականապես, պաշտպանելու չի կոոպերատիվ շինարարությունը։

Կոոպերացիայի խոշորագույն տնտեսական նշանակության հետ ընդհանրապես և գյուղատնտ. կոոպերացիայի նշանակության հետ առանձնապես, անհրաժեշտ է նշել, որ կոոպերացիան գյուղացիության տնտեսական մասսայական միավորման, նրա ինքնագործունեության և նախաձեռնության զարգացման ամենալավ ձևն է, նրա տնտեսական և կուլտուր-քաղաքական վերադաստիարակման, հանրային սոցիալիստական շինարարության հունի մեջ դրավելու ձևը։ Այս է նրա հիմնական տարբերությունը և առավելությունը պետական առևտրական և մթերող մարմիններից և սրանով տրված է նրա աճող դերի հեռանկարը։

Հարկ է նշել, որ ոպոզիցիայի բնորոշ գիծն այն է, որ նա չի հավատում, թե հնարավոր է գյուղացիության հիմնական մասսան սոցիալիստական շինարարության հունի մեջ քաշել՝ կոոպերացիայի միջոցով։ Այդ նշանակում է հրաժարվել Լենինյան կոոպերատիվ պլանից և, հետևաբար, ոպոզիցիայի ուղղակի հեռանալը լենինիզմից։ Այդ հեռացումն անխուսափելի հետևանքն է ոպոզիցիայի լիկվիդատորական ընդհանուր դիրքավորման ոպոզիցիայի, որ ժխտում է մեր երկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը։

12. Գյուղատնտեսական, սպառողական, նույնպես և տնայնագործական արհեստական կոոպերացիայի զարգացումը և նրա կողմից քաղաքի ու գյուղի զուգ դիրքերի ընդգրկումը գյուղատնտեսական և տնայնագործական կոոպերացիայի համար տնտեսական անհրաժեշտություն և տնտեսական հնարավորություն է ստեղծում վաճառման և հայթայթման գործառնություններից, ոպերացիաների սասպարեզից, թափանցելու արտադրության սասպարեզը։

Այնտեղ, որտեղ պետական և կոոպերատիվ կազմակերպությունները հանդես են գալիս որպես մոնոպոլ կամ համարյա մոնոպոլ մթերողներ, արտադրական կոոպերացման անցնելը, այն է—իրեն, կոոպերացրացված գյուղացիության տնտեսության բարձրացմանն անմիջականորեն նպաստելու գործը, առանձնապես սուր բնույթ ունի, որովհետև հակառակ դեպքում կոոպերացված ազգաբնակությունն առավելություններ չի ստանում չկոոպերացվածների հետ համեմատած։ Այդպիսով, կոոպերացիայի զարգացումը արդի պայմաններում այն հետևանքն է ունենում, որ կոոպերացիայի մեջ միավորված գյուղացիական տնտեսությունները կարող են լրացուցիչ առավելություններ ունենալ՝ համեմատած չկոոպերացված տնտեսությունների հետ ամենից առաջ այն դեպքում, եթե նրանք, տեխնիկական վերակառուցման և գյուղացիական բաժան-բաժան տնտեսությունների միա-

վորման հիմունքով կոոպերացման վաճառման և հայթայթման գծից հետզհետե ավելի ևս անցնեն խոշոր կոլեկտիվ տնտեսության։

Արտադրական կոոպերացման այդ պրոցեսի մեջ արդեն այժմ իսկ ամենակարևոր դերն է խաղում, և դեռ ավելի մեծ դեր պիտի խաղա ապագայում, գյուղատնտեսական ինդուստրիան (և՛ պետական, և՛ կոոպերատիվ), վորը թե՛ տեխնիկապես և թե՛ տնտեսապես անմիջականորեն կապված է գյուղատնտեսական արտադրության հետ, և վորը կերպարանափոխում է գյուղատնտեսական արտադրության ներքին կառուցվածքը։ Այդ պրոցեսը կապ ունի ինտենսիվ մշակույթների, անասնաբուծության և այլ ճյուղերի զարգացման ու արտածության հետզհետե աճող հնարավորությունների հետ (յուղագործարաններ, պանրագործարաններ, պահածոների (կոնսերվի) գործարաններ, վուշի նախնական մշակման գործարաններ, չորանոցներ, ապխտի և այլ գործարաններ)։

13. Կոոպերացիայի միջոցով պլանային ազդեցության ուժեղացումն արտադրական պրոցեսի վրա արտահայտվում է նրանով, վոր կոոպերացված արտադրողներին վորոշ վորակի և վորոշ քանակի մթերքների անմիջական պատվերներ են տրվում, ինչպես տեղի չի ունենում շաքարի արդյունաբերության և մասամբ էլ բամբակագործության ասպարիզում (պայմանագրերի սիստեմը), ընդ վորում պատվեր տվողը, այսինքն՝ պետական արդյունաբերությունը հնարավորություն ունի բարձրացնելու արտադրական պրոցեսի վորակը, պայմանագրի մեջ հատուկ կետեր մտցնելով արտադրության լավագույն լեղանակների

մասին (շաքքացան, սերմերի վորակ, հողի պարարտացում և այլն) և ոժանդակելով այդ միջոցների իրագործմանը։ Հաճախ, արտադրության համար համապատասխան արտադրության միջոցներ հայթայթում են իրենք՝ պատվեր տվող պետական կամ կոոպերատիվ կազմակերպությունները։ Այդ ձևը կարևորագույն միջոցներից մեկը հանդիսանա գյուղացիական արտադրությունն իրոք կոոպերացնելու այս խոսքի բուն իմաստով, այսինքն՝ կամավոր կերպով միացնելու մանր արտադրողներին, վորոնք կոոպերացիայի միջոցով կապված են սոցիալիստական արդյունաբերության հետ։

14, Արտադրական կոոպերացման հունով է ընթանում արտադրական միավորումների սկզբնական այնպիսի ձևերի զարգացումը, ինչպիսիքն են՝ արտելները, զանազան տեսակի արտադրական ընկերությունները, գյուղատնտեսական կոմմունաները, վորոնց ճնշող մեծամասնությունը միավորում է չքավորներին և սակավազոր գյուղացիությանը։ Այդ ձևերը, կրիտիկական վորոշ շրջանից հետո, ցույց տալիս իրենց կենսունակությունը և շատ դեպքերում ապացուցին արդեն իրենց առավելությունները՝ գյուղացիական մանր տնտեսությունների նկատմամբ։ Կուսակցությունը պետք է ապահովի նրանց համար կատարյալ աջակցություն և քաջալերություն։ Գյուղատնտեսության սոցիալիստական տարրերի ընդհանուր հաշվեկշռի մեջ եյական դեր են խաղում խորհրդային տնտեսությունները, վորպես պետական-սոցիալիստական խոշոր հողագործության և անասնաբուծության

ձևեր։ Խորհրդային տնտեսությունների սիստեմը, վոր նմանապես սուր ճգնաժամ ապրեց, ներկայումս արդեն շահավետ է դարձել և գնալով ավելի մեծ դեր է խաղում, թե վորպես գյուղացիական տնտեսության վրա ներգործող կուլտուրական ագրոնոմիական ցուցադրական գործոն և թե՝ վորպես մի նմուշ, վորը ցուցադրում է հանրայնացված խոշոր արտադրության առավելությունները՝ մանր-գյուղացիական տընտեսության համեմատությամբ։

15. Գյուղացիության վրա ներգործելու կարևոր ազդակ են հանդիսանում մելիորատիվ խոշոր կառուցումները, ինչպես, որինակ, վոռոգման աշխատանքները Միջին Ասիայում (բամբակագործություն) և Կովկասում։ Պրոլետարական պետության ձեռքին վոռոգման սիստեմը կարող է արտադրական սիստեմը կարգավորելու մի զորեղ գործիք լինել և գյուղացիական չքավոր ու միջակ խավերին ոգնելու մի զենք։

Պլանային ներգործման այլ յեղանակ են հանդիսանում անհրաժեշտ քանակությամբ գյուղատնտեսական բարդ մեքենաներ ունեցող պետական և կոոպերատիվ վարձակալանները, վորոնք ճիշտ քաղաքականություն կիրառելու դեպքում խոշոր գործոն են գյուղացիական չքավոր և սակավազոր խավերի շահագործման դեմ մղվող պայքարում—շահագործում, վոր կատարվում է կուլակների կողմից։ Դրանք միաժամանակ և այնպիսի գործոն են, վորոնք դրդում են անցնել նոր տեխնիկայի վրա հիմնված հողի մշակման կոլլեկտիվ ձևերի։ Պլանային ներգործության մի միջոցն է հանդիսանում նաև ագրոտեխնիկական լայն ոգնությունը, զտված սերմեր և հանքային պարարտանյութեր հայթայթելը, յերաշտի դեմ մղվող պայքարը, կենտրոնական-Սևահող շրջանի բարձրացման միջոցառությունները և այլն։

16. Արդյունաբերության զարգացումը և ընդհանրապես յերկրի արտադրողական ուժերի վերելքը, միլիոնավոր չքավոր և միջակ մասսաների կոոպերացման պետական ֆոնդերի աճումը—այս ամենն ավելի ու ավելի հնարավորություն են տալիս տեխնիկապես վերակառուցել բովանդակ ժողտնտեսությունը, նեբրաոյալ նաև գյուղատնտեսությունը՝ հիմնվելով ելեկտրիֆիկացիայի վրա։

Վերակազմելով ամբողջ արդյունաբերության տեխնիկան, ելեկտրիֆիկացիան գնալով նոր ու կատարյալ տեխնիկական հիմք կստեղծի նաև ամբողջ գյուղատնտեսության համար, արմատապես վերանորոգելով նրա մեթոդները և ուժեղ կերպով մղելով նրան դեպի հանրայնացած աշխատանքի ուղին։ Այսպիսով, գյուղացիական տնտեսությունը սոցիալիստական վերակառուցող վերոհիշյալ բոլոր ազդակների, նմանապես և վարկային ու հարկային սիստեմի գործած զորեղ ներգործության վրա՝ ավելանում է նաև տեխնիկական հեղափոխության հսկայական գործոնը, վորը պետք է արագորեն առաջ մղի գյուղատնտեսության վերելքի գործը և կոոպերացման միջոցով աստիճանաբար հանրայնացնի այն։ Անհրաժեշտ է էլ ավելի ուժեղացնել գյուղին տրակտորներ հայթայթելու գործը և այդ նպատակով պետք է արագորեն ընդարձակել տրակտորների արտադրությունը։

Ոպպոզիցիայի ամենակոպիտ սխալն այն է, վոր նա ջանում է ելեքտրիֆիկացիայի պլանը հակադրել

Լենինի կոոպերացման պլանին։ Այդ ջանքերը ցույց են տալիս, որ ոպպոզիցիան ամենևին չի ըմբռնում այն անհերկբա փաստը, որ ելեքտրիֆիկացիայի պլանը և կոոպերատիվ պլանն անբաժան մասերն են մեր յերկրում սոցիալիզմը կառուցելու այն ընդհանուր պլանի, որ ավել է Լենինը։

III. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳԾԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ

17. Չնայած ընդհանուր քաղաքականության ճշտության, չնայած պրոլետարական պետության, նրա որգաններին, կոոպերացիայի հետզհետե աճող հզորագույն ներգործությանը գյուղատնտեսության վրա, անհրաժեշտ է նշել մի շարք խոշոր թերություններ, սխալանքներ, խեղաթյուրումներ, յերբեմն նույնիսկ աղաղակող խախտումներ կուսակցության քաղաքական գծի։

Պետական որգանների գործունեության բնագավառում նախ և առաջ պետք է նշվեն գյուղատնտեսական արդյունքների գների կարգավորման գծով կատարված սխալները (1925—26 թ. սխալները), որի հետևանքով ձախողվեց մեր ներմուծման և արտածման պլանը, իսկ սրա հետևանքով նաև արդյունաբերության արտադրական ծրագրերը, ապա տեխնիկական մշակույթների ցանքսերի կրճատումը և այլն։ Անհրաժեշտ է նշել, որ **հողմարմինները**, ինչպես և կոոպերացիայի ու գյուղատնտեսական վարկի մարմինները, բավականաչափ ուշադրություն չեն դարձնում գյուղում պրոլետարական ճիշտ քաղաքականու-

թյուն վարելու վրա (մեքենաների հայթայթում, վարկ, վարձակալության կիրառում, հողաշինարարություն և այլն), հաճախ հարկավոր դիմադրությունը ցույց չտալով կուլակների հավակնություններին։ Նույնպես անհրաժեշտ է նշել, որ **Քիչժողկոմատի** մարմինները, չնայած պրոգրեսիվ հարկատվությունն իրագործելու գծով յեղած խոշոր հաջողություններին, վոչ, միշտ կարողանում են հաջողեցնել կուլակ խմբերի հարկի տակ դրվելիք յեկամուտների հաշվառումը, ինչպես և հարկային համապատասխան ճնշումը։ Անհրաժեշտ է այնուհետև մատնանշել, որ հաճախ պետական մթերող մարմինները հարկավոր չափով հաշվի չեն առնում կոոպերացիայի նշանակությունը, որպես մասսաները կազմակերպող մի գործոնի, որ նրա պատակ ունի գյուղատնտեսական արտադրության հանրայնացումը, և տենդենց են ցույց տալիս նսեմացնելու կոոպերացիայի դերն ու կոոպերացիան վերանելու համապատասխան պետական մթերող կազմակերպությունների մի հասարակ բաժանմունքի։

18. Հինգ իրեն կոոպերացիայի մեջ նկատվում են մի շարք անառողջ յերևույթներ, որոնք աղդանշանում են կուսակցության քաղաքականության խեղաթյուրում։ Կոոպերացիայի **կազմը**, որն ընդհանուր և ամբողջական առումով չքավոր-միջակային է, այնուհանդերձ հաճախ բացահայտում է չքավորության համեմատաբար թույլ կոոպերացում և անհամաչափորեն բարձր կոոպերացում գյուղի ունևոր վերնաշերտի։

Կոոպերացիայի **ընտրովի մարմինների** կազմի մեջ, չնայած վորոշում կա կուլակների այդ մարմինների մեջ մուտք գործելը թույլ չտալու մասին, նկատ-

վում են նույն թերությունները։ Այդ պատճառով **մեքենացների հայթայթման** գործում հազվագյուտ չեն դեպքեր, երբ համեմատաբար ավելի լավ են սպասարկվում գյուղի վերին խավերը։ Նույնը պետք է ասել **վարկերի** բաշխման մասին։ Անհրաժեշտ է նաև նշել, որ կոոպերատիվ մարմինները հաճախակի չեն կատարել կուսակցության կոոպերացման համար հատկացված ֆոնդերը, չեն ոգտագործել իրենց անմիջական նպատակին։

Չնայած վերջերս նկատվող շրջադարձին՝ այդ տեսակ փաստերը վերացնելու ուղղությամբ և հակառակ Համկոմկուսի (բ) կենտկոմի որոշակի հրահանգների, կուսակցական գծի վերոհիշյալ խեղաթյուրումները դեռևս տեղի չեն ունենում։ Պետք է ուշք դարձնել նաև այն փաստի վրա, որ գոյություն ունեն կեղծ կոոպերատիվներ, որոնք քողարկված կուլակային «ընկերություններ» են և ոգտագործում են կոոպերացիայի բոլոր իրավունքներն ու արտոնությունները։ Կոոպերացիայի կազմակերպչական աշխատանքի եյական պակասությունը նաև բազմաթիվ այսպես կոչված «վայրի» կոոպերատիվների գոյությունն է, որոնք դեռևս չեն մուծվել կոոպերացիայի ընդհանուր կենտրոնացված սիստեմի մեջ։

Հողմարմինների, անտմարմինների, կոոպերատիվ և վարկային կազմակերպությունների աշխատանքի ընդհանուր պակասությունն է՝ հաճախակի անհարիրությունն ու փոխադարձ հակասությունը նրանց ընձեռած գործելակերպերի միջև։

19. **Խորհրդային աշխատանքի** ընդգավառում կարելի չե հավատել կուսակցության ընձեռած գյուղական խորհուրդների աշխուժացման քաղաքականության անկասկած հաջողությունը։ Խորհուրդները (նրանց սեկցիաներն ու մասնաժողովները) գնալով դառնում են տնտեսական և քաղաքական կյանքի կազմակերպող կենտրոններ, կառավարման դպրոցներ, նորակերպող գործոն չքավորա-միջակային կադրերի առաջքաշման գործիք և այլն։ Անկուսակցական ակտիվի կազմակերպումը խորհուրդների շուրջը բարձրացրել է նրանց հեղինակությունը լայն մասսաների աչքում։ Միաժամանակ պետք է մատնանշել չքավորության և բատրակության կազմակերպվելու աճումը, որ արտահայտվում է խորհուրդների, կոոպերատիվ մարմինների և այլ ընտրությունների ժամանակ։ Այնուամենայնիվ պետք է նշել, որ այդ աշխատանքը դեռևս բավարար չափով կատարված չե։

20. **Կուսակցական աշխատանքի** ընդգավառում պետք է նշել վ չ-բավարար աշխատանքը բատրակների մեջ (որ անդրադառնում է նաև գյուղական բջիջների կազմի վրա) և գյուղում կատարվող կուսակցական-քաղաքական աշխատանքի թույլ կապակցումը տնտեսական և կուլտուրական շինարարության ընդգավառում կատարվող աշխատանքի հետ։ Սակայն խորհուրդների վերընտրության կամպանիան, որ մղվում է կուսակցության ղեկավարությամբ, աշխատավորների համար լայն դեմոկրատիայի հիմունքներով, ցույց է տալիս, թե կուսակցական կազմակերպությունների հեղինակությունը որքան է բարձրացել գյուղացիական մասսայի աչքում։ Գյուղում կարևորագույն դեր է կատարում **կոմյերիտական** կազմակերպությունը, որը ներկայումս պետք է իրեն նպատակ

դնի՝ կարգավորել իր կազմն այն իմաստով, որ պետք է ուժեղացվի այդ կազմի չքավորա-բատրակային կորիզը, պետք է դաստիարակի կոմյերիտական ակտիվի նորանոր ընդարձակ կադրեր այդ տարրերի միջից, ավելի որոշակի պիտի տանի կուսակցական գիծը, ակտիվ ոգնություն պետք է ցույց տա կուսակցությանը՝ չքավորներին ու բատրակներին կազմակերպելու գործում և պետք է քաղաքականորեն դաստիարակի իր անդամներին։ Կոմյերիտական կազմակերպությունը գյուղում պետք է ծառայի կուսակցության համար որպես խոշորագույն լծակ՝ գյուղատնտեսությունը կոլեկտիվացնելու և բարձրացնելու գործում, կուլտուրական լայն ձեռներեցության զարգացման գործում և սոցիալիստական աշխատավորների նոր կադրեր ստեղծելու գործում։ Չքավոր և բատրակ կանանց կուլտուրական և կոոպերացիայի գծով աշխատող չքավորա-միջակային ակտիվի մեջ քաշելու գործում կարևոր դեր են խաղում գեղջկուհիների պատգամավորական ժողովները, որոնք պետք է ուժեղացնեն իրենց աշխատանքը՝ կուսակցությանն առավել հարազատ գեղջկուհիական խավերը սոցիալիստական բովանդակ շինարարության մեջ լայնորեն մասնակից անելու գծով։

IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այսպիսով մենք կարող ենք հավաստել—1) որ տնտեսական բնագավառում նշանավոր չափով աճել է ժողովրդական տնտեսության սոցիալիստական հատվածը, իսկ սրա հետ միասին նաև բան. դաս. տեսակարար կշիռը, —2) որ մասնավոր կապիտալը դուրս

է վտարված մի շարք կարևորագույն ճյուղերից։—3) որ գյուղում միանգամայն պարզ կերպով գծագրվել են սոցիալիստական զարգացման թե հիմնական կասությունները և թե լծակները, այսինքն մի կողմից կուլակ տարրի որոշ աճումը, մյուս կողմից՝ միջակ տարրի ուժեղացումը և գյուղական չքավորության կազմակերպման աճումը, կոոպերացիայի արագ զարգացումը,—որը պրոլետարական դիկտատուրայի պայմանները համազոր է, ըստ Լենինի, «սոցիալիզմի աճման»,—և պետմարմինների գյուղացիական տնտեսության հանդեպ ունեցած պլանային-կարգավորիչ դերի ուժեղացումը։ XIV կուսկոնֆերենցիայի և XIV կուսհամագումարի ժամանակից և կուսակցության համապատասխան քաղաքականության հետևանքով մի շարք խոշոր փոփոխություններ տեղի ունեցան մի այլ գծով. —1) աճել է ցանքսերի տարածությունը և որոշակի կերպով պակասել է անմշակ հողերի քանակը, որպիսի հանգամանքը կապ ունի գյուղացիական հիմնական մասսայի տնտեսության ընդհանուր բարձրացման հետ. —2) քաղաքական բնագավառում ուժեղացել է միջակի հեռացումը կուլակից, ամրապնդվել է բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության միջակ մասսաների հետ և գծագրվել է վճռական շրջադարձ՝ դեպի կուլակի մեկուսացումը։

Այսպիսով այն նպատակները որ դրված էին կուսակցության առաջ XIV-րդ կոնֆերենցիայի XIV-րդ համագումարի շրջանում, հիմնականում պետք է համարել իրավորված։ Կուսակցությունը ձեռք է բերել այդ հաջողությունները, մաքառելով թե կուլակային վտանգի թերագնահատության դեմ և թե առավելա-

պես ոպպոզիցիայի հակամիջակային թեքման դեմ։ Կուսակցությունը ձեռք չեր բերի այդ հաջողություն-ները, եթե կենտրոնացրած չլիներ իր կրակը ոպպոզիցիայի հակամիջակային ոպորտյունիստական թեքման վրա, վորովհետև այդ թեքումը, կասեցնելով պրոլետարիատի զորումը միջակ մասսաների հետ և դժվարացնելով միջակի հեռացումը կուլակից իրակա-նում տանում է դեպի կուլակների աղդեցության ուժեղացումը գյուղում։ Անհրաժեշտ է շարունակել միջակի հետ դաշինք հաստատելու լենինյան քաղաքականությունը, վոր վարում եր կուսակցությունը։ Կուսակցության գյուղում վարած քաղաքականության ձեռք բերած հաջողությունները և դրա հետ միասին ստեղծված իրերի նոր դրությունը թույլ են տալիս պրոլետարիատի կուսակցության, ոգտագործելով տնտեսական մարմինների բովանդակ զորությունը և առաջվա պես հենվելով գյուղացիության չքավորական-միջակային մասսաների վրա, հետագայում ևս ծավալել աշխատանքը կուլակների դեմ և մի շարք նոր միջոցների ձեռնարկել, վորոնք կսահմանափակեն կապիտալիզմի զարգացումը գյուղում և կառաջնորդեն գյուղացիական տնտեսությունը սոցիալիզմի ուղիով։

Այստեղից կուսակցության համար բղխում են հետևյալ հերթական խնդիրները։

1. Պետական պլանային կարգավորման տարերը գյուղատնտեսության մեջ

ա) Ամրացնել և զարգացնել պետական մարմինների կոոպերացիայի մեջ ձեռք բերված հաջողությունները՝ արդյունաբերական ապրանքների (այս թվում

նաև տնայնագործ արդյունաբերության արդյունքների) վաճառքը գյուղում և գյուղատնտեսական մթերքների քաղաքի համար մթերումը իր ձեռքն անելու դործը, վորպես կարևորագույն պայման շուկայի տարրերը հաղթահարելու, պլանային սկզբունք գյուղատնտեսության վրա տարածելու և սոցիալիստական ինդուստրիայի ղեկավարող դերը ժողովրդական բովանդակ տնտեսության մեջ ապահովելու համար։

բ) Անշեղ կերպով շարունակել արդյունաբերական ապրանքների գների իջեցման քաղաքանությունը պահպանելով գյուղատնտեսական գների կայունությունը, վորպես կարևորագույն պայման՝ աշխատանքը վոր մասսաների նյութական դրության բարելավման և քաղաքի ու գյուղի շաղկապն ամրացնելու համար։

գ) Ամեն աջակցություն ցույց տալ կոոպերացված գյուղացիության և պետմարմինների միջև տեղի ունեցող պայմանագրական փոխհարաբերությունների (կոնտրակտացիա և այլն) պրակտիկայի զարգացմանը, վորպիսի փոխհարաբերություններն տնմիջական կապ են հաստատում գյուղացիական տնտեսության և սոցիալիզացիայի յենթարկված արդյունաբերության համապատասխան ճյուղերի (շաքարի արդյունաբերություն, անկվածային և այլն) միջև և դյուրացնում են գյուղատնտեսության համապատասխան շրջանների և ճյուղերի պետական-պլանային կարգավորումը։

դ) Գյուղացիական մանր տնտեսությունների միավորումը կոլլեկտիվ խոշոր տնտեսությունների մեջ ըստ ամենայնի քաջալերելու նպատակով, գյուղատնտեսական վարկի սիստեմն իր գլխավոր ուշադրությունը պիտի դարձնի չքավորա-միջակային լայն մասսաների արտադրական կոոպերացմանն աջակցելու և

զարկ տալու վրա, ավելի ուշադիր լինելով թե դեպի գյուղացիական ավանդները կոոպերացիայի մեջ քաշելու գործը և թե առավելապես կոոպերատիվ ձեռնարկությունների կազմակերպման վերամշակման գործը և այլն։

ե) Ինչ չափով վոր կամրանա (գյուղատնտեսական սպառողական և տնայնագործական-արհեստային) կոոպերացիան և ապրանքափոխանակության բնագավառից դուրս կվտարվեն կուլակն ու մասնավորը, ապա նույն չափով էլ անհրաժեշտ է այնպիսի փոխհարաբերություններ հաստատել կոոպերացիայի և պետմարմինների միջև, վորոնք կարող լինեին ապահովել կոոպերացիայի աշխատանքի շրջանակի հետագա ընդլայնումը, անվերապահորեն ապահովելով սակայն խորհրդային պետության շահերն ու ղեկավարությունը։

2. Հարկաստվությունը

ա) Հսկելով, վորպեսզի կուսակցության և Խորհրդային իշխանության վորոշումը՝ սակավազոր գյուղացիությունը (Միության գյուղացիական տնտեսությունների 35 տոկոս) գյուղատնտեսական հարկից ազատելու մասին՝ իրականացվի ամենայն ճշտությամբ։

բ) Գյուղի առավել ունևոր խավերի աճող լեկամուտների հարկի տակ դնելու նպատակով հանձնարարել ԿԿ-ին մշակելու առավել լիակատար պրոգրեսիվ լեկամտային հարկատվությանն անցնելու խնդիրը։

3. Կոոպերացիան

ա) Ընդլայնել ու ամրապնդել սպառողական, գյուղատնտեսական և տնայնագործական-արհեստային

կոոպերացիայի ցանցը, նկատի ունենալով մոտակա ժամանակաշրջանում կոոպերացիայի մեջ քաշել ամբողջ չքավորությունը և միջակների մեծամասնությունը, ավելացնելով կոոպերացիայի կողմից չքավորությունը կոոպերացնելու համար հատկացվող նյութական միջոցները։

բ) Ուժեղացնել գեղջկուհիներին կոոպերացիայի մեջ քաշելու գործը, մասնավորաբար այն գեղջկուհիներին, վորոնք աշխատում են գյուղատնտեսության այնպիսի ճյուղերում, վորոնց մեջ կանացի աշխատանքը խոշոր տեղ է բռնում (թռչնաբուծություն, տնայնագործական արհեստների մի շարք ճյուղեր և այլն)։

գ) Մասնավոր կապիտալը տնայնագործական արդյունաբերությունից էլ ավելի վտարելու համար ապահովել՝ տնայնագործական-արհեստային կոոպերացիային պետմարմինների կողմից առավելապես նպաստելը, տնայնագործական արհեստների մեքենայացման գործն ուժեղացնելը և այլն։

դ) Կարճ ժամանակամիջոցում հաջողեցնել, վորպեսզի այսպես կոչված «վայրենի» կոոպերատիվները, վորոնք ստեղծվել են կոոպերացիայի կազմակերպչական աշխատանքի թուլության շնորհիվ, մտնեն գյուղատնտեսական կոոպերացիայի սիստեմի մեջ։

ե) Հավանություն տալ գյուղատնտեսական կոոպերացիայի հատուկ տեսակների (վերակազմված Գյուղմիությունը, Հացկենտրոնը, Ցուղկենտրոնը, Կտավատ, Կազկենտրոնը, Ճակնդեղացան կոոպերացիան և այլն) կազմակերպման պրակտիկային և անհրաժեշտ ճանաչել

կոոպերացման այդ տեսակների հետագա զարգացումի վորպես կարևորագույն մի միջոցի, վաճառքի և հայթայթման կոոպերացումից հետզհետե գյուղացիական անհատ տնտեսությունների արտադրության հասարակայնացմանն անցնելու համար։

զ) Ուժեղացնել պայքարը հանուն սակավազոր անդույք տնտեսությունների ազատագրման կուլակ տարրերից, վորոնք ոգտագործում են իրենց գույքը (գյուղատնտ. մեքենաներ և այլն) չքավորությանն սարկացնելու համար։ Հիշյալ նպատակի համար պետականների հետ միասին գյուղատնտեսական կոոպերացիային կից հիմնել հատուկ վարձակալություններ լայն ցանց, վորոնք սակավազոր տնտեսություններին ձեռնտու պայմաններով մեքենաներ պիտի տան և պիտի աջակցեն հողի մշակման, բերքի հավաքման և այլ աշխատանքների հասարակական ձևերի զարգացմանը։

է) Ամեն կերպ թեթևացնել կոլեկտիվ տնտեսություններին և սակավազոր գյուղացիներին գյուղատնտեսական մեքենաներ հայթայթելը, հատուկ արտոնություններ մշակելով վարկի, վճարման պայմանների և այլ գծով։ Կուլակ տարրերին գյուղատնտեսական մեքենաներ հայթայթելը սահմանափակելու համար՝ մշակել հատուկ նորմաներ (իրացման ցենթակա մեքենաների ընդհանուր գումարի մեջ կուլակների մասի պակասեցում, կանխիկ վճարումներ և այլն)։

ը) Անհրաժեշտ համարել չքավորության ֆոնդերի մեծացնելը թե պետական և թե տեղական բյուջեներով, տալով այդ ֆոնդերին արտադրական կոոպերատիվ հատկացում (կոլ. տնտես.) և միաժամանակ

խոշորացնելով չքավորության մասը մեացյալ վարկերում։

թ) Ամրացնելով ձեռք բերած հաջողությունները չքավոր և միջակ գյուղացիության հուսալի տարրերին կոոպերատիվ զեկավարող աշխատանքի համար առաջ քաշելու գործում և ստեղծելով նրանցից սոցիալիստական կոոպերատորների նորանոր լայն կադրեր, ուժեղացնել պայքարն ընդդեմ կուլակ տարրերի փորձերի՝ տիրանալու կոոպերատիվ ստորին կազմակերպություններին։

ժ) Հավանություն տալ գյուղատնտեսական կոոպերացիայի միությունների միության ստեղծմանը, վորպես բոլոր տեսակի գյուղատնտեսական կոոպերացիայի միացնող մի կենտրոնի և վորպես մի մարմնի, վոր կոչված է սպառողական և տնայնագործական-արհեստական կոոպերացիայի հետ կողք կողքի, զարգացնելու կոոպերատիվ հասարակայնությունը գյուղում և կոոպերացման սոցիալիստական մեթոդները պատվաստել՝ գյուղացիական բազմամիլիոն մասսաների մեջ։

4. Կոլեկտիվ յեվ խորհրդային տնտեսություններ

ա) Հավանություն տալ Կենտկոմի 1926 թ. դեկտեմբերի 30-ի վորոշմանը կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների շինարարության արդյունքների մասին և կուսակցական բոլոր կազմակերպություններին և խորհրդային ու կոոպերատիվ մարմիններում աշխատող բոլոր կուսակցական աշխատավորներին պարտադրել, վորպեսզի ուժեղացնեն ոգնությունը

կոլ. տնտեսությունների շինարարության գործին և ամրացնեն խորհրդային տնտեսությունները, իրականապես վերածելով նրանց սոցիալիստական տիպի խոշոր տնտեսությունների, միաժամանակ ուժեղացնելով այս վերջիններիս ազնությունը գյուղացիական տնտեսություններին (Խոր. տնտեսությունների մեջ կազմակերպելով վարձման և ագրոնոմիական կայաններ, տրակտորային բազաներ և այլն)։

բ) Ըստ ամենայնի աջակցելով գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերելու և հավաքականորեն ոգտագործելու համար գոյություն ունեցող չքավորամիջակային ընկերությունների ցանցի ընդլայնմանը, վճռական պայքար սկսել ընդդեմ կեղծ ընկերությունների (և ընդհանրապես կեղծ կոոպերատիվների), որոնք սովորաբար ծառայում են կուլակ տարրերին՝ քողարկելու համար նրանց ապորինի կերպով ստացված վարկի, հայթայթման կամ այլ արտոնությունները։

5. Հողոգտագործումն ու հողաշինարարությունը

ա) Ըստ ամենայնի ամրացնել հողի ազգայնացման հիմունքները և հետապնդել, որպես քրեական ծանր հանցանք, ամեն տեսակի (ուղղակի թե կողմնակի) փորձեր՝ խախտելու հողի ազգայնացումը, ինչպես որինակ, հողի առք ու վաճառքը, հողի նվիրումը, որ տեղի չե ունենում որինակ Կովկասի և Միջին Ասիայի որոշ շրջաններում։

բ) Հետզհետե պակասացնել վարձակալության արվող հողերի տարածությունն այն շրջաններում, ուր վարձակալությունը նպաստում է կուլակ տարրերի աճ-

ման։ Վարձակալության ժամկետի սահմանափակումը վոչ ավելի քան մի ցանքաշրջանի ժամանակամիջոցով, բայց և վոչ շատ քան 6 տարով։ Նրանց վերաբերմամբ, ովքեր չնայած պետության և կոոպերացիայի կողմից նրանց տրվող ոգնությանը, իրենք կամ իրենց ընտանիքի ուժերով չեն մշակի իրենց բաժին հանված հողը և տարեցտարի տալիս են հողը վարձակալներին, սահմանափակել հողը վարձակալության տալու իրավունքը, շրջգործկոմների հատուկ վորոշմամբ, 3—6 տարի անընդհատ ժամանակամիջոցով, վորպիսի ժամանակամիջոցը լրանալուց հետո զրկել նրանց հողի տնորինության իրավունքից և հանձնել այդ հողերը հողընկերություններին։

Վճռականորեն պատժել, որպես քրեական հանցանք, բոլոր տեսակների յենթավարձակալության որենքը խախտողներին։

Վարձակալության տալ պետական ֆոնդի հողերը գլխավորապես աշխատավորական տիպի տնտեսություններին, սահմանափակելով վարձակալության ժամկետը 6 տարվա ժամանակամիջոցով։ Բացառությունները այս կանոնից՝ պետական ֆոնդի հողերի վերաբերմամբ թույլ են տրվում առանձին շրջանների համար միմիայն կենտրոնական հողորգանների համաձայնությամբ։

գ) Ըստ ամենայնի աջակցել հողոգտագործման այնպիսի ձևերի ամման, վորոնք առավել բարենպաստ են գյուղատնտեսության կոոպերացման և մեքենայացման զարգացման համար, (փոքրիկ գյուղեր, գաղթած գյուղեր և այլն) սահմանափակելով ագարակներ և «տոտրուբներ» (կոտորակներ) կազմելու պրակտիկան և իսպառ վերացնել այդպիսիներն այն դեպքերում,

յերը դրանք նպաստում են կուլակ տարրի աճման։

դ) Չքավոր և սակավազոր խավերի հողաշինարարությունը կատարել պետական հաշվով։ Հողաշինարարության իրագործումը սերտորեն կապակցված պետք է լինի կազմակերպչական-տնտեսական այլ միջոցների հետ (ագրոգնություն, վարկ, վոռոգում. մեքենաների հայթայթում և այլն)։ Հսկել, վորպեսզի շինարարությունը կատարելիս չքավորագույն խավերի շահերն ապահովված լինեն հենց հողահատկացման միջոցին (վորակը, դիրքը և այլն)։

Կրճատել ԽՍՀՄ-ի հողաշինարարական աշխատանքների ավարտման համար պլանով նշանակված ժամկետը։

ե) Հողոգտագործման և հողաշինարարության հիմնական սկզբունքների հաստատումը համամիութենական մասշտաբով համարել անհետաձգելի։

6. Վարձու աշխատանքը յեվ գյուղացուոի բանվորների միությունը

ա) Հսկել, վորպեսզի անշեղորեն կիրառվի աշխատանքի որենսգիրքը գյուղատնտեսական բանվոր-բանվորուհիների նկատմամբ կուլակային տիպի տնտեսությունների մեջ և որենսգիրքը խախտողներին խիստ պատասխանատվության կանչել։

բ) Հսկել վորպեսզի անշեղորեն կիրառվեն «ժամանակավոր կանոնները» ոժանդակ վարձու աշխատանքով ոգտվող գյուղացիական տնտեսությունների մեջ, «ժամանակավոր կանոններ»» խախտողներին խիստ պատասխանատվության կանչելով։

գ) Ապահովել գյուղատնտեսական և անտառագործ բանվոր-բանվորուհիների սոց.-ապահովագրման որենքների խստագույն կիրառումը կյանքում։

դ) Անհրաժեշտ ճանաչել՝ գյուղատնտես տնտեսության բանվորների միության աշխատանքի ուժեղացումը դեռ ևս չկազմակերպված բատրակներին կազմակերպելու գործում, նաև գյուղացնել գյուղատնտես բանվորների միության մեջ ընդունելը գյուղում բոլոր այն կիսապրոլետարական տարրերի նկատմամբ, վորոնց համար վարձով աշխատելն իրենց գոյության հիմնական աղբյուրն է։

7. Սակավազոր գյուղացիության ապահովագրումը. գյուղփոխոգնումներ

ա) Հանձնարարել ԿԿ պայմաններ մշակելու միջոցներ ձեռք առնել, վորոնք անհրաժեշտ են խորհուրդների առաջիկա համագումարում անցկացնելու սակավազոր գյուղացիների ծերության ապահովագրման որենքների համար։

բ) Ըստ ամենայնի ամրացնել գյուղացիական փոխոգնության ընկերությունները այն պայմանով, վոր նրանք իրոք դառնան գյուղի չքավորա-միջակ խավերի մասսայական կազմակերպություններ, վորոնց անելիքն և լինելու փոխոգնություն ցույց տալ և տնտեսական միջոցառումների կազմակերպումն՝ սակավազոր գյուղացիների դրությունը թեթևացնելու համար։ Շարունակելով չքավորներին անհատական ոգնություն ցույց տալու աշխատանքը, անհրաժեշտ է գյուղացիական փոխոգնության կոմիտեների աշխատանքն ուղղել գյուղացիական սակավազոր խավերին արտադրական կոլլեկտիվ ոգնություն ցույց տալու գծով։

8. Խորհուրդները, կուլտուրական աշխատանքը

ա) Շարունակելով խորհուրդների, վորպես աշխատավոր գյուղացիության լայն մասսաների պրոլետարիատի ղեկավարության ներքո տեղի ունեցող քաղաքական դասակարգային կենտրոնների, աշխուժացման քաղաքականությունը, հատուկ ուշադրության առարկա դարձնել չքավոր-միջակ անկուսակցական ակտիվի կազմակերպումն ու ծավալումը, ուժեղացնելով բատրակների և սակավաղոր գյուղացիների մասնակցությունն այդ ակտիվի մեջ։ Սրա հետ միասին ուշադրություն դարձնել, վորպեսզի այդ ակտիվի մեջ մուտք գործեն գեղջկուհիներն ու բատրակ կանայք (պատգամավորուհիներ, խորհրդի անդամներ) և առաջ քաշել նրանց ղեկավարող աշխատանքի՝ խորհուրդների մեջ։

բ) Նկատի ունենալով 1928 թ. սկզբին տեղի ունենալիք խորհուրդների վերընտրությունը, ծավալել խորհուրդների աշխատանքների մասին հաշվետու լայն կամպանիա, մասնակից անել ընտրությունների չքավոր և միջակ խավերի մաքսիմումը, ապահովել կուսակցության ղեկավարությունն ամբողջ նախընտրական կամպանիայում և խստիվ հետևել, վորպեսզի համապատասխան ընտրական հրահանգով սահմանված (1926 թ.) նորմաները, վորոնցով ընտրողական ցուցակներից հանվում են կուլակ և այլն վոչ-պրոլետար տարրերը, կիրառվեն ամենայն խստությամբ։

գ) Հանձնարարել ԿԿ. մշակել խորհուրդների և հողընկերությունների փոխհարաբերությունների բարելավման խնդիրը, միշտ աչքի առաջ ունենալով

խորհուրդների ղեկավար դերի ապահովումը և անհրաժեշտությունը, ձայնազուրկ անել հողային ընկերությունների մեջ (գյուղական ժողովներում) նրանց, վորոնք հանված են խորհուրդների ընտրողական ցուցակներից։

դ) Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել վճռականորեն իրականացնելու նախնական ընդհանուր և պարտադիր ուսումը, ըստ ամենայնի աջակցելով այդ գործում բնակչության և տեղական խորհուրդների նախաձեռնությանը։

Ուժեղացնել կուլտուրական և, մասնավորապես, դպրոցական շինարարությունն ազգային փոքրամասնությունների շրջաններում, հատուկ ուշադրություն դարձնելով առավելապես նրանցից հետամնացների վրա։

Հաջողացնել, վորպեսզի (բոլոր աստիճանների) դպրոցները շատ ավելի մեծ չափերով ընդգրկեն գյուղատնտեսական բանվորների, բատրակների և չքավորության յերեխաներին, վորի համար անհրաժեշտ է չքավորների յերեխաներին ոգնող դպրոցական հատուկ ֆոնդ ստեղծել։

Բոլոր միջոցները ձեռք առնել, վորպես զի իրականապես ապահովված լինի չքավորների յերեխաների դպրոցներում ուսանելու հնարավորությունը, նամանավանդ, վարձով աշխատող փոքրահասակ յերեխաների, վորդեգիրների համար և այլն։

ե) Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել պրոֆտեխնիկական դպրոցների զարգացման, ամեն տեսակի դպրոց-արհեստանոցների զարգացման, ինչպես և այն բանի վրա, թե ինչպես է դրված դրպ-

լոցներին կից գյուղատնտեսական անհրաժեշտ արհեստներ սովորեցնելու գործը։

զ) Ավելի ուշադիր լինել դեպի գյուղացիական ինտելլիգենցիայի նոր կադրերի ստեղծումը և յեղած կադրերի վորակի բարձրացումը, ստեղծելով նրանցից գյուղի սոցիալիստական վերաշինության ակտիվ և գիտակից գործիչներ։

Առանձնապես ուշադրություն դարձնել, վորպեսզի ստեղծվեն մասնագետների կադրեր՝ գյուղում կոլլեկտիվ անտեսություններ կազմակերպելու համար։

է) Ամրացնել քաղլուսաշխատանքը գյուղում, բարձրացնել նրա վորակը։ Առանձին ուշադրություն դարձնել գյուղում ռադիո սարքավորումների, կինոների գործի զարգացման վրա, ուժեղացնել գրադարանների ցանցը և այլն։

ը) Գյուղական յերիտասարդության դպրոցների ցանցը լայնացնել և միջոցներ ձեռք առնել, վորպես զի նրանց մեջ բատրակ և չքավոր յերիտասարդության կորիզը զորեղանա (ավելացնել թոշակները,— չքավոր, սակավազոր և բատրակ յերեխաների հանրակացարաններին հատկացվող գումարները և այլն)։

թ) Զորացրված կարմիր բանակայիններին և նավաստիներին ամեն կերպ աշխատել կապել գյուղի խորհրդային և կուլտուրական շինարարության հետ, վորի համար անհրաժեշտ է Կարմիր Բանակում և նավատորմում նրանց տրվող հասարակա-քաղաքական դաստիարակության մեջ՝ համաձայն այս վորոշումների, անհրաժեշտ բարելավումներ մտցնել։

ժ) Գյուղատնտեսության կոլլեկտիվացման գործում նոր խնդիրների լուծման իրագործումը պահանջում է, վորպես զի արհմիություններն ըստ ամենայնի ուժեղացնեն իրենց մասնակցությունը գյուղի ամբողջ հասարակական կյանքի մեջ։ Մասնավորապես անհրաժեշտ է ուժեղացնել և բարելավել շեֆական աշխատանքները, հայրենակցական միությունների աշխատանքը արհմիություններն ևս պիտի ավելի ընդլայնեն կուլտ-աշխատանքը գյուղում (ռադիո, կինո, գրադարաններ), մանավանդ արհմիության այն անդամների շարքերում, վորոնք տարվա խոշոր մասի ընթացքում կապված են գյուղական տնտեսության հետ (սեզոնով աշխատողներ, տարաձնացներ և այլն)։

9. Կուսակցական-կազմակերպչական խնդիրներ

ա) Ձևավորել և ամրացնել խորհուրդներին և կոոպերատիվներին կից գոյություն ունեցող չքավորական խմբակներն այնպես, վորպեսզի ժամանակ առ ժամանակ կազմակերպվեն գյուղում և շրջանում այդ խմբակների խորհրդակցություններ՝ նրանց աշխատանքի ձեռք բերած փորձն ընդհանրացնելու համար։

բ) Կուսակցական Կոմիտեներին կից (Շրջկոմներից և Նահանգկոմներից մինչև ԿԿ) ստեղծել գյուղական աշխատանքի բաժիններ, վորոնց վրա, մասնավորապես, պարտականություններ դնել՝ ըստ անհրաժեշտության կազմակերպելու և նախապատրաստելու չքավորական խմբակների գավառային և նահանգական կոնֆերենցիաներ։

գ) Կենտրոնացնել ուշադրությունը՝ պատրաստելու և կուսակցության շարքերն առնելու գլխավո-

բապես բատրակ-չքավորական այն ակտիվը, որը հասունանում է գյուղատնտեսական բանվորների միության, չքավորական խմբակների մեջ, գործնական աշխատանքում, խորհուրդների, կոոպերացիայի մեջ, պատգամավորական ժողովներում և այլն։

դ) Կուսակցական նոր ուժերով ամրապնդել կոոպերատիվ և խորհրդային մարմինները՝ ապահովելու համար կուսակցական գծի ճիշտ կիրառումը նրանց աշխատանքի մեջ՝ գյուղում։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԴԻՐԵԿՏԻՎՆԵՐԸ

(Ընդունված է միաձայն)

I ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Կապիտալիստական հասարակակարգը սոցիալիստականի վերափոխող՝ Հոկտեմբերյան հեղափոխության որից անցած տասնամյակի արդյունքները, իբրև միջազգային հեղափոխության մեծ պրոցեսի բաղադրիչ մասի արդյունքներ, այդ հեղափոխության միջազգային խոշոր նշանակությունն են վեր հանում։ Պրոլետարիատի դիկտատուրան, արտադրության միջոցների, տրանսպորտի, վարկի, արտաքին առևտրի պրոլետարական ազգայնացումը, հողի ազգայնացումը, բոլոր այս նախապայմանները ԽՍՀՄ եկոնոմիկայի զարգացումը սկզբունքորեն այլ—սոցիալիստական հիմունքներով են պայմանավորել։ Վողջ ժողովրդական տնտեսության զարգացումն իր ամբողջությամբ **վորոշող տնտեսական հրամայող բարձունքների սոցիալ-դասակարգային բովանդակությունն սկզբունքորեն փոխվել է։ Սկզբունքորեն փոխվել է քաղաքի ու գյուղի փոխհարաբերությունը,** վորովհետև ինդուստրիան, վոր գյուղի սոցիալիստական վերափոխման հզոր ֆակտորն է հանդիսանում, իր «յերեսը դե-

պի գյուղ» է դարձրել, **վերափոխման հզոր գործոն է դարձել**, և, ի զանազանություն կապիտալիզմի, ներքին շուկայի զարգացումը յերևան է բերում վոչ թե իբրև գյուղի քայքայման պրոցեսս, այլ իբրև վերջինիս բարեկեցության զարգացում։ Սկզբունքորեն բոլորովին փոխվել է ժողովրդական տնտեսության **կազմակերպչական ձևը**—խոշոր արդյունաբերության և այլ հրամայող բարձունքների ազգայնացման հիման վրա այն չափով, ինչ չափով հնարավոր է դարձել ծրագրված տնտեսության ղեկավարությունը, վոր ապրանքա-կապիտալիստական շուկայի անարխիան ավելի ու ավելի մեծ չափով է վտարում։ Սկզբունքորեն փոխվել է նաև **ազգային հասույթի բաշխումը**, առաջ գոյություն ունեցող դասակարգերի լիկվիդացիայի և վերջինիս հետ կապ ունեցող վոչ արտադրական սպառման զգալի մասի գրեթե կատարյալ վոչընչացումով ընդհանրապես։

2. Տնտեսական զարգացման արդյունքներն այսպես ասած «Նոր տնտեսական քաղաքականության» սկզբից, վոր պետական սոցիալիստական արդյունաբերության և հասարակ ապրանքարտադրողների—գյուղացիների մանր ու մանրիկ տնտեսությունների ճիշտ զուգորդման հիմքն են դրել, կատարելապես ապացուցել են Լենինի այն սկզբունքները, թե մենք մեր յերկրում բավարար չափով ունենք այն ամենն՝ ինչ վոր անհրաժեշտ է սոցիալիզմ կառուցելու համար, վոր ԽՍՀՄ-ի տնտեսական ու սոցիալիստական զարգացման ներքին օբյեկտիվ պայմաններում ամենևին էլ պրոլետարական դիկտատուրայի անկման կամ վերասերման անխուսափելիություն չկա, վոր մեծ չա-

փով գյուղացիական տնտեսությունների և վերջինիս հետ պետական տնտեսության շաղկապի առկայությունը մեր յերկիրն ամենևին էլ գյուղացիական արդյունաբերության յերկիր չեն դարձնում։

Տնտեսական զարգացման արդյունքները պարզորոշ ցույց են տալիս այն, վոր նոր տնտեսական քաղաքականության ժամանակաշրջանում տնտեսական ձևերի (առաջին հերթին սոցիալիստական ինդուստրիայի), պարզ ապրանքային տնտեսության ու կապիտալիստական տնտեսության ձևերի միջև գոյություն ունեցող հարաբերությունների արմատական վերախմբավորում է տեղի ունեցել։ Մինչդեռ նոր տնտեսական քաղաքականության սկզբում պետական արդյունաբերությունը գրեթե անգործության ենթարկված, ապրանքաշրջանառության ասպարիզում պետական և կոոպերատիվ մարմիններն իրենք եյին մասնավոր միջնորդության դիմում, իսկ մասնավոր կապիտալը, վոր արագ շրջանառության բոլոր հնարավորություններն ուներ, խոշոր դեր եր խաղում, այն ինչ՝ վերականգնման շրջանից վերակառուցման շրջանը թեակոխելու շեմքին սոցիալիստական արդյունաբերությունն ուժգնս հրամայող բարձունքները ժողովրդական ամբողջ տնտեսության ասպարիզում արդեն վճռական ու առաջնորդող դեր են խաղում, պետական ու կոոպերատիվ առևտուրը յերկրի ընդհանուր ապրանքաշրջանառության ճնշող մասն է ընդգրկում, ժողովրդական տնտեսության հանրացած ճյուղը զարգացման ընդհանուր ուղությունն է վորոշում վտարելով մասնավոր կապիտալը, քարշ տալով իր յետևից և ստիպելով վերակազմելով հասարակ

ապրանք արտադրողների—գյուղացիների տնտեսությունը։

Այսպիսի պայմաններում, չնայած, բացարձակ թվանշաններով, մասնավորի վորոշ զարգացման, ընտեսության հանրացած մասի էլ ավելի արագ զարգացումը, բազմատիկ չափով նվազեցնելով մասնր-բուրժուական հիմունքներով զարգացող մասնավոր կապիտալի վտանգը, սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար հաստատուն նախապայմաններ է ստեղծում։ Սոցիալ-դասակարգային տեսակետից, այդ նշանակում է, վոր, չնայած պրոցեսի զարգացման բոլոր հակասություններին, չնայած քաղաքի ու գյուղի բուրժուազիայի (կուլակ, նեպման) զարգացան, բանվոր դասակարգի տեսակարար կշիռը բարձրացել է, նրա կապը գյուղացիության հիմնական մասսայի հետ ուժեղացել է, պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդվել է։

3. Պլանային ղեկավարության փորձն ապացուցել է, վոր ծրագրված յենթադրությունները բազմիցս կարիք են ունեցել շատ թե քիչ էական ուղղումների, վոր այդ յենթադրություններն անխուսափելիորեն պետք է հարաբերական ու պայմանական ընույթ ունենային, վոր ռեալ ծրագիրն անխուսափելիորեն որդանապես կառուցվում է ժողովրդական տնտեսության կազմակերպվածության իսկական աճման չափով և հանրացած հիմունքներով յերկրի եկոնոմիկան զարգանալու հնարավորությունների ճիշտ հաշվառման ու նախատեսության չափով։ Բերքից կախում ունենալը և վերջինիս վիճակագրական նախնական ճիշտ ընդգրկման անհնարինությունը, շուկայի տարերայնու-

թյունից կախում ունենալը, այն տարերայնությունից, վորին պլանային սկզբնավորությունն ավելի ու ավելի յե սանձահարում և սակայն ամբողջությամբ չի մտնում վերջինիս շրջանակի մեջ, համաշխարհային շուկայի կոնյունկտուրայի տատանումն ու այդ շուկայից կախում ունենալը, վերջապես արտատնտեսական փակտորները, վորոնք կապ ունեն առաջին հերթին կապիտալիստական թշնամական ողակման հետ և թե արտասահմանյան տնտեսական հարաբերությունների ու թե յերկրի ներքին տնտեսական հարաբերությունների վրա յեն անդրադառնում, այս բոլորը պլանային ու թվական յենթադրությունների նշանակության հարաբերականությունն են պայմանավորում ընդհանրապես։

Կապիտալիստական պետությունների ու ԽՍՀՄ-ի հարաբերությունների սրման հետևանքով, ժողովրդական տնտեսության հնգամյա ծրագիրը միջազգային մոմենտների առանձին ճնշումն իր վրա պետք է փորձի։

Հաշվի առնելով կապիտալիստական պետությունների կողմից պրոլետարական պետության վրա ռազմական հարձակման հնարավորությունը, անհրաժեշտ է հնգամյա պլանը մշակելիս առավելագույն ուշադրություն դարձնել ժողովրդական տնտեսության այն ճյուղերի արագ զարգացմանն, ընդհանրապես, և արդյունաբերությանը, մասնավորապես, վորոնց վրա պատերազմի ժամանակ յերկրի պաշտպանությունն ու տնտեսական կայունությունն ապահովելու ասպարիզում գլխավոր դերն է ընկնում։

Հնգամյա հեռանկարային պլանի կառուցման հե-

տևանքով, պաշտպանության հարցերի վրա վոչ միայն պլանային ու տնտեսական մարմինների ուշադրությունը պետք է գրավել, այլև, վոր գլխավորն է, վողջ կուսակցության անդուլ ուշադրությունը պետք է ապահովել։ Մյուս կողմից, հնգամյա պլանը կառուցելիս, ճիշտ այդպես էլ պետք է հաշվի առնել անբերրիությունների հնարավորությունը՝ մի շարք բերրի տարիներից հետո։

4. Ժողովրդական տնտեսության հնգամյա ծրագիրը կազմելիս, ինչպես և շատ թե քիչ յերկարատև ժամանակի համար նկատի առած տնտեսական ամեն տեսակի ծրագիր կազմելիս, պետք է ձգտել հասնելու հետևյալ տարրերի բարենպաստ զուգորդման. բանվորական ու գյուղացիական մասսաների լայն սպառման, պետական ինդուստրիալի բնագավառում լայն վերարտադրության (կուտակման)—հիմնվելով ժողովրդական տնտեսության լայն վերարտադրության վրա ընդհանրապես, ավելի արագ, քան կապիտալիստական յերկիրների ժողովրդական տնտեսության զարգացման տեմպն է և անպայման սոցիալիստական տնտեսության ճյուղի տեսակարար կշիռը սիստեմատիկորեն բարձրացնելով, վոր պրոլետարիատի վողջ տնտեսական քաղաքականության ասպարիզում վճռական ու գլխավոր մոմենտն է հանդիսանում։

Ընդ սմին, միջազգային հարաբերությունների բնագավառում յելակետ պետք է ունենալ վոչ այդ հարաբերությունների առավելագույն լայն զարգացման սոսկ լոզունգը (ոպպոզիցիայի կողմից առաջ քաշված այսպիսի մի լոզունգ իր հաջորդական կիրարկումով կնշանակեր՝ արտաքին առևտրի մենաշնորհի

վերացում ու տնտեսական և ռազմական կապիտուլյացիա միջազգային բուրժուազիայի առաջ) և վոչ էլ կապիտալիստական աշխարհի տնտեսական հարաբերությունների կծկում (այսպիսի մի լոզունգի իրականացումը կնշանակեր՝ ընդհանրապես մեր տնտեսական զարգացման և ամբողջ սոցիալիստական շինարարության թափի դանդաղում)։ Այստեղ յելակետ պետք է ունենալ առավելագույն լայն կապերը (արտաքին առևտրի, արտասահմանյան վարկի, կոնցեսիաների ընդարձակում, արտասահմանյան տեխնիքական ուժերի գրավում և այլն) այն չափով, ինչ չափով այդ կապերը Միության տնտեսական ուժն են ավելացնում, այդ Միությունն ավելի անկախ են դարձնում կապիտալիստական աշխարհից, ընդարձակում են Միության հետագա ինդուստրիալ զարգացման սոցիալիստական բազան, վորովհետև այս սահմաններում միայն կարելի յե խոսել առավելագույն ընդարձակ կապերի մասին։

Արտադրության ու սպառման բնագավառում պետք է նկատի առնենք այն, վոր չի կարելի միաժամանակ յելակետ ունենալ թե մեկի և թե մյուսի առավելագույն թվանշանները (ինչպես ներկայումս ոպպոզիցիան և պահանջում այդ), վորովհետև այդ անլուծելի մի խնդիր և, վոչ էլ տվյալ ժամանակաշրջանի **կուտակման** միակողմանի **շահը** ~~(ինչպես [illegible] եր պահանջում այդ՝ 1923 թ. առաջադրելով [illegible] բերա համակենտրոնացման ու բանվորների վրա գործ դրած ուժեղ ճնշման նշանաբանը)~~, վոչ էլ սպառման միակողմանի շահը։ Նկատի առնելով այդ մոմենտների թե համեմատական հակասությունը, թե

նրանց փոխադրեցությունն ու կապակցությունն, ըստ որում տեսական զարգացման տեսակետից ընդհանուր առմամբ այդ շահերը զուգադիպում են, անհրաժեշտ է այդ յերկու մոմենտների ոպտիմալ զուգորդումը յելակետ ունենալ։

Նույնն ել պետք է ասել քաղաքի ու գյուղի, սոցիալիստական ինդուստրիայի և գյուղացիական տնտեսության մասին։ Գյուղացիական տնտեսության բնագավառից ինդուստրիայի շրջանն առավել չափով միջոցներ շպրտելու պահանջը յելակետ ունենալը սխալ կլինի, որովհետև այդ պահանջը կնշանակի ոչ միայն գյուղացիության քաղաքական խզում, այլ և կնշանակի ինդուստրիայի իրեն իսկ հում նյութերի բաղայի կործանում, ինդուստրիայի իրեն ներքին շուկայի տապալում, արտածման տապալում և ժողովրդական տընտեսության վողջ սիստեմի հավասարակշռության խախտում։ Մյուս կողմից, սխալ կլիներ հրաժարվել գյուղի միջոցներն ինդուստրիայի շինարարության մեջ քաշելուց. ներկայումս այդ բանը կնշանակի զարգացման թափի դանդաղացում ու հավասարակշռության խախտում իմաստ յերկրի ինդուստրացման։

Զարգացման թափի հարցում պետք է հավասարապես նկատի ունենալ խնդրի ծայր աստիճան բարդությունը։ Այստեղ յելակետ պետք է ունենալ ոչ թե մատակա տարվա, կամ թե միքանի տարիների համար կուտակելու թափի մաքսիմալ չափը, այլ ժողովրդական տնտեսության տարրերի այնպիսի փոխհարաբերությունը, որ տեսական կերպով ապահովեր զարգացման ել ավելի արագ թափը։ Այս տեսակետից պետք է վճառականորեն ու միանգամ ընդ միշտ դատապարտել դների

բարձրացման ոպպոզիցիոն լոզունգը. այդ լոզունգը ոչ միայն արդյունաբերության բյուրոկրատական վերասերման ու մոնոպոլիստական նեխման կհասցներ, ոչ միայն սպառողին և, առաջին հերթին, բանվոր դասակարգին ու քաղաքի և գյուղի չքավորությանը կհարվածեր, ոչ միայն կուլակի ձեռքն ամենամեծ կողիրները կտար, այլ սեղմելով ներքին շուկան, կործանելով արդյունաբերության գյուղատնտեսական բազան և խափանելով ինդուստրիայի տեխնիկական պրոգրեսսը, մի առ ժամանակից հետո առաջ կբերեր զարգացման թափի զգալի դանդաղացում։

Ծանր ու թեթև ինդուստրիայի զարգացման միջև գոյություն ունեցող հարաբերականության բնագավառում նույնպես պետք է յելակետ ունենալ յերկու մոմենտների ոպտիմալ զուգորդումը։ Ծանրության կենտրոնն արդի տարությունների միջոցների արտադրությունն տեղափոխելը ճիշտ համարելով, միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել պետական կապիտալներն ավելի մեծ չափով խոշոր շինարարության հետ կապակցելու վտանգը, որ շուկայում մի շարք տարիներից հետո յե իրացվում։

Մյուս կողմից, պետք է նկատի ունենալ, որ թեթև ինդուստրիայի ավելի արագ շրջանառությունը (առաջին անհրաժեշտության առակաների արտադրությունը) նույն այդ թեթև ինդուստրիայի զարգացման պայմաններում հնարավորություն է տալիս նրա կապիտալներն ոգտագործել նաև ծանր ինդուստրիայի շինարարության համար։

Միայն վերը նշած բոլոր գործոնների հաշվառումն ու այդ գործոնների ծրագրված կապակցությունն են ու այդ գործոնների ծրագրված կապակցությունն տալիս տնտեսությանը շատ թե հնարավորություն տալիս տնտեսությանը շատ թե

քիչ ծրագրված, կրիզիսներից շատ թե քիչ ազատ զարգացման ուղիով տանելու։

5. **Դասակարգային կռվի ու դասակարգային ուժերի դասավորության** տեսակետից, այն ժամանակաշրջանը, որ մենք ենք թեւակոխում, բնորոշվում է պրոլետարիատի դասակարգային ուժի զարգացմամբ, նրա չքավոր ու միջակ մասսայի դաշինքի ամրապնդմամբ՝ քաղաքի ու գյուղի մասնավոր-կապիտալիստական տարրերի հարաբերական անկման ու դեռևս հնարավոր լայնարձակ զարգացման դեպքում։

14-րդ կոնֆերենցիայի ու 14-րդ կուսհամագումարի վորոշումները հիմք ծառայեցին ընթացիկ մոմենտում գյուղի նկատմամբ ունեցած ճիշտ քաղաքականության, և հինց այդ վորոշումներն ապահովեցին բանվոր դասակարգի ու գյուղացիության հիմնական մասսայի դաշինքի ամրապնդումը։ Բանվորա-գյուղացիական բլոկի ձեռք բերած ամրապնդման հիման վրա իր կուսակցության ներսում պրոլետարիատը հաղթահարելով հակամիջակային թեքումը, այժմ վողջ չքավոր ու միջակ մասսայի հետ հնարավորություն ունի կուլակի ու մասնավորի հետագա, ավելի սիստեմատիկ ու համառ սահմանափակման անցնելու։ Ահա այսպես պետք է լինի ժողովրդական տնտեսության հնգամյա պլանի դասակարգային հիմնական իրագործումը։

II. ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. **Քաղաքի ու գյուղի փոխհարաբերությունները** կանոնավորելու ճանապարհին հիմնական դժվարություններ ու պրոլետարիատի տնտեսական քաղաքա-

կանության հիմնական պրոբլեմներ կան։ Տնտեսական հնգամյա պլանը կառուցելիս մեր տնտեսության հիմնական դիսպրոպորցիաների, հետ կապ ունեցող խնդիրների լուծումը պետք է յելակետ ունենալ, այն է՝ **արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև** յեղած դիսպրոպորցիան, որ չնայած ինդուստրիալ ավելի արագ աճմանը, քան գյուղատնտեսության աճումն է, ամենևին չի վերացել արդյունաբերության ու գյուղատնտեսության արտադրանքների գների (շուկայի «մկրատ») դիսպրոպորցիայի, գյուղատնտեսության արտադրանք հանդիսացող արդյունաբերական **հում նյութերի** պահանջի (բամբակի, կաշու, բրդի և այլն) ու վերջինիս առաջարկի միջև յեղած դիսպրոպորցիայի, վերջապես, գյուղում գոյություն ունեցող բանվորական ձեռքի քանակի ու վերջիններս տնտեսորեն ոգտագործելու (այսպես կոչված «ագրարային գերբնակություն») իրական հնարավորության միջև յեղած դիսպրոպորցիայի հետ կապ ունեցող խնդիրների լուծումը։

2. Այդ դիսպրոպորցիաների հաղթահարմանը հնարավոր է հասնել զանազան մեթոդներով։ Այսպես, որինակ, արդյունաբերական արտադրանքի պահանջի և առաջարկի միջև հավասարակշռության սահմանելուն կարելի է հասնել **արդյունաբերական գների բարձրացումով** (ոպպոզիցիայի մեթոդը, որ ինքը մինչև վերջին ժամանակներս քարոզել է) այս մեթոդը, սակայն, վերն արդեն նշած պատճառներով, կուսակցության կողմից վճռականորեն պետք է ժխտվի։ Այդ հավասարակշռությունը կարելի է ձեռք բերել **գյուղատնտեսական գների խիստ իջեցումով**. այս մեթոդը, սա-

կայն, զարգացման վողջ թափի նվազման կհասցներ, արտածման հնարավորությունները կրճատելով և արդյունաբերության հում նյութերի բազան ավելի ևս կործանելով։ Այդ հավասարակշռությունը կարող եր ձեռք բերվել գյուղատնտեսության տուրքադրման խիստ սաստկացումով։ Այս մեթոդն ել, սակայն, ինչ չափով այդ վոչ թե կուլակին և վերաբերում, այլ գյուղացիության վողջ մասսային, ընդունելի լինել չի կարող նույն պատճառներով, ինչ պատճառներով վոր ընդունելի չի կարող լինել արդյունաբերական ապրանքների բարձր գների քաղաքականությունը կամ գյուղատնտեսական արդյունաբերության արտադրանքների չափազանց ցածր գների քաղաքականությունը։ Հիմնական դիսպրոպորցիաների վոչնչացման այսպիսի մեթոդներն անմիջականորեն կամ վերջին հաշվով վոչ թե արտադրողական ուժերի զարգացման արագ բարձրացող կորագծի հավասարակշռություն սահմանելուն այլ այդ արտադրական ուժերի ծայրահեղ դանդաղ առաջխաղացմանը կհասցնելին։ Մյուս կողմից նման մեթոդները, շուկայում վորոշ հավասարակշռություն սահմանելով, վոչ միայն ապրարային գերբնակության ու վերջինիս հետ կապ ունեցող՝ քաղաքների գործազրկության մեղմացման, կամ առավել ևս, լիկվիդացիային չեյին հասցնի, այլ ընդհակառակն, ավելի սուր դրության կհասցնելին և յերկրի քաղաքական վողջ կայնքի վրա ծանր կերպով կանդրադառնալին։

Նույնպես պետք է մերժվի նաև գյուղատնտեսության ուժեղացրած «ժամանակավոր» «վարկավորման» ընդհանուր իրադրումը և հացի արտածման առարելագույն ծավալումն՝ ի հաշիվ ինդուստրիալ մուծանքների։

Այս քաղաքականությունը, վոր արտաքին առևտրի մենաշնորհի սահմաններում արտաքին առևտրի գործառնությունների ամենամեծ ծավալում կընձեռեր, ահա այս քաղաքականությունը կհակասեր յերկրի ինդուստրացման քաղաքականության, կդանդաղեցներ մեր ինդուստրիայի զարգացումը և արտաքին կապիտալիստական թշնամու հանդեպ Միությունը անտեսապես կկինաթափեր։

3. Գերոհիցյալ դիսպրոպորցիաները վերացնելու միակ ուղիղ ճանապարհն արդյունաբերության արտադրանքի իրացումը իջեցնելն է՝ ինդուստրիան յեռանդուն կերպով ռացիոնալացնելու և այն ծավալելու հիման վրա, հետևապես՝ արդյունաբերական գնները իջեցնելու քաղաքականության հիման վրա գյուղի՝ մեծ աշխատանք պահանջող ճակատները զարգացնելու և գյուղատնտեսության խոկ ինդուստրացման ուղին է (առաջին հերթին գյուղատնտեսության արտադրանքների նախնական մշակման ինդուստրիան զարգացնելու միջոցով), մաքր խնայողությունները (ներքին փոխառություններ, խնայողական դրամարկղներ, խնայողությունների ներգրավումը կոոպերացիայի մեջ, կոոպերատիվ գործարանների կառուցումը) ըստ ամենայնի ճերգրավելու և այդ խնայողությունները վարկային սիստեմի հետ կապելու ուղին է։

Այս ճանապարհը միայն, վոր տնտեսությունը վոչ թե նվազագույն դիմադրության, այլ մեծագույն դժվարություններ հաղթահարելու գծով է տանում, միայն այս ճանապարհն է, վոր ապահովում է քաղաքի և գյուղի միջև շատ թե քիչ ներդաշնակ փոխհարաբերության հաստատումը, արդյունաբերական ապ-

կայն, զարգացման վողջ թափի նվազման կհասցներ, արտածման հնարավորությունները կրճատելով և արդյունաբերության հում նյութերի բազան ավելի ևս կործանելով։ Այդ հավասարակշռությունը կարող եր ձեռք բերվել գյուղատնտեսության տուրքադրման խիստ սաստկացումով։ Այս մեթոդն ել, սակայն, ինչ չափով այդ վոչ թե կուլակին և վերաբերում, այլ գյուղացիության վողջ մասսային, ընդունելի լինել չի կարող նույն պատճառներով, ինչ պատճառներով վոր ընդունելի չի կարող լինել արդյունաբերական ապրանքների բարձր գների քաղաքականությունը կամ գյուղատնտեսական արդյունաբերության արտադրանքների չափազանց ցածր գների քաղաքականությունը։ Հիմնական դիսպրոպորցիաների վոչնչացման այսպիսի մեթոդներն անմիջականորեն կամ վերջին հաշվով վոչ թե արտադրողական ուժերի զարգացման արագ բարձրացող կորագծի հավասարակշռություն սահմանելուն այլ այդ արտադրական ուժերի ծայրահեղ դանդաղ առաջխաղացմանը կհասցնելին։ Մյուս կողմից նման մեթոդները, շուկայում վորոշ հավասարակշռություն սահմանելով, վոչ միայն ագրարային գերբնակության ու վերջինիս հետ կապ ունեցող՝ քաղաքների գործազրկության մեղմացման, կամ առավել ևս, լիկվիդացիային չեյին հասցնի, այլ, ընդհակառակն, ավելի սուր դրության կհասցնելին և յերկրի քաղաքական վողջ կայնքի վրա ծանր կերպով կանդրադառնալին։

Նույնպես պետք է մերժվի նաև գյուղատնտեսության ուժեղացրած «ժամանակավոր» «վարկավորման» ընդհանուր իրադրումը և հացի արտածման առարելագույն ծավալումն՝ ինչպիսի ինդուստրիալ մուծանքների։

Այս քաղաքականությունը, վոր արտաքին առևտրի մենաշնորհի սահմաններում արտաքին առևտրի գործառնությունների ամենամեծ ծավալում կընձեռեր, ահա այս քաղաքականությունը կհակասեր յերկրի ինդուստրացման քաղաքականության, կդանդաղեցներ մեր ինդուստրիայի զարգացումը և արտաքին կապիտալիստական թշնամու հանդեպ Միությունը անտեսապես կկինաթափեր։

3. Վերոհիշյալ դիսպրոպորցիաները վերացնելու միակ ուղիղ ճանապարհն արդյունաբերության արտադրանքի ինքնարժեքն իջեցնելն է՝ ինդուստրիան յեռանդուն կերպով ռացիոնալացնելու և այն ծավալելու հիման վրա, հետևապես՝ արդյունաբերական զնեքն իջեցնելու քաղաքականության հիման վրա գյուղի՝ մեծ աշխատանք պահանջող մշակությունները զարգացնելու և գյուղատնտեսության խոկ ինդուստրացման ուղին է (առաջին հերթին գյուղատնտեսության արտադրանքների նախնական մշակման ինդուստրիան զարգացնելու միջոցով), մաքր խնայողություններ (ներքին փոխառություններ, խնայողական դրամարկղներ, խնայողությունների ներգրավումը կոոպերացիայի մեջ, կոոպերատիվ գործարանների կառուցումը) ըստ ամենայնի ներգրավելու և այդ խնայողությունները վարկային սիստեմի հետ կապելու ուղին է։

Այս ճանապարհը միայն, վոր տնտեսությունը վոչ թե նվազագույն զիմադրության, այլ մեծագույն դժվարություններ հաղթահարելու գծով է տանում, միայն այս ճանապարհն է, վոր ապահովում է քաղաքի և գյուղի միջև շատ թե քիչ ներդաշնակ փոխհարաբերության հաստատումը, արդյունաբերական ապ-

բանքների պակասի սիստեմատիկ վերացումը, յերկրի արտադրողական ուժերի անընդհատ վերելքի հիման վրա բանվորական «ավելորդ» ձեռքեր վերացնելը, սոցիալիստական տնտեսական ճյուղի և պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության լայն մասսաների մշտական բարվոքման տեսակարար կշռի բարձրացումը։ Վորովհետև գյուղի՝ մեծ աշխատանք պահանջող մշակույթների զարգացումը, գյուղատնտեսության ինտենսիֆիկացիան և ինդուստրացումն անխուսափելիորեն կլանելու յեն բանվոր ձեռքերի աճող թիվը, մինչդեռ ծավալվող ինդուստրիան, մանավանդ բանվորական որը պակասեցնելու և մեծ թվով յերկրորդ հերթի աշխատանք մտցնելու հիման վրա, քաղաքների գործազրկությունն ավելի արագ կերպով կվերացնի։ Վորովհետև ռացիոնալացման ու ցածր դների քաղաքականությունը գյուղի ու քաղաքի միջև հավասարակշռություն հաստատելով, իր յեռևից զարգացման թափի տեսական արագացում կբերի։ Վորովհետև այս քաղաքականությունը, ընդարձակելով մասսաների սպառումն ու ապահովելով համապատասխան ճնշումն արտադրական վողջ ապպարատի վրա, լավագույն յերաշխիքն է լինելու ամեն տեսակ նեխման ու արտոնյալ մակարուծության դեմ։

4. Ցելակետ ունենալով արտաքին առևտրի ընդհանուր կուրսը (առևտրական առավելագույն կապեր՝ իր արտադրական բազան ու կապիտալիստական աշխարհից հետզհետև անկախ լինելն ամրապնդելու պայմանով), պետք է արտաքին առևտրի պլան կառուցել՝ **ակտիվ հաշվեկշռի** պարտադիր իրագրումով։

Յերկրի վոսկու արդյունաբերությունն ավելանալուն զուգընթաց, առևտրական ակտիվ հաշվեկշիռը արժութային ռեզերվ գոյանալու հիմնական աղբյուրն է հանդիսանում, վոր թե կապիտալիստական աշխարհի ու ԽՍՀՄ-ի հարաբերությունների սրման և թե անբերրիության հնարավորության հետևանքով առանձնապես կարևոր է։

Վերջին հանգամանքների հետևանքով հնգամյա ծրագիրը խոշոր տեղ պետք է հատկացնի բնարդյունքի ապրանքային և արժութային ռեզերվների կուտակմանն ընդհանրապես։ Այդ ռեզերվների կուտակումն այն կատարելապես անհրաժեշտ ապահովագրությունը պետք է լինի, վոր ԽՍՀՄ-ը պաշտպանի միջազգային շուկայի կոնյունկտուրայի խոշոր տատանումներից, տնտեսական կամ վարկային ֆինանսական ժամանակի կամ ընդհանուր համապաշարման (блокада) յերկրի ներքին անբերրիության, ինչպես և պրոլետարական Հանրապետությունների Միության վրա ուղղակի դինված հարձակում գործելու հնարավորություններից։

5. **Արդյունաբերության** բնագավառում պետք է նշել հետևյալ կարևորագույն պրոբլեմները. նախ **արտադրության միջոցներ արտադրելու յեվ սպառման առարկաներ արտադրելու**, այսինքն՝ ծանր ու թեթև ինդուստրիայի հարաբերականությունը, յերկրորդ՝ **արդյունաբերության նոր կառուցվող միավորների յեվ վերջին-ներիս կառուցման վերջնական ժամկետների** հարաբերականությունը (հիմնական շինարարության չափազանց լայն ճակատում ուժից վեր միջոցներ դնելու և վերջինների իրացման տեսական անհնարինության վտանգի հետևանքով)։ յերրորդ՝ արտադրանքի ինքնարժեքի և աշխատավարձի հարաբերականությունը,

վերջապես, մի կողմից՝ ներքին շուկայի և արտաքսման կարիքները բավարարող արտադրության և մյուս կողմից ել՝ յերկրի պաշտպանությունն ապահովող արտադրության հարաբերականություն։

Յերկրի ինդուստրացման քաղաքականության համապատասխան՝ առաջին հերթին պետք է ուժեղացնել **արտադրության միջոցների արտադրությունն** այնպես, որ ծանր ու թեթև ինդուստրիայի, տրանսպորտի ու գյուղատնտեսության զարգացումը, այսինքը նրանց կողմից առաջադրվող արտադրական պահանջը հիմնականում ապահոված լինի **ԽՍՀՄ**-ի արդյունաբերության ներքին արտադրությամբ։ **Զարգացման** ավելի ու ավելի արագ թափը ծանր ինդուստրիայի այն ճյուղերին պետք է տալ, որ ամենակարճ՝ ժամանակամիջոցում կբարձրացնեն **ԽՍՀՄ**-ի տնտեսական ուժն ու պաշտպանունակությունը, տնտեսական համապատասխանության դեպքում զարգացման հնարավորության յերաշխիք կծառայեն, կթուլացնեն կախումը կապիտալիստական աշխարհից և կնպաստեն գյուղատնտեսության վերակազմությանը՝ ավելի բարձր տեխնիկայի և տնտեսության կոլեկտիվացման բազայի վրա։ Ուստի հատուկ ուշադրություն պետք է դարձնել ելեկտրիֆիկացիայի պլանն ամենարագ կերպով իրականացնելուն, սև ու գունավոր մետաղաձուլության, մանավանդ լավորակ մետաղների, քիմիական արտադրության զարգացման, հատկապես արհեստական պարարտանյութերի արտադրության, ածուխի, նավթի տորֆի, արդյունաբերության, ընդհանուր ու գյուղատնտեսական մեքենագործության, նավաշինարարության, ելեկտրա-արդյունաբերության հետագա վոսկու և պլատինի արդյունաբերության բերության, ծավալմանը։

Սպառման առարկաների պատրաստող արդյունաբերությունն իր արտադրանքի քանակն ու վորակն այն աստիճանի պետք է հասցնի, վոր աշխատավորների ամեն մի շնչի սպառման նորմայի զգալի բարձրացումն ապահովի։ Առանձին ուշադրություն պետք է դարձնել անկվածային, կաշվեղենի ու սննդանյութերի արդյունաբերության ծավալմանը, վորոնք գյուղատնտեսական հում արտադրանքի աճումն ապահովելով՝ առանձնապես նպաստում են գյուղատնտեսության ինդուստրացման զարգացմանը և ազրարային գերբնակության (սակավահողության) վերացման։

Նոր արտադրությունների ընդգավառում պետք է զարգացնել կամ հենց նոր սկսել մետաղաձուլման, վառելանյութերի և անկվածային արդյունաբերության սարքավորման արտադրություն, ավտոշինարարություն, ավիոշինարարություն, տրակտորների կառուցում, արհեստական մանածոների արտադրություն, հազվագյուտ տարրերի հայթայթում, ալյումինի, ֆերոմարգանցի, ցինկի, խառն (միացած) ազոտի, կալիի արտադրություն, կինոարդյունաբերության ու ռադիոսարքավորման արտադրություն, բադիի հայթայթում և այլն։

Արդյունաբերության արտադրանքների վաճառքի **գները** սիստեմատիկորեն պետք է իջեցնել, ապահովելով «մկրատի» բացվածքի աստիճանական սեղմումը, այսինքն՝ մեկ կողմից՝ արդյունաբերության արտադրանքների գների դիսպրոպորցիայի վերացումը, իսկ մյուս կողմից՝ թե գյուղատնտեսության, և թե մեր ու համաշխարհային շուկայի գների մակարդակի միջ յեղած դիսպրոպորցիայի վերացումը։

Այս խնդիրների իրագործումը ինքնարժեքը վճռականորեն իջեցնելու պայմաններում է միայն հնարավոր։ Ուստի և ինքնարժեքի իջեցումն արդյունաբերության կենսական պրոբլեմն է և այս պրոբլեմի լուծման պետք է յենթարկվեն մյուս բոլոր խնդիրները։ Այս պրոբլեմի լուծման գլխավոր մեթոդը պետք է հանդիսանա արտադրության սոցիալիստական ռացիոնալացումը։

Նոր տեխնիկայի կիրարկումը, աշխատանքի կազմակերպության բարելավումը, բանվորական ուժի վարակի բարձրացումը և բանվորական որը պակսեցնելու դեպքում այդ որի խտացումը, ահա սրանք են ռացիոնալացման պրոցեսի գլխավոր բաղադրիչ մասերը։ Այս բնագավառում յեռանդուն միջոցներ ձեռք առնելու հետևանքները հնարավորություն տալով աշխատավարձի բարձրացման ու բանվոր դասակարգի կյանքի մակարդակի հետագա ընդլայնման, միևնույն ժամանակ պետք է իջեցնեն բանվածքների միավորի վրա ծախսած աշխատավարձը, պակասեցնեն այդ ապրանքների ինքնարժեքը, բարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը, զենքի իջեցման քաղաքականության համար ամուր բազա ստեղծեն։

Ժողովրդական յեկամուտը հոգուտ ինդուստրիային վերաբաշխելուն զուգընթաց, ներարդյունաբերական կուտակման ընդարձակումը թույլ և տալիս իրականացնել արդյունաբերության մեջ հիմնական մուծանքներ անելու գործն այն չափով, ինչ չափով այդ մուծանքներն ապահովում են արտադրության անհրաժեշտ զարգացումը և ռացիոնալացումը՝ միջոցները ծախսելու ամենամեծ խնայողության, շինարա-

բության արժեքի վճռական աժանացման ու ծրագրի խիստ կիրառման դեպքում։ Ընդսմին, հիմնական շինարարության ծրագիրը յելակետ պետք է ունենա ժողովրդական տնտեսության ավելի նպատակահարմար զարգացման ծրագիրն ամբողջությամբ, հաշվի առնելով շրջանային առանձնահատկությունները, ինչպես և հիմնական շինարարության ծրագիրը յելակետ պետք է ունենա հիմնական ծախսերի ամենամեծ եֆֆեկտավորությունը թե աշխատանքներն ավարտելու ժամկետի նկատմամբ և թե կառուցվող ձեռնարկությունների արտադրական եֆֆեկտավորության նկատմամբ։ Ուստի և յուրաքանչյուր տարվա հիմնական ծախսերը պետք է համեմատաբար սահմանափակ թվով նոր գործարանների և վերասարքավորման համար ընտրված՝ գործող ձեռնարկությունների մեջ առավելագույն չափով մուծանքներ նախատեսեն։

Հիմնական շինարարությունն իրականացնելու դեպքում պետք է յեռանդուն պայքար մղել աշխատանքի նոր մեթոդներ մտցնելու և տեխնիկական նորագույն նվաճումներ կիրարկելու համար։ Մասնավորապես պետք է վերջ տալ շինանյութերի ու շինարարական աշխատանքների արժեքի անչափ բարձր ինդեքսին ամբողջապես։

Արդյունաբերության ընդգավառում, արտադրության ու հիմնական շինարարության զարգացման թափը վորոշելիս, պետք է աչքի առաջ ունենալ այդ արդյունաբերության պատշաճ ապահովությունը՝ շրջանառության միջոցներով, վոչ միայն բյուջեյական հատկացումների հաշվին, այլ գլխավորապես ի հաշիվ արդյունաբերության իսկ կուտակման և արտադրու-

թյան մեջ յեղած կապիտալների շրջանառության արագացման։

Պլանը կառուցելիս, հատուկ ուշադրություն պետք է դարձնել **բանվորական բնակարանային շինարարության**։ Բնակարանային ճգնաժամի ծայր աստիճան սրության պատճառով բանվորական բնակարանային շինարարության այնպիսի ծավալում է պետք, որ մոտակա հինգ տարիների ընթացքում ապահովեր բանվոր բնակչության բնակտարածության ընդարձակումը։ Հնգամյա պլանը կազմելիս, պետք է նկատի ունենալ **տեղական մաքուր արդյունաբերության**, տնայնագործական և արհեստավորական արդյունաբերության զարգացումը, որ այժմ պետական խոշոր արդյունաբերության միանգամայն անհրաժեշտ լրացուցիչ մասն է կազմում, նպաստում է ապրանքի դեֆիցիտի վերացման ու մեղմացնում է զործազրկությունը։ Պետք է նկատի ունենանք այդ արդյունաբերության ներառումը պետական ու կոոպերատիվ մարմինների ազդեցության շրջանը, արդյունաբերության մանր արտադրողների կոոպերացումը, միավորումը ու ռացիոնալացումը և վերջիններիս նվաճումը մասնավոր ապրանքառուի, բաշխողի ու վաշխառուի ձեռքից։

Պետք է ուժեղացնենք տնայնագործների կոոպերացման թափը, մանավանդ արհեստագործական ձեռնարկներում, ուր մինչև այժմ դեռ ուժեղ է մասնավոր կապիտալի ազդեցությունը, պետք է ուժեղացնել կոոպերացված տնայնագործների միջոցները (բաժնետիրական մուծանքները, հատուկ մասնատրություններ, ավանդներ և այլն) տնայնագործական արդյունաբերության մեջ ներդրավելու աշխատանքը։ Հնգամյա ծրագիրը կազմելիս, առանձին ուշադրություն պետք է դարձնենք ծայրամասերի մանր ու տնայնագործական արդյունաբերության զարգացմանը, մասնավորապես ազգային հանրապետությունների ու մարզերի արդյունաբերության զարգացմանը։ Այդ հանրապետություններում ու մարզերում զբաղվող տնայնագործների բարձր վաստակ ունեցող մի շարք արհեստագործության առկայության հետևանքով, պետք է տեղեկատվություն ունենանք՝ պետության կողմից տնայնագործների առանձին կատեգորիաներին տրվող արտոնությունների և ամեն տեսակի ոժանդակությունների նկատմամբ։

6. **Տրանսպորտի բնագավառում** պետք է մեզ նպատակ դնենք տրանսպորտի ցանցի ու աշխատանքների այնպիսի ընդլայնում, որ կարողանար ծածկել թյան կյանքին նոր շրջաններ կցելով, արտադրական ուժերի զարգացման հսկայական նոր աղբյուրներ բանալով և պաշտպանության կարիքներն ապահովելով։ Նկատի ունենալով տրանսպորտի ուշացումը վերականգնման աշխատանքներից վճռական վերաշինության ու ռացիոնալացմանն անցնելու գործում, պետք է կրկնակի ուշադրություն դարձնենք տրանսպորտի տնտեսության հիմնական վերակառուցման և իր աշխատանքների ռացիոնալացման՝ ըստ այն յերկիրների տիպի, որոնք տեխնիկայի տեսակետից ել ավելի առաջ են և միաժամանակ այն ավելի լրիվ կերպով հարմարեցնենք սպառողների պահանջներին։ Զրային տրանսպորտի նկատմամբ այս միջոցները հնգամյա ծրա-

գրում պետք է առանձնապես հայտնաբերվեն այն չափով, ինչ չափով յերկաթուղիների ծանրաբեռնումը համաձայն առաջ է քաշում ջրային տրանսպորտը լրիվ ոգտագործելու և ջրային փոխադրությունները յերկաթուղային փոխադրությունների հետ զուգորդելու խնդիրը։

Տրանսպորտային տնտեսության մեջ հիմնական մուծումների աղբյուր պետք է հանդիսանան պետական բյուջեի միջոցները և առանձնապես ու գլխավորապես սեփական կուտակումների մեծացումը՝ փոխադրությունների ինքնարժեքն իջեցնելու և վոչ-արտադրողական ծախքերի կրճատման միջոցով։

Առանձին ուշադրություն պետք է դարձնել տեղական տրանսպորտի զարգացմանը, թե՛ ճանապարհների շինարարության և թե՛ փոխադրության միջոցների մեքենայացման ուղղությամբ՝ առաջին հերթին այն շրջաններում, ուր զարգացած է սպրանքային տնտեսությունը։ Խորհրդային իշխանության տեղական մարմինների հատուկ ուշադրությունը պետք է դարձնել այս պրոբլեմի լուծմանը՝ թե՛ տեղական բընակչության և թե՛ տեղական խորհուրդների ուժերն ու միջոցները մասնակից անելու ճանապարհով, վորովհետև տեղական տրանսպորտի անբավարար զարգացումը գյուղի տեխնիկական ու կուլտուրական հետամնացության կարևորագույն պատճառներից մեկն է հանդիսանում։

7. **Գյուղատնտեսության** ասպարիզում ծրագիրը կազմելիս՝ յելակետ պետք է ունենալ գյուղատնտեսության ընդհանուր վերելքի կատեգորիկ անհրաժեշտությունը (առաջին հերթին բերքատվության բարձրացումն ու ցանքսատարածության ընդարձակումը), և թե՛ տնտեսության հիմնական տարրերի ճիշտ զուգորդումը, այսինքն՝ թե՛ շրջանային և թե՛ ճյուղային բնագավառներում (հացահատիկային մշակույթներ, տեխնիկական մշակույթներ և անասնաբուծություն), ըստ վորում, գյուղատնտեսության այդ ճյուղերն այն աստիճան արագ պետք է զարգանան վոր 1. ապահովեն լայն մասսաների սպառման ընդարձակումը, 2. ապահովեն արտածման այնպիսի զարգացում, վոր հնգամյա ծրագրում կապված լինի ներմուծման կարիքների և արժութային ռեսուրսների կուտակման հետ, 3. մեծացնել արդյունաբերության պահանջի բավարարումը սեփական հում նյութերով։ Գյուղատնտեսական սպրանքների քաղաքականության տապարիզում, հնգամյա ծրագիրը յելակետ պետք է ունենա գյուղատնտեսության առանձին ճյուղերի զարգացման ընդգավառի կայուն ու ծրագրին համապատասխանող արտադրական, յերկրի սեփական սպառման և արտածման հարաբերակցություններ սահմանելու անհրաժեշտությունը։ Ռեսուրսների բաշխումը գյուղատնտեսության զանազան ճյուղերի միջև, բացի վերոհիշյալ մոմենտներից, վորոշվում է նաև բանվոր ձեռքի քանակի և այս վերջինիս ռեալ կերպով ոգտագործելու միջև գոյություն ունեցող դիսպրոպորցիան վերացնելու անհրաժեշտությամբ. այստեղից էլ բղխում է **մեծ աշխատանք պահանջող մշակույթների** զարգացումն ուժեղացնելու և **գյուղատնտեսության** արագ **ինդուստրացման** անհրաժեշտությունն, առաջին հերթին՝ գյուղատնտեսական արդյունքների սկզբնական մշակման տեսակետից։

Այստեղից էլ բղխում է գյուղատնտեսության

տեխնիկայի պրոբլեմներին ընդհանուր կերպով մոտենալու անթույլատրելիությունն ու հացահատիկային մշակույթների շրջանների զատման (տրակտոր, մեքենա, ընտրովի սերմեր և այլն), ինտենսիվ տեխնիկական մշակույթների շրջանների զատման (հողի բարելավումը, ճահիճների չորացում և այլն), և վերջապես, անասնաբուծական շրջանների զատման անհրաժեշտությունը (ցեղի աղնվացում և վաճառքի կազմակերպում)։ Ծրագիրը մասնավորապես նկատի պետք է ունենա ցորենի ու զարու ցանքատարածությունների այնպիսի ընդարձակում, այդ արդյունքների բերքատվության բարձրացումն ու տպրանք դառնալու ընդարձակումն այն աստիճան, որ ապահովեր յերկրի ներսում զարգացող պահանջներն ու տրտածման անհրաժեշտ չափը։ Միաժամանակ յերկրի անտառային հարստությունները ճիշտ ու լրիվ ոգտագործելու նպատակով ծրագիրը անտառային անտեսության ապարիզում, մանավանդ այս տնտեսությունը ռացիոնալ կերպով վարելու ընդգավառում, պետք է մի շարք միջոցառություններ ի նկատի ունենա (անտառների բարելավման, անտառամշակույթի ու անտառաշինարարական աշխատանքներ)։ Թե գյուղացիների իսկ կողմից և թե պետական բյուջեյի կողմից ծրագիրը պետք է նկատի ունենա գյուղատնտեսության մեջ դնելու **հիմնական մուծումներ**, որոնք ուղղված լինեն գյուղատնտեսության մեքենացման և ջրաշխական առաջնակարգ աշխատանքներ անցկացնելուն ու մելիորատիվ աշխատանքներ անցկացնելուն ընդհանրապես, ըստ որում, առանձին ուշադրություն պետք է դարձնել այն աշխատանքներին, որոնք կապ ունեն հնարավոր ան-

բերրիությունները կանխելու հետ։ Ծրագիրը պետք է նկատի ունենա այնպիսի միջոցներ, որ գյուղին գյուղատնտեսական բարդ մեքենաներ, մանավանդ, տրակտորներ մատակարարեն, մի հանգամանք, որ մեր պայմաններում՝ գյուղատնտեսական արտադրության կոլլեկտիվացումն ուժեղացնելու միջոցներից մեկն է հանդիսանում։

Հնգամյա ծրագրով պետք է նկատի առնել **հողաշինարարության** աշխատանքների ուժեղացում, այնպիսի ուժեղացում, որ թե ամբողջ գյուղատնտեսությունն ապրիկուլտուրայի բարձր աստիճանին ընդհանուր կերպով անցնելու և թե տնտեսավարության կոլլեկտիվ ձևերի խորացման ու կուլակների դեմ ուղղված կռվում չքավորների և միջակների շահերի ապահովության նախապայմանն է հանդիսանում։ Պետք է կազմել բնակչության տեղափոխության միջոցների ծրագիր և այդ ծրագրի հիման վրա ուժեղացնել հեղափոխության աշխատանքները, այն տեղափոխության, որը նպաստում է գյուղատնտեսության արտադրողականության ուժերի վերելքին ու բարելավելով գյուղացիության չքավոր ու սակավունևոր խմբակների վիճակը, կնպաստի «ագրարային գերբնակության» նվազեցմանը։

Ծրագիրը յելակետ պետք է ունենա կուսակցության դասակարգային հիմնական իրագրումը, այն է՝ չքավորին հենարան ունենալու քաղաքականությունը միջակի հետ ամուր դաշինքի ու կուլակի վրա հարձակվելու քաղաքականությունը։ Ուստի ծրագիրը յելակետ պետք է ունենա **կոոպերացիայի** ուժանդակությունը (ընդ սմին, վճռականորեն ժխտելով կապի-

տալը կոոպերացիայից հանելու ոպպոզիցիոն առաջարկը, մի բան, վոր հարված կլիներ Լենինի ամբողջ կոոպերատիվ ծրագրին), ծրագիրը չելակետ պետք է ունենա **Ներկոոպերատիվ** քաղաքականությունը (սակավազորների վաբկավորում, պայքար կուլակային մթոումների դեմ, մեքենական ընկերությունների աստիճանաբար զարգացում պատշաճ քաղաքականություն և այլն), այնուհետև, ծրագիրը չելակետ պետք է ունենա այն, վոր, **սպառողական** կոոպերացիայի ըստ ամենայնի զարգացմանը զուգընթաց, ներկայումս անհրաժեշտ է մեծապես նպաստել **արտադրական** կոոպերացման կենսունակ բոլոր ձևերին (կոմմունաներ, կոլլեկտիվ տնտեսություններ, արտելներ, արտադրական ընկերություններ, կոոպերատիվ գործարաններ և այլն), ինչպես և նպաստել խորհրդային տնտեսություններին, վորոնք հրամայողական կերպով ավելի բարձր աստիճանի վրա պետք է դրվեն։

8. Փոխանակությունը կազմակերպելու ասպարիզում ապրանքաշրջանառության հանրայնացած ճյուղի հետագա զարգացմանը ու ռացիոնալացման միջոցով, սոցիալիստական շինարարության կարևորագույն խնդիրներ են հանդիսանում **ՇՈՒԿԱՅԻ ԱՇԱՐԽԻԱՅԻ** ու նյութական միջոցների ծախսելու մեջ շռայլումները հանելու **հագթահարումը**, այն շռայլումների, վոր տուկ են բաշխման կապիտալիստական յեղանակին։

Շրջանառության հանրայնացած ճյուղը ժամանակավոր կապիտալը վտարելու հաշվին ընդարձակելով, առևտրական ցանցի ռացիոնալացման ու փոխանակության ասպարիզում վոչ-արտադրողական ծախսերի առավելագույն կրճատման միջոցով ապրանքաշրջանառության մեջ ծրագրային սկզբունք մտցնելով, կամրացնի բաշխման սոցիալական նոր սիստեմի տնտեսական հսկայական առավելություններն ու հետագայում սոցիալիստական շինարարության հաջողությունների համեմատ մթերքների սոցիալիստական բաշխման ապպարատ կդառնա։ Մասնավորի հետագա վտարումը շուկայից, կոոպերացիայի ու պետական առևտրի կողմից, պետք է տեղի ունենա այդ կոոպերացիայի ու առևտրի իսկական կազմակերպչական ու նյութական հնարավորություններից յելնելով այնպես, վոր այդ վտարումն իր յետևից ապրանքատեղափոխության ցանցի քայքայում ու շուկայի հայթայթման ընդհատումներ չբերի։

Կոոպերացիայի ու պետառևտրի ուժեղացումն ու զարգացումը, վորոնք մեծ չափով պլանային ղեկավարության են յենթարկվում, իրենց հերթին պետք է հեշտացնեն գների ու բյուջեյական ինդեքսի իջեցման և մանրածախի ու մեծածախի մկրատի վերացման համար մղվող պայքարը։

Առանձին ուշադրություն պետք է դարձնել **կոոպերացիային**։ Կոոպերացիայի առջև ծառացած է բնակչության բոլոր մեծ շրջաններն ել ավելի մեծ չափով ընդգրկելու խնդիրը։ Կոոպերացիան պետք է դառնա ապրանքն արտադրողից սպառողի մոտ փոխադրելու ամենաեժան ու ռացիոնալ ապպարատը։ Կազմակերպված մասսաներ տնտեսական աշխատանքների մեջ քաշելու միջոցով՝ կոոպերացիան պետք է նպաստի բնակչության սպառողական պահանջի հաշվառմանն ու պատվերների սիստեմի միջոցով արդյունաբերությանն իր ժամանակին պահանջներ ներկայացնելով, այդ պահանջների նորմալ բավարարմանը։

Յերկրի արտադրողական ուժերի զարգացման շահերը միջոցների այնպիսի բաշխում են պահանջում, վորոնց ժամանակ ըստ հնարավորության այդ միջոցների մեծ մասն արտադրության մեջ դրվի և ըստ հնարավորության փոքր մասն ապրանք փոխադրող ցանցի մեջ մնա։ Վերադիր ծախսերի իջեցման և ամեն մի առևտրական միավորի աշխատանքների խտացման զուգընթաց՝ առևտրի շրջանառության արագացումը, ապրանք փոխադրող ճանապարհների հեշտացումը, կարճացումը և ուղղագծումը այդ խնդրի լուծման հիմնական մեթոդներն են հանդիսանում։ Պլանային ղեկավարության առավելությունները թույլ են տալիս խորհրդային տնտեսությանն ապրանքների պաշարի զգալիորեն քիչ նորմայով կառավարվել քան այդ անհրաժեշտ է կապիտալիստական տնտեսություններում, մի բան, վոր ամբողջ ժողովրդական տնտեսության տեսակետից իր ամբողջությամբ զգալի տնտեսում է հանդիսանում։ Սակայն ծրագիրն ի նկատի պետք է ունենա **ապրանքների** այնպիսի **պաշար**, վոր բավարարեր թե շուկայի հայթայթումն առանց ընդհատումների և թե հարթեր շուկայի կոնյունկտուրայի սեզոնային տատանումները։

Վերջապես, ծրագիրը բաշխման ապպարատի նոր՝ տեխնիկական ավելի բարձր բազա ստեղծելու և ընդլայնելու համար բավարար հատուցումներ պետք է նկատի ունենա (պահեստների, ելևատորների, սառցարանների և այլն նոր շինարարություն)։

9. **Դրամական շրջանառության ու վարկի ապպարիզում** ծրագիրը յելակետ պետք է ունենա **յերվոնեցի գնողունակության** սիստեմատիկ **բարձրացման**

անհրաժեշտությունը։ Թղթադրամի եմիսսիան պետք է սահմանափակվի այն չափով, ինչ չափով պայմանավորված է ապրանքաշրջանառության զարգացումը։

Միաժամանակ, բյուջեյի մշտական ամման դեպքում, բյուջեյի աշխատանքների մեջ պետք է ծրագրային մեծ սկզբունք մտցնել և բյուջեյական զգալի ռեզերվներ ստեղծել, այնպիսի ռեզերվներ, վորոնք ապահովեին թե յերկրի ներսում և թե արտաքին շուկայում տեղի ունեցող բավականին ապտտ մանյովրները։

Վարկային սիստեմը հարաճուն կերպով զենք է դառնում տնտեսության սոցիալիստական ճյուղի ամրապնդման ու, մասնավորապես, գյուղի չքավոր և միջակ խավերի ոժանդակման։

Ծրագիրը պետք է նկատի ունենա այնպիսի միջոցներ, վորոնք **մաՏ խնայողությունները** պետական վարկի ասպարեզ քաշեն։ Այսպիսի մի ներգրավում մի կողմից ինդուստրացման համար լրացուցիչ ռեսուրսներ տալով, միաժամանակ, առաջիկա հինգ տարվա ընթացքում, պետք է նպաստի շուկայում հավասարակշռություն սահմանելու արդյունաբերական ապրանքների վճարունակ պահանջի և այդ ապրանքների առաջարկի միջև։

10. Հնգամյա ծրագիրն առանձին ուշադրություն պետք է դարձնի ազգային հետամնաց ծայրագավառների ու հետամնաց շրջանների եկոնոմիկայի և կուլտուրայի բարձրացման խնդիրներին՝ յելակետ ունենալով այդ յերկիրների տնտեսական ու կուլտուրական հետամնացության սատիճանական լիկվիդացիայի անհրաժեշտությունը, պատշաճ կերպով աչքի առաջ ու-

նենալով այդ յերկիրների եկոնոմիկայի ու կուլտուրայի ավելի արագ թափը, յելակետ ունենալով այդ շրջանների կարիքների ու պահանջների կապը Միության պահանջների ու կարիքների հետ։

11. Հնգամյա ծրագրի կենտրոնական պրոբլեմների ճիշտ լուծումը ժողովրդական յեկամուտի ու իր բաշխման այնպիսի աճում և պայմանավորում, վոր ապահովում է բանվոր դասակարգի, չքավոր ու միջակ գյուղացիության բարորությունը՝ վոչ ժողովրդական տնտեսության զարգացման թափը առավելագույն հնարավորության չափով պահպանելու դեպքում։

Բանվոր դասակարգի թվական աճումը և աշխատանքի արտադրողականության բարձրացումը՝ արդյունաբերության հիմնական վերակառուցման պայմաններում, այն վերակառուցման, վոր ավելացնում է ամեն մի բանվորին ընկնող արտադրանքը, պրոլետարական պետության պայմաններում մինչև յոթժամյա բանվորական որվա կրճատում, աշխատանքի պահպանության միջոցների ուժեղացում և առաջ բերում, այնպիսի ուժեղացում, վոր ուղղված է ձեռնարկությունների աշխատանքի պայմանների առողջացման և աշխատավարձի հետագա աճման, մանավանդ նրա ռեալ արտահայտման ինտենսիվ պայմաններում։ Ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքն ապահովում է բանվորական մասսաների նյութական ու կուլտուրական մյուս կարիքների վրա արվող ծախսերի հետագա հնարավոր ավելացումը, առաջին հերթին — բնակարանային շինարարության վրա, դպրոցներ, տեխնիկումներ, ակումբներ, հանրային սննդի կազմակերպություն, մանկական մսուրներ ու մանկատներ

շինելու վրա և բանվորական թաղերի բարեկարգության վրա։ Այս բոլորը պրոֆ-տեխնիկական կրթական հիմնարկների ցանցի զարգացման, մասնավորապես ֆաբրիկ-գործարանային դպրոցների ցանցի զարգացման և ժողովրդական վոչ լուսավորությունը սոցիալիստական շինարարության պահանջներին հարմարեցնելու հետ միաժամանակ, բանվոր մասսաների կուլտուրական մակարդակի արագ բարձրացման, սոցիալիզմի կառուցմանը մասնակցելու, նրանց հարատև ակտիվության նախապայման են ստեղծում և այդպիսով՝ պրոլետարական դիկտատուրայի հիմնական բազայի ամրապնդում առաջ բերում։ Այս վիսով ստեղծվում են նաև այնպիսի պայմաններ, վորոնք ուղղված են՝ յերիտասարդ բանվորության վիճակը սիստեմատիկորեն բարելավելուն (գործազրկության նվազում, բրոնիայի կիրառում ու կանոնավորում, աշխատավարձի բարձրացում և այլն) նրա կուլտուրական մակարդակը բարձրացնելուն և նրանից տեխնիքապես ու կուլտուր-քաղաքականապես զարգացած պրոլետարների, սոցիալիզմի գիտակից շինարարների նոր կադրեր պատրաստելուն։ Գյուղատնտեսության զարգացումը, վերջինիս մեքենացման և ինտենսիֆիկացիայի միջոցով, այդ տնտեսությունը տնտեսավարության տեխնիքական առավել բարձրության հասցնել ու հատուկ սոցիալական ձևերի փոխելը, գյուղական բընակչության կոոպերացումը, պետական ու վարկային ոժանդակությունները բացառապես չքավոր ու միջակ տնտեսություններին ուղղելն ու գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքների գների ճիշտ քաղաքականությունը, — այս բոլորը, մեծացնելով

գյուղական տնտեսությունների յեկամուտն, ապահովում է **ամենայչափավոր ու միջակ գյուղացիության կյանքի մակարդակի** նյութական ու կուլտուրական մշտական բարձրացումը, կուլակի շահագործական միտումները վճռականորեն սահմանափակելու պայմաններում։ Այս բանը բաղա յե ստեղծում գյուղի կուլտուրական կյանքի ընդհանուր բարձրացման, լուսավորական ու կուլտուրական աշխատանքի զարգացման, գյուղական բնակչության մասսաների մեջ գյուղատնտեսական ու տեխնիկական գիտությունների տարածման համար։ Քաղաքի ու գյուղի կյանքի մակարդակի մերձեցումը ճանապարհ է բաց անում վերացնելու այն ճեղքվածքը, որ կապիտալիզմն է ստեղծել քաղաքի և գյուղի միջև ու ամրապնդում է բանվոր դասակարգի ու գյուղացիության շաղկապը, քաշելով վերջինիս դեպի զարգացման սոցիալիստական ուղին ու կցելով սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակցությանն ամբողջապես։

12. Սոցիալիստական շինարարության խնդիրների հետևանքով, հնգամյա ծրագիրը պետք է հաշվի առնի քաղաքի և գյուղի բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը, ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրայի զարգացումը և իբրև ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության ընդհանուր ծրագրի անբաժան մաս՝ կուլտուրական շինարարության ծրագիրը յերկրի ինդուստրացման հետ կապի։ Կուլտուրական շինարարության ծրագրի հիմքը պիտի հանդիսանան ժողովրդական կրթության այն խնդիրները, որոնք աշխատավորների լայն մասսաների կուլտուրական զարգացումն են ապահովում (ընդհանուր ուսուցում, անգրագիտության վերացում, պրոֆտեխնիկական մասսայական կրթությունն և այլն) և որակյալ մասնագետներ ու գիտական աշխատավորներ պատրաստելու խնդիրը։

13. Արձանագրելով ծրագրված խնդիրներ կազմելու գործում աչքի ընկնող առաջադիմությունը, համագումարն անհրաժեշտ է գտնում՝ ծրագրման աճող բարդության ու այդ ծրագրման աճող գործնական նշանակության հետևանքով պլանային դիսցիպլինայի ուժեղացում, պլանային մարմինների ամրապնդում ու պլանային ղեկավարության բարելավում։ Յերկրի ժողովրդական տնտեսության կյանքի պլանային ղեկավարությունն ել ավելի լրիվ ընդգրկելու նպատակով, համագումարն անհրաժեշտ է գտնում առաջիկա հնգամյակի ընթացքում ավարտել յերկրի շրջանացնումը։

III. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ, ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԵՐԸ

Վերոհիշյալ խնդիրները լուծելու նպատակով, Համ. Կ. Կ.-ի (բ) XV համագումարն անհրաժեշտ է գտնում անցկացնել մի շարք դիրեկտիվներ, որոնք միայն և միայն կարող են ապահովել ժողովրդական տնտեսության պատճաշ ծրագրի իրականացումը։

1. Բոլորի կենտրոնը պետք է հանդիսանան **ռացիոնալացման** ամենայեռանդուն և ամենալարված աշխատանքները՝ ինդուստրիայի ռացիոնալացման, առաջին հերթին՝ առևտրական ապպարատի ռացիոնալացման, պետական ապպարատի և այլն ռացիոնալացման աշխատանքները։

Այս ռացիոնալացումը չի կարող. իրականանալ առանց գիտության ու գիտական տեխնիկայի դերի բարձրացման։ Գիտական-հետազոտական ինդուստրիալ ինստիտուտների ու ֆաբրիկ-գործարանային լաբորատորիաների ցանցի լայն ծավալում, գիտական-ակադեմիական աշխատանքի վճռական մերձեցում արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը, արևմտա-եվրոպական և ամերիկական գիտական ու գիտական-արդյունաբերական փորձի ամենալայն ոգտագործում, բոլոր նորագույն գյուտերի ու հնարագիտությունների, նոր ինդուստրիաների, նոր հում նյութի, նոր մետաղների և այլն, ինչպես և կազմակերպչական նոր ձևերի մանրազնին ուսումնասիրությունը, ահա այս բոլորը պետք է դրվեն իբրև որվա հերթական խնդիրներ։ Ընդ սմին, չպետք է կանգ առնել այն ծախսերի առաջ, վորոնք արվում են արտադրության բարելավման մեթոդներ կիրառելու փորձերի վրա, ընդ վորում ամեն կերպ պաշտպանելով թե բանվորների և թե տեխնիկ ճարտարագետների նախաձեռնությունը։ Այս պատճառով, պետք է ամեն տեսակ ջանք թափել բարելավելու տեխնիկական ու գյուղատնտեսական կրթությունը և ամենաարագ կերպով վորակյալ ու գիտական ուժերի այնպիսի կադր պատրաստելու, վորոնք համաշխարհային գիտության ու տեխնիկայի մակարդակի վրա գտնվելով՝ սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակցողը լինեին։

2. Ժողովրդական ամբողջ տնտեսության ռացիոնալացման այդ աշխատանքի գլխավոր ու վճռական նախապայմանը բանվորական ու գյուղացիական մասսաների այդ աշխատանքի մեջ լայն կերպով բա-

ցելն է։ Բոլոր կուսակցական, խորհրդային, արհեստակցական, կոոպերատիվ և այլ կազմակերպությունները պետք է իրենց նպատակ դնեն ինտենսիվ պրոպագանդը և այն բանի բացատրությունը, թե աշխատավորության վերջնական հաղթանակը հնարավոր է վոչ-արտադրական ծախսերի, անհոգ և անփույթ աշխատանքի, դեպի արտադրության միջոցներն ու իր սեփական աշխատանքն ունեցած անմաքուր և անփույթ վերաբերմունքի, տնտեսության հետամնաց ձևերի դեմ (ինդուստրիալ, յեռադաշտային ցանքսի, արորի և գյուղատնտեսությանը վերաբերող այլ բաների հնացած տեխնիկա) ամենավճռական կերպով պայքարելով միայն։ Պետք է ամենավճռական պայքար մղել պետական և տնտեսական ապպարատի բյուրոկրատիզմի դեմ, հետամնացության, ավանդամոլության, պոչկանական (խվոստիստական) տրամադրությունների դեմ թե՛ մասսաների մեջ, թե՛ կազմակերպությունների մեջ և թե այդ կազմակերպությունները ղեկավարող կադրի մեջ, լինեն դրանք պետական ապարատի, արհեստակցական միությունների, կոոպերացիայի որգաններ, կամ թե անգամ կուսակցության խմբիններ։ Պետք է յեռանդուն կերպով պայքարել կենցաղը վճռականորեն վերակառուցելու համար, պայքարել կուլտուրայի համար, հարբեցողության դեմ, անգրագիտությունը համառորեն վերացնելու համար, բանվորական ու գյուղացիական մասսաների աշխատանքի գիտակցության և աշխատանքի դիսցիպլինայի համար։

3. Ընդ սմին, առանձին կարևոր խնդիրը բաժին է ընկնում պրոլետարիատի արհեստակցական կազմա-

կերպություններին՝ սկսած իրենց սորին ողակներից մինչև բարձր ողակները։ Անողոք կռիվ մղելով ռացիոնալացման բոլոր այլասերումների դեմ, պահպան հանդիսանալով բանվոր դասակարգի առորյա կարիքներին, ամենայեռանդուն հակահարված տալով թղթերի ամեն տեսակ կուտակումներին ու բյուրոկրատիզմին, ուր եվ որ այդ յերևույթները նկատվելիս լինեն, խիզախորեն հաղթահարելով մասսաների ստեղծագործական նախաձեռնության թափը թուլացնելու ամեն տեսակի փորձ, պրոլետարական շարքերն ամենալայն կերպով քաշելով շինարարության մեծ աշխատանքի հոսանքի մեջ և ըստ ամենայնի զարգացնելով այդ նախաձեռնությունը, արհեստակցական միությունները միևնույն ժամանակ էլ ավելի մեծ չափով պետք է մեր արդյունաբերության վերանորոգման **հիմնական լծակը** դառնան։ Բանվորական որը կրճատելու և (յերկրի ռեսուրսների և արդյունաբերության վերելքի համեմատ) աշխատավարձը բարձրացնելու քաղաքականության հիման վրա, արհեստակցական միությունները ըստ ամենայնի (ֆաբրիկա-գործարանային կոմիտեների, արտադրական խորհրդակցությունների ու կոնֆերենցիաների, վերահսկիչ հանձնաժողովների և այլն միջոցով) պետք է ոժանդակեն պրոլետարական մասսաների աշխատանքի դաստիարակության, ֆաբրիկաներում ու գործարաններում աշխատանքը կազմակերպելու, ֆաբրիկա-գործարանային ներքին կարգ ու կանոնը բարելավելու և ձեռնարկությունների տեխնիկան ռացիոնալացնելու գործին։

Արհեստակցական միությունները պետք է ոժանդակեն պրոլետարիատի հետամնաց խավերին՝ մինչև

վերջ գիտակցելու, որ հենց պրոլետարիատն իսկ, իբրև դասակարգ, ինդուստրիայի տերն ե հանդիսանում, որ նրա առջև խոշոր հեռանկարներ կբացվեն, յեթե անդուլ ու անշեղ առաջ գնա յերկրի ինդուստրացումը, իր տնտեսության ռացիոնալացումը, սոցիալիզմի շինարարությունը։

4. Յերկրի տնտեսական վերելքի խնդրի շուրջը հարաճուն չափով մոբիլիզացիայի պետք է յենթարկել **գյուղացիության** լայն մասսաներ, չքավոր ու միջակ գյուղացիներ, առաջին հերթին՝ **կոոպերացիայի** միջոցով։ Պետք է վճռականորեն ու համարձակ պաշտանել չքավոր ու միջակ մասսաների նախաձեռնությունը՝ կոլեկտիվ տնտեսության զանազան ձևեր, կուլտուրական ոջախներ ստեղծել, ագրոնոմիական ոգնության ու հողաշինարարության գործում ոգնություն կազմակերպելու, կոոպերատիվ ապպարատի ռացիոնալացման, կոոպերացված մասսաների կողմից կոոպերատիվ մարմինների, գների և այլ բաների վրա հսկելու գործի ասպարիզում։ Պետք է վճռականորեն ու համարձակ զարթեցնել ու պաշտպանել մասսաների նախաձեռնությունը գյուղատնտեսության մեքենացման, այդ տնտեսության ինտենսիֆիկացիայի, մեծ աշխատանք պահանջող նոր կուլտուրաներ մացնելու, կոոպերատիվ գործարաններ և այլն կառուցելու ասպարիզում։

5. Համագումարն իր ուշադրությունն է դարձնում **կոմսերիսմիության** խոշոր դերին ու նրա առաջ ծառացած խնդիրներին։ Կոմսերիսմիությունը պետք է նախաձեռնող և իրականացնող հանդիսանա քաղաքի և գյուղի տնտեսության, աշխատանքի ու կենցաղի ռացիոնալացման նոր ձեռնարկումներին։

Տեխնիքական-տնտեսական ու կուլտուրական հեռանձնացության դեմ մղվող կռվի ճակատում կուսակցության քաղաքականությունն իրականացնելու գործում կոմկերիտմիությունը պետք է կուսակցության գլխավոր ողնաներից մեկը հանդիսանա։ Կոմկերիտմիությունը պրոլետարական ու չքավոր-միջակ գյուղացիության լայն մասսաների յերիտասարդության վերադաստիարակման լծակը պետք է հանդիսանա սոցիալիզմի շինարարության ու թե յերկրից դուրս և թե յերկրի ներսում գանվող բոլոր թշնամիներից այդ շինարարությունը պաշտպանելու վրդով։

6. Համագումարը կուսակցության ուշադրությունն է հրավիրում նաև սոցիալիզմի կառուցման ու տնտեսության ռացիոնալացման գործի մեջ կին պրոլետարիատի լայն խավեր ու գեղջկուհիների առաջավոր մասսաններ ել ավելի ուժեղ թափով քաշելու վրդջ կարևորության վրա, ընդ սին ուժեղացնելով թե բանվորուհու աշխատանքի վարակը բարձրացնելու և թե նրա կենցաղային աղատագրման աշխատանքներն ուժեղացնելու միջոցների կիրառումը։ Այս խնդրի լուծման չափով միայն իսկապես սոցիալիստական ռելսների վրա կվերակառուցվի մեր յերկրի լայն մասսաների թե վրդջ աշխատանքի և թե կենցաղային կառուցվածքը։

7. Առաջիկա հնգամյա ժամանակաշրջանում արդ-տնտեսական շինարարության ասպարիզում յերկրի առջև ծառացած խնդիրների վիթխարիության պատճառով, համագումարն ընդգծում է, վոր կուսակցության անդամները, ինչ պոստում ել նրանք լինեն, այսինքն՝ սկսած հատոցի մոտ կանգնողից մինչև յերկիրը ղեկավարող բարձր մարմինները,—որինակ պետք է հանդիսանան աշխատանքի հերոսության, աշխատանքի դիսցիպլինայի, լարված, հստակ ու ռացիոնալ կերպով դրված աշխատանքի։

Համագումարը, հաստատելով Կենտրոնական Կոմիտեյի ընթացիկ ժամանակաշրջանի տնտեսական քաղաքականության ճշտությունը, կարծում է, վոր հընդամյա ծրագրի իրականացումը, վոր զգալի չափով պետք է բարձրացնի մասսաների բարեկեցության մակարդակը և ամրապնդի սոցիալիզմի դիրքերը, ամենից առաջ կախված է **կուսակցության իսկ** համերաշխությունից, միաձուլությունից ու ստեղծագործական եներգիայից։ Այս տեսակետից, համագումարը վճռականորեն դատապարտում է Տրոցկու ոպպոզիցիոն ֆրակցիայի գործունեությունը, վոր կաղմալուծում է շինարարական մեծ աշխատանքը, խանգարում է այդ աշխատանքի ընթացքը, փորձում է կաղմալուծել նաև խորհրդային ապպարատը։

Համագումարը վճռականորեն դատապարտում է ոպպոզիցիայի տնտեսական վարքագիծը։ Հակառակ Լենինի պնդումների, թե կուսակցության ճիշտ քաղաքականության դեպքում սոցիալիզմի կատարյալ հաղթանակը մեր յերկրում հնարավոր է, յեթե միայն արտաքին հարձակումները չխանգարեն, ոպպոզիցիայի յելակետը սոցիալիզմի հաղթանակի անկարելիությունն է։ Ուստի համոզված ու կշռադատված քաղաքականության փոխարեն ոպպոզիցիան կուսակցությանը կամ չափազանց անսկզբունք տատանումներ է առաջարկում, կամ այնպիսի քաղաքականություն, վոր լենինիզմի հետ վոչ մի առնչություն չունի։ Տնտեսության

ռացիոնալացման ասպարիզում տրոցկիստական ոպպոզիցիան, մեղադրելով իր քաղաքականության հակառակորդներին «ազիտատորական մերձեցման» մեջ, տատանվում էր «խիստ համակենտրոնացում» լոզունգից ու բանվորների վրա ճնշում գործադրելուց (փակելով պրոլետարական ինդուստրիայի այնպիսի տիտաններ, ինչպես Պուտիլովյան գործարանն է, Բրյանսկի գործարանն է և այլն), ընդհուպ մինչև ռացիոնալացման գործի ըստ էության բացասումը։

Լենինի ամենակարևոր սկզբունքը, որ զողջ տնտեսական օրիենտացիայի հիմքն է հանդիսանում, այսինքն՝ այն սկզբունքը, թե պրոլետարական ինդուստրիան գյուղացիությանն ավելի աժան ապրանքներ պիտի տա, բան կապիտալիստական իրավակարգն էր տալիս նրան. այդ սկզբունքը ոպպոզիցիան բացահայտ կերպով վոտնահարեց։ Լենինին միանգամայն հակառակ՝ ոպպոզիցիան այնպիսի սկզբունք էր առաջադրում թե գյուղացիներից ավելի շատ պետք է առնել քան հին իրավակարգն էր առնում, թե պետք է առանց այն էլ շատ բարձր գների բարձրացված քաղաքականություն վարել։ Ամենաանողոք քննադատության ենթարկելով միայն ոպպոզիցիան ստիպված չեղավ նահանջել այդ քաղաքականությունից, որ գյուղացիության հետ կապերը խզելու, բանվոր սպասողին թալանելու, գյուղի կուլակին ոժանդակելու քաղաքականություն, արտոնյալ մակաբուծության և պետապարատի արդյունաբերական բյուրոկրատական վերաբաշխման քաղաքականություն է հանդիսանում։ Լենինի զոռզ կոոպերատիվ ծրագրին միանգամայն ու սկզբունքորեն հակառակ կերպով, այն ծրագրին,

որ պնդում էր կոոպերացիայի **Ֆինանսավորումը**, ոպպոզիցիան կոոպերատիվ կապիտալն առևտրական ոպպոզիցիան կոոպերատիվ կապիտալն առևտրական սպասարեգից հանելու սկզբունք էր առաջ քաշում, կարծելով, թե այդպիսով կթեթևացնի ինդուստրիայի վիճակը։ Սակայն բյուրոկրատիկ ադմինիստրատիվ այդ քաղաքականությունը գյուղացիության ռեալ ու կենդանի շաղկապի գործը **մասնավոր կապիտալի** ձեռքը կտար ու կհարվածեր գյուղացիների տնտեսական ինքնագործունեության զարգացմանը, կփակեր դեպի սոցիալիզմ տանող նրանց ճանապարհը, պետական սոցիալիզմ տանող նրանց ճանապարհը, պետական արդյունաբերության ու գյուղացիության միջև դնելով մասնավոր կապիտալն իբրև շրջանառության պրոցեսի տեր ու անտրեն։ Միանգամայն հակասելով Լենինի տեր ու անտրեն։ Միանգամայն հակասելով Լենինի «գերինդուստրիան» տեսակետին, մատնանշելով գյուղացիական տրացման» տեսակետից, մատնանշելով գյուղացիական զողջ հիմնական մասսայի հետ շարժվելու անհրաժեշտությունը, սրբում էր «գյուղացիական սահմանափակման» թեթևամիտ քարոզները, տրոցկիստական ոպպոզիցիան առաջարկում է դիմել առանց այդ մասսայի՝ ամբողջությամբ բաժանելով «սահմանափակման» վերաբերյալ այն թեզը, որ ծաղրել է Լենինը, և անխուսափելիորեն տապալման դատապարտելով կուսակցության քաղաքականությունը։ Այստեղից հանելով «վերասերման», «տերմիդորի» թեզերի և ուստրյալովյան մենշևիկական արսենալից փոխ առած այլ սկզբունքներ, ոպպոզիցիան փորձում է գաղափարական ուղղորդել բանվոր դասակարգը, սոցիալիստական յեռանդային շինարարության բալշևիկյան ռելսներից անցնելով դեպի այդ շինարարության դասակարգային իսկ էության քննադատական վերաբերմունքի՝ մենշևիկյան ռելսերը։

Արդյունաբերության ռացիոնալացման գործին բացասաբար կամ, լավագույն դեպքում «չեզոքաբար» վերաբերվելով, դեմագոգիական (ամբոխավարական) և ագիտատորական իր ապահանջների մեջ ոպպոզիցիան փորձում է հենվել պրոլետարիատի ել ավելի հետամնաց խավերի նախապաշարումների ու պոչականության վրա, կիսագյուղացիական սպասողական հոգեբանությամբ։ Դեպի ռացիոնալացումն ունեցած ոպպոզիցիայի այս վերաբերմունքից և ոպպոզիցիայի կողմից այս գործի հաջողությանը չհավատալուց բըղխում է ոպպոզիցիայի բացասական վերաբերմունքը 7-ժամյա բանվորական որվա նկատմամբ, որի հաջող իրականացումը կապ ունի ռացիոնալացման համերաշխ ու յեռանդուն կիրարկման հետ։ Այս քաղաքականության օբյեկտիվ արդյունքը կլիներ մեր արդյունաբերության բյուրոկրատիկ դադարը, գյուղացիության դաշնակիցն ու առաջնորդ լինելու փոխարեն պրոլետարիատն սպառող կդառնար, որ նպատակ չի դնում գյուղացիության տնտեսության **վերացնելը**։ Այսպիսի մի քաղաքականություն անխուսափելիորեն պրոլետարիատի դիկտատուրայի կործանման կհասցներ։ Մյուս կողմից՝ ծածկվելով **ինտերնացիոնալիզմի** դրոշակի տակ, ոպպոզիցիան իրականում **ինտերնացիոնալ կապիտալի հեռ** տնտեսական այնպիսի շաղկապ և քարոզում, որ Միության տնտեսական ինքնուրույնության կորստին ու սոցիալիզմի շինարարության տապալման կհասցնի։

Համագումարը հանձնարարում է կենտրոնական Կոմիտեին՝ հնգամյա ծրագրի մշակումն ապահովել այն հաշվով, որ այդ ծրագիրը խորհուրդների ամենամոտիկ համագումարի քննության դրվի, և ապահովի տեղական խորհրդային, արհեստակցական, կուսակցական և այլ կազմակերպությունների ծրագրի նախագիծը մանրազնին ու բազմակողմանի քննության յենթարկելը։

ԲԱՆԱՁԵՎ

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՀԱՄԿԿ (Բ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված է միաձայն)

Լսելով ընկ. Բուխարինի զեկուցումը և քննություն առնելով այն, XV համագումարը հավանություն է տալիս Կոմմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեում ունեցած ՀԱՄԿԿ (բ) պատգամավորության գործունեությանը։ Համագումարն արձանագրում է, որ հաշվետու ժամանակաշրջանը բնորոշվում է թե համաշխարհային կապիտալիստական սիստեմի և թե կապիտալիստական աշխարհի ու ԽՍՀՄ-ի միջև գոյություն ունեցող ամենագլխավոր հակասությունների սրումով և վերջնիս պատճառով՝ պատերազմի վտանգի սրումով, առաջին հերթին՝ ԽՍՀՄ-ի դեմ պատրաստվող պատերազմի վտանգի սպառնալիքով, գաղութային պրոբլեմի խիստ սրումով ընդհանրապես, ու չինական մեծ հեղափոխության զարգացմամբ մասնավորապես, դասակարգային պայքարի նոր սրման սկզբնավորությամբ՝ եվրոպական բանվոր դասակարգի ու բուրժուազիայի միջև։

Կապիտալիզմի մասնակի կայունացումը վոչ մի-

այն չվերացրեց իմպերիալիստական առանձին երկրների ու վերջիններիս խմբակցությունների միջև գոյություն ունեցող հակասությունները, այլ ընդհակառակն, ուժեղացրեց այդ հակասությունների ծավալումը։ Արտադրության զարգացումը, առևտրական կամը։ Արտադրության զարգացումը, դրամական-վարկային մեխանիզմի վերականգնումը, դրամական-վարկային մեխանիզմի կանոնավորումը չափազանց սուր կերպով բուրժուազիայի առաջ են դնում հում նյութերի աղբյուրների սպառման շուկայի, կապիտալի շուկայի պրոբլեմը։ Համաշխարհային կապիտալիզմի կենտրոնի տեղափոխումը Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիայի արդյունաբերության անկումն ու պարազիտական դառնալումը, Գերմանիայի արտադրողական ուժերի զարգացման ու Դաուեսի ծրագրի ճնշման միջև գոյություն ունեցող հակասությունը, Ցեվրոպայի բալկանացումը ու ներքին շուկայի կրճատումը, ահա այս բոլորն ավելի ու ավելի մոտեցնում և անխուսափելի են դարձնում երկրագունդն իմպերիալիստական դիշատիչների մեջ նորից բաժանելու փորձը՝ զինված նոր ընդհանրումներն ու պատերազմական կատաստրոֆները։

Միջազգային կացության ու միջազգային հարաբերությունների ծայր աստիճան սրման զուգընթաց գոյություն ունի դասակարգային հակասությունների դասակարգային պայքարի զգալի զարգացում։ Կա- ու դասակարգային պայքարի զգալի զարգացում։ Կապիտալիստական կայունացումն իրականացվում է ի պիտալիստական կայունացումն իրականացվում է ի հաշիվ բանվոր դասակարգի կյանքի մակարդակը սիստեմատիկորեն իջեցնելու և այդ դասակարգի շահագործումն ուժեղացնելու։ Կայունացման պրոցեսն ընթացակցվում է ֆաշիզմի մի գործազրկությամբ, վոր

մի քանի անգամ գերազանցում է նախապատերազմյան շրջանի գործազրկությունը։ Հարաբերական լուծության կարճատև ժամանակաշրջանից հետո մենք այժմ բանվորական հեղափոխական շարժման նոր վերելք ու բանվորական լայն մասսաների զգալի ձախացում ենք տեսնում։ Այս բոլորը կապիտալիզմի կայունացումը կործանելու ուժեղացող պրոցեսն են վկայում։

Բանվորական մասսաների ձախացմանը II Ինտերնացիոնալի վերնախավերի և արհմիությունների ամստերդամյան միության աջացումն է հակադրված։ Սոցիալ-դեմոկրատիան, վոր բացահայտորեն հրաժարվում եր դասակարգային պայքարից, ամբողջությամբ բուրժուազիայի կողմն անցավ, փորձելով բանվոր դասակարգի մեջ արմատացնել դասակարգային աշխատակցության գաղափարները (այսպես կոչված՝ բանվորական շարժման «ամերիկանացում», արդյունաբերության խաղաղություն» իդեոլոգիա, կոալիցիոն քաղաքականություն) ու խաբելով բանվոր դասակարգին՝ կապիտալիստական լերկիրների ներսում գոյություն ունեցող տնտեսական դեմոկրատիայի միջոցով սոցիալիզմին և իբր թե միջազգային հարաբերությունների բնավառում գոյություն ունեցող խաղաղ կապիտալիզմի նոր ժամանակաշրջանին խաղաղ ճանապարհով (այսպես կոչված Ազգերի Լիգայի դեմոկրատացման ճանապարհով) անցնելու հեռանկարներով։

Սկսված բանվորական շարժման հեղափոխական վերելքի հիման վրա, Կոմունիստական Ինտերնացիոնալի կարևորագույն խնդիրն այն է, վոր միջազգային ռեֆորմիզմի, ընդամին նաև բանվորական միջազգային ճակատի քաղաքականությունը տապալող ու բան-

վորական մասսաներին կոմունիզմի կողմը նվաճելու գործին արգելք հանդիսացող տրոցկիստական ոպպոզիցիայի դեմ գոյություն ունեցող պայքարը սրի։

Համագումարն անհրաժեշտ է գտնում միասնական ճակատի տակտիկայի յեռանդուն ծաղկման ու ռեֆորմիստական բյուրոկրատիայի (գեն. խորհրդի և այլն) սոցիալ-իմպերիալիստական վերնախավերին իրենց դիրքերից հեռացնելու պայքարին զուգընթաց ուժեղացնել արհշարժման միասնականության համար մղվող պայքարը, բանվոր դասակարգի շրջանում ծավալել կոմկուսակցության մասսայական աշխատանքը, աստանձնապես արհմիություններում կատարվող աշխատանքը, ինչպես և ըստամենայնի ամրապնդել Պրոֆինտերնն ու փոքրամասնությունների շարժումը։ Այս պատճառով, համագումարն անհրաժեշտ է գտնում Պրոֆինտերնի ու Համարհմխորհի միջև ավելի սերտ, ավելի ակտիվ կապ հաստատել։

Համաշխարհային կապիտալի հարձակումը բանվոր դասակարգի վրա ավելի ևս խստացած կերպով արտահայտվում է ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ պատրաստելով։ ԽՍՀՄ-ի աղդեցությունն ու հեղափոխականացումը։ ԽՍՀՄ-ի աղդեցությունը կապիտալիստական աշխարհի վրա խոշոր չափով աճել և ուժեղացել է շնորհիվ այն հանգամանքի, վոր հակառակ բուրժուական, սոցիալ դեմոկրատական ու տրոցկիստական բամբասանքի, վողջ աշխարհի աշխատավորության գիտակցության մեջ ԽՍՀՄ-ը կառուցվող սոցիալիզմի յերկիր է անվանվում։ Սոցիալիզմի շինարարությունը ԽՍՀՄ-ում վերջնես տնտեսական վերակառուցումը ներկա մոմենտում համաշխարհային հեղափոխության կարևորա-

գույն տարրն են հանդիսանում։ Համագումարը միանգամայն ճիշտ է գտնում Խորհրդային Միությունը և չինական հեղափոխությունը պաշտպանող այն լոզունգը, վոր, իբրև ընթացիկ մոմենտի գլխավոր լոզունգ, առաջ է քաշված յեղել Կոմմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեյի վերջին պլենումի կողմից։ Վերաբերմունքը դեպի ԽՍՀՄ-ը պաշտպանելու հարցը հեղափոխության և հակահեղափոխության միջև անջրպետ է առաջացնում։ Դեպի ԽՍՀՄ ունեցած՝ աշխատավորական ավելի ու ավելի լայն զանգվածների որըստորե ամրացող ակտիվ համակրանքի մեջ՝ բանվոր մասսաների ձախացման տարերային պրոցեսները սկզբունքորեն դասակարգային բարձրության են հասնում։ Չնայած ամեն տեսակի կեղծավոր խաղերի՝ այդ իսկ խնդրում սոցիալ-դեմոկրատիայի բուն եյությունն և յերևան գալիս, այն սոցիալ-դեմոկրատիայի, վոր իրականում ոգնում է իմպերիալիստներին ԽՍՀՄ դեմ պատերազմ կազմակերպելուն։

ԽՍՀՄ պաշտպանելու լոզունգի հետ սերտ կապ ունի գաղութային հեղափոխությունները պաշտպանելու լոզունգը, առաջին հերթին չինական հեղափոխության լոզունգը։ Չնայած չինական հեղափոխության ժամանակավոր պարտության, մասնավորապես խորհուրդների համար Կանտոնում տեղի ունեցող ապըստամբությունների ճնշման, չինական հեղափոխությունը շարունակում է ապրել, ամբողջ ճակատի վրա ծավալված նոր հարձակման անցնելու համար ուժեր կուտակելով։ Չինաստանի հեղափոխության շարժման նոր վերելքը տեղի կունենա նոր հիմունքներով։ Չինական ազգային բուրժուազիան բոլորովին սպառել

է իր հեղափոխական հնարավորությունները ու կատարելապես անցել միջազգային իմպերիալիզմի սպասարկությանը։ Գոմինդանը դեներալների, հակահեղափոխականների ու դահիճների քլիքների ուղղակի գործիք է դարձել։ Ներկայումս չինական հեղափոխությունը խորհուրդների ու բանվոր դասակարգի հեգեմոնիայի դրոշի տակ կարող է և պետք է ծավալվի բացառապես իբրև բանվորների, գյուղացիների ու քաղաքի չքավորների հեղափոխություն։

Կոմմունիստական կուսակցությունը, վոր ոպպորտյունիստական սխալներ էր կատարել, կարողացավ վերականգնել իր ղեկավարությունն ու վերակազմել իր շարքերը, վորպեսզի բանվորների ու գյուղացիական խորհրդների դրոշի ներքո հաղթական կերպով կարողանա կռվել չինական հեղափոխության գործի համար։

Կոմմունիստական պրոլետարիատի առջև ծառացած խնդիրների բացառիկ բարդությունը պահանջում է Կոմինտերնի շարքերի գաղափարական բացարձակ միասնականություն ու կազմակերպված յերկաթե միաձուլություն։ Համագումարն արձանագրում է, վոր Տրոցկիստական ոպպոզիցիայի դեմ մղվող պայքարում Կոմինտերնի սեկցիաներն ու Գործկոմը Համ. Կ. Կ. (Բ)-ին համերաշխ ու միաբան պաշտպանություն են ցույց տվել, այն ոպպոզիցիայի դեմ մղվող պայքարում, վորի վարքագիծը Կոմմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմը դրոշմեց իբրև դավաճանություն կոմմունիզմին։ Տրոցկիստական այն ոպպոզիցիան, վոր իր կապերը կատարելապես խզել է լենինիզմի հետ ու մենշևիկական լիկվիդատորական պլատֆորմի վրա յե կանգ-

նած, իր բանբասանքներով ոգնել և ոգնում է ԽՍՀՄ-ի ամենակատաղի թշնամիներին՝ սկսած Կորշից ու Ռուտ Ֆիշերից մինչև Սուվարինն ու Լիբեբսը, իր դրոշի տակ հավաքելով ամենավատթար ռենեգատներին ու պառակտիչներին, պառակտողական անլուր գազիր աշխատանքներ է կատարել—ահա այդ ոպպոզիցիան Կոմինտերնի շարքերում այլևս հանդուրժելի լինել չի կարող։ Խնդիրն այն է, որ Կոմինտերնը արմատապես մաքրենք բոլոր այն հակակոմունիստական տարրերից, որոնք Տրոցկիստական ոպպոզիցիայի շուրջն են խմբվում։

Չնայած մի շարք կոմկուսակցություններում դուցություն ունեցող ոպորտյունիստական առանձին սխալներին, այն սխալներին, որ սիստեմատիկորեն ուղղվել են Կոմինտերնի գործկոմի ղեկավարությամբ, անցյալ յերկու տարվա ընթացքում Կոմինտերնի սեկցիաների բալշևիկացումն իր հետագա զգալի հաջողություններն է ունեցել։ Համագումարը լիահույս է, որ Կոմինտերնի ղեկավարությունը կապահովի իր շարքերի հետագա բալշևիկացումը, վերջիններիս հետագա դաստիարակումը՝ լենինիզմի իսկական ոգով։ Այս տեսակետից, համագումարն առանձնապես կարևոր է գտնում մեկ կողմից՝ պարլամենտական պատրանքների ու տրադիցիաների հաղթահարումը, վճռական պայքար ոպորտյունիստական թեքումների դեմ, ընդհանրապես, մյուս կողմից ել մասսայական ու արհմիությունական աշխատանքների ըստ ամենայնի ուժեղացում և ծավալում։

Կոմինտերնի կարևոր սեկցիաներն ու Կոմունիստական Ինտերնացիոնալն ամբողջապես վերցրած բավական ամրապնդվել են թե գաղափարականապես, թե կազմակերպչորեն, որպեսզի քաղաքականապես գլխավորեն բանվորական շարժման նոր վերելքը ու վերջինիս հեղափոխական ուղղություն տան։

Համագումարը կուսակցության կենտրոնական կոմիտեին պարտավորեցնում է՝ ըստ ամենայնի կոմիտեին պարտավորեցնում է՝ ըստ ամենայնի աջակցել Կոմինտերնի հետագա ամրապնդմանը, վերջինիս հեղինակության ամրապնդմանը պրոլետարական մասսաների շրջանում, Կոմինտերնի աշխատանքի, ընդհանրապես, ու կազմակերպչական ապպարատի ամրապնդմանը, մասնավորապես։

ՀԱՄ· ԿԿ (Բ) XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

(ԸՆԴՈՒՆՎԱԾ Է ՄԻԱՁԱՅՆ)

XV՝ Համագումարը լսելով այն հանձնաժողովի զեկուցումը, որ մանրամասն քննել է ոպպոզիցիային վերաբերող բոլոր նյութերը, արձանագրում է հետևյալը։

1. Իդեոլոգիայի ասպարիզում ոպպոզիցիոն տակտիկական բնույթ կրող տարաձայնություններից **Ծրագրային** բնույթի տարաձայնությունների չէ անցել, վերաքննության չենթարկելով Լենինի տեսակետները, ու դեպի մենշևիզմի դիրքերը գլորվելով։ ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հաղթական հնարավորության ժխտումը և, հետևապես, մեր հեղափոխության սոցիալիստական բնույթի ժխտումը, պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթի ժխտումը, սոցիալիստական շինարարության բազայի վրա դրված՝ գյուղացիության հիմնական մասսաների ու պրոլետարիատի դաշինքի քաղաքականության և պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, գյուղի զարգացման սոցիալիստական ուղիների ժխտումը, վերջապես, ԽՍՀՄ-ում փաստորեն գոյություն ունեցող պրոլետարական դիկտատուրայի («տերմիդոր») ժխտումն ու վերջինիս հետ կապ ունեցող անձնատվությունն ու պարտվողականությունը,— ահա գաղափարական վոլջ այս

իրագրումը տրոցկիստական ոպպոզիցիան դարձրել են մանր-բուրժուական դեմոկրատիայի զենք ԽՍՀՄ-ի ներսում ու միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ոժանդակ ջոկատ՝ ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս։

2. **Տակտիկայի** բնագավառում ոպպոզիցիան ուժեղացնելով ու սրելով կուսակցության դեմ իր աշխատանքները, վոչ միայն կուսակցության կանոնադրության սահմանից է դուրս չեկել, այլ և անցել է խորհրդային լեգալության սահմանը (անլեգալ ժողովներ, անլեգալ տպարաններ, մամուլի անլեգալ որգաններ, շենքերի բռնի գրավում և այլն)։ Հակախորհրդային այս քաղաքականությունը պսակվեց այն բանով, վոր ոպպոզիցիան բացարձակ պայքարի անցավ ընդդեմ պրոլետարիատի դիկտատուրայի ռեժիմի և կուսակցության ու խորհրդային իշխանության դեմ 1927 թ. նոյեմբերի 7-ին՝ փողոցային ցույցեր կազմակերպելուն։ Ոպպոզիցիայի հակախորհրդային այն տակտիկան, վոր գործադրվում է նաև արտասահմանում ու կապված է ԽՍՀՄ դեմ մղվող գրպարտական ամբաստանության պրոպագանդի հետ, ոպպոզիցիային փաստորեն դրել է պրոլետարիատի դիկտատուրայի յերկրի բացահայտ թշնամիների շարքը։

3. **Կազմակերպչական** խնդիրների ասպարեզում, ոպպոզիցիան լենինյան տեսակետների վերաքննության վրա հենվելով, ֆրակցիոնականությունից իր սեփական տրոցկիստական կուսակցությունն ստեղծելու գործին է անցել։ Հանձնաժողովը միանգամայն բացահայտ կերպով յերևան է բերել ոպպոզիցիայի կենտրոնական կոմիտեի, մարզային, նահանգական, քաղաքային ու շրջանային կենտրոնների տեխնիկական ապպարատն, ան-

դամավճարների, ոպպոզիր որդանների և այլն, և այլն առկայությունը։ Տրոցկիստական կուսակցությունն արտասահմանում կապ է հաստատել վոչ միայն հակալենինյան ըմբռնումներ ունեցող ֆրակցիոն խմբակների հետ, այն ըմբռնումների, վոր գոյություն ունեն Կոմինտերնի կուսակցությունների ներսում, այլ և այնպիսի կազմակերպությունների, խմբակների և առանձին անձանց հետ, վորոնք Կոմունիստական Ինտերնացիոնալին յերբեք պատկանելիս չեն յեղել, ինչպես և կապ են հաստատել Կոմինտերնից դուրս արած կոմունիստական շարժման թշնամիների ու դավաճանների հետ (Մասլով, Ռուտ Ֆիշեր, Կորշ, Սուվարին, Ռոլանդ Գոլստ, Լիբերս և այլն, և այլն)։ Ոպպոզիցիայի **կազմակերպչական** նման տակտիկայի հետևանքն այն յեղավ, վոր ԽՍՀՄ ներսում ոպպոզիցիան կապ հաստատեց բուրժուական անկուսակցական ինտելիգենտների հետ (Շչերբակով և ընկերություն), վորոնք իրենց հերթին կապ ունեն բացարձակ հակահեղափոխականների հետ, իսկ ԽՍՀՄ սահմաններից դուրս, բոլոր յերկիրների բուրժուազիայի կողմից լայն պաշտպանություն գտավ։ Ցելակետ ունենալով այն ամենը, ինչ վոր վերը հիշվեց, XV համագումարը գտնում է, վոր 1927 թվի նոյեմբերի 14-ին Տրոցկուն ու Զինովևին՝ Համկկ (բ) շարքերից և ոպպոզիցիոն մյուս անդամներին՝ ԿԿ և ԿՎՀ կազմից հեռացնելով և ոպպոզիցիայի հարցն ամբողջությամբ համագումարի քննությանը դնելով, ԿԿ ու ԿՎՀ արդարացի են վարվել։

Կենտրոնական Կոմիտեյի հաշվետվության վերաբերյալ հանած իր բանաձևում համագումարը հայտարարում է, վոր տրոցկիստական ոպպոզիցիային պատ-

կանելը և այդ ոպպոզիցիայի տեսակետները քարոզելը ՀԱՄԿԿ (բ)-ին պատկանելուն անհամատեղելի յեն։ Այս պատճառով համագումարը գտնում է, վոր ոպպոզիցիան թե գաղափարականապես և թե կազմակերպչականորեն պետք է զինաթափ լինի, վճռականորեն դատապարտելով ոպպոզիցիայի վերը հիշատակված տեսակետները՝ իբրև հակալենինյան, իբրև մենշևիկական տեսակետներ և իր վրա վերցնելով կուսակցության, նրա համագումարների, կոնֆերենցիաների և կենտրոնական Կոմիտեյի տեսակետները պաշտպանելու պարտավորությունը։

Սակայն ոպպոզիցիան մերժեց կուսակցության այս պահանջը։ Ոպպոզիցիայի 1927 թ. դեկտեմբերի 3-ի այն փաստաթղթով, վոր իր 121 ակտիվ գործիչներն են ստորագրել, ոպպոզիցիան վոչ միայն չի հրաժարվում, այլ պնդում է իր մենշևիկական տեսակետների պրոպագանդայի վրա։

Կենտրոնական Կոմիտեյի հաշվետվության վերաբերմամբ համագումարի կողմից ընդունված բանաձևից հետո հանձնաժողով ստացվեց 1927 թ. դեկտեմբերի 10-ին գրված՝ ոպպոզիցիայի 2 փաստաթուղթ, վորոնցից մեկը (Ռակովսկու, Մուրալովի ու Ռադեկի ստորագրությամբ) պնդում է վոչ միայն մենշևիկական այդ տեսակետները պահպանելու անհրաժեշտությունը, այլև այդ տեսակետները քարոզելու անհրաժեշտությունը, իսկ մյուս փաստաթուղթը (Կամենևի, Բակաևի, Ցեվզոկիմովի և Ավդեևի ստորագրությամբ), պընդում է ոպպոզիցիայի մենշևիկական տեսակետների պահպանումը՝ այդ տեսակետների քարոզից հրաժարվելով, մի հանգամանք, վոր հակասում է գաղափարա-

պես զինաթափվելուն ու նշանակում է՝ կուսակցության վորոշումները պաշտպանելուց հրաժարվել։

Արձանագրելով ոպպոզիցիոն յերկու խմբակների միջև գոյություն ունեցող բացահայտ տարաձայնությունը, համագումարը, միաժամանակ, ոպպոզիցիայի յերկու հայտարարությունն ել գտնում է միանգամայն անբավարար։

Յելակետ ունենալով վերոհիշյալն ու նկատի առնելով ոպպոզիցիայի կողմից ֆրակցիոնականությունից հրաժարվելու իր հանդիսավոր խոստումների յերկիցս խախտումը, համագումարը վորոշում է.

1. Կուսակցությունից հեռացնել տրոցկիստական ոպպոզիցիայի հետևյալ ակտիվ գործիչներին.

1) Ավդեյեվ Իվ., 2) Ալեկսանդրով Ա., 3) Առասեմ, 4) Բակայեվ Իվ., 5) Բատաշյեվ, 6) Բարանով Ս., 7) Բոգուսլավսկի Մ., 8) Բուդլինսկայա, 9) Վահանյան, 10) Վարդին, 11) Վրաչյով Ի., 12) Գերասիկ Ա., 13) Գեսեն Ս., 14) Գորդոն Ն., 15) Գուբալսկի Ա., 16) Դիմիտրյեվ Տ., 17) Դրոբնիս, 18) Յեվդոկիմով Գ., 19) Զալուցկի Պ., 20) Զորին Ս., 21) Իլյին, 22) Քավթարաձե Ս., 23) Կագալին, 24) Կամենև Լ., 25) Կասպարովա Վ., 26) Կասպերսկի, 27) Կատալինով Ի. Ն., 28) Կովալեվսկի, 29) Կոմանդիր, 30) Կոյնկով Ա., 31) Կոստրիցկի, 32) Կրասովսկի Ն., 33) Կուկլին Ա. Ս., 34) Լաշեվիչ Մ., 35) Լեվին Վ., 36) Լելոզոլ Պ., 37) Լիզդին, 38) Լիլինա Զ. Ի., 39) Լոբանով Գ., 40) Լուբին, Գ. 41) Մենիչև Ա., 42) Մուրալով Ն., 43) Նատանսոն Մ. Յա., 44) Նիկոլայեվ Ն., 45) Պաուլսոն Ի., 46) Պետերսոն Ա., 47) Պիտաշկո, 48) Պոնոմարև Վ., 49) Պետակով Յու., 50) Ռավիչ Ռ., 51) Ռադեկ Կ.,

52) Ռակովսկի Խր., 53) Ռաֆայել Ռ., 54) Ռեյնհոլդ Ի., 55) Ռոցկան, 56) Ռումյանցեվ Վ., 57) Սաֆարով Գ., 58) Սենկով Զ., 59) Սմիլգա Ի., 60) Սմիրնով Ի. Ն., 61) Սոկոլով, 62) Սոլովյով Կ., 63) Սոսնովսկի Լ., 64) Տարասով Ի. Ի., 65) Տարտակովսկի Ֆ., 66) Տարխանով Ռ., 67) Տուժեկով, 68) Ուկոնեն, 69) Ֆեոդորով Գր., 70) Ֆիլիպով Ի., 71) Ֆորդին Ի., 72) Խարիտոնով Ն., 73) Զերնով, 74) Շեպշելև Մ., 75) Եշբա Յե.։

Վտարել կուսակցությունից Սապրոնովի խմբակը, վորպես բացահայտորեն հակահեղափոխական խմբակ. 1) Բոյլշակով Ա., 2) Վարդուզով Վ. Ֆ, 3) Դունե Ե., 4) Յեմելյանով (Կալին) Վ., 5) Զավարյան Ն., 6) Կիրիլով Դ. Ի., 7) Մեկինի Պ. Պ., 8) Մինո Մ. Ն., 9) Մինկով Մ. Ի., 10) Որորին Վ. Պ., 11) Պեյնկո Մ. Ս., 12) Պիլիպենկո Ֆ. Ի., 13) Պրոնյայեվ Մ. Վ., 14) Պուտիլին Դ. Գ., 15) Սլիդովկեր Ա. Լ., 16) Սմիրնով Վ. Մ., 17) Սմիրնով Մ., 18) Սարոգուսով Պ. Լ., 19) Տիխոսանով Պ. Ս., 23) Շրեյբեր Ս.։

3) Հանձնարարել կենտրոնական Կոմիտեին ու կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովին՝ տրոցկիստական ոպպոզիցիայի շարքային անդամներին համոզելու նպատակով ամեն տեսակի միջոցներ ձեռք առնել՝ նրանց վրա գաղափարականապես ներգործելու համար, միաժամանակ մաքրելով կուսակցությունը տրոցկիստական ոպպոզիցիայի բացահայտորեն անուղղելի տարրերից։

ՀԱՄ ԿԿ (Բ) XV՝ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Ի փոփոխումն կանոնադրության, Համամիութենական կուսակցական համագումարները հրավիրել առնվազն յերկու տարին մի անգամ։

2. Կենտրոնական Վերահսկիչ հանձնաժողովի պլենումները հրավիրվում են 3 ամիսը մեկ անգամ՝ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում։ ԿՎՀ որգանների ընթացիկ բոլոր աշխատանքները ղեկավարելու համար կազմակերպվում է 21 անդամից և 9 թեկնածուից բաղկացած մի նախագահություն, ինչպես և կազմակերպվում է ԿՎՀ կուսկոլլեգիա՝ ՀԱՄԿԿ (Բ)-ի կուսետիկան, կանոնադրությունն ու ծրագիրը խախտելու գործի քննության համար։

3. ԿՎՀ նախագահությունը Քաղբյուրո յե ուղարկում, իբրև պատվիրակ, վոչ թե յերեք անդամ ու յերեք թեկնածու, այլ չորս անդամ ու չորս թեկնածու։

4. Կուսակցության այն անդամները, վորոնք կհրաժարվեն Վերահսկիչ հանձնաժողովի հարցերին ճիշտ պատասխան տալուց, անհապաղ կհեռացվեն կուսակցությունից։

5. Համամիութենական դիսկուսիան այն դեպքում միայն կարող է ճիշտ համարվել. ա) յեթե նա-

հանգական ու մարզային մասշտաբով տեղական մի քանի կուսկազմակերպություններ անհրաժեշտ գտնեն այդ. բ) յեթե ԿԿ ներսում կուսակցական քաղաքականության կարևորագույն խնդիրների վերաբերմամբ բավականաչափ կայուն մեծամասնություն չկա. գ) յեթե չնայած ԿԿ-ում առկայող կայուն մեծամասնության, վորը վորոշ տեսակետի վրա յե կանգնած, այնուամենայնիվ ԿԿ անհրաժեշտ է գտնում՝ կուսակցության մեջ դիսկուսիոն կարգով քննության առնելու միջոցով ստուգել իր քաղաքականության ճշտությունը։ Ընդ որում, նման բոլոր դեպքերում Համամիութենական դիսկուսիան կարող է սկսվել ու անցկացվել ԿԿ պատշաճ թույլտվությունից հետո միայն։

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Եջ

ԲԱՆԱՁԵՎ Համկկ(բ)կկ-ի հաշվետվության առթիվ 3

» ԿՎՀ—ԲԳՏ աշխատանքի մասին . . 21

» Դյուղում կատարվելիք աշխատանքի մասին 34

Ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը կազմելու դիրեկտիվները 75

Բանաձև Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի Համկկ(բ) պատգամավորության հաշվետվության առթիվ 118

Համկկ(բ) XV համագումարի բանաձևը ոպպոզիցիայի մասին 126

Համկկ(բ) XV համագումարի վորոշումները կազմակերպչական առանձին խնդիրների նկատմամբ 132

ՀՀ Ազգային գրադարան
NL0179738